



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՎԻՄԱԴՐԱՄ

**Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությամբ ամրագրված
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ
վերանայում և կատարելագործում**

Հետազոտություն



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությամբ ամրագրված մարդու
իրավունքների և ազատությունների
երաշխիքների վերանայում և
կատարելագործում

Հետազոտություն



Հետազոտությունը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակում, որն իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը «Հելսինկյան ստոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Հետազոտության բովանդակությունը և արտահայտված տեսակետները մի-միայն «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ինն են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Հելսինկյան ստոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների տեսակետներին:

Հետազոտական կազմ՝

Նվարդ Փիլիպոսյան
Նարինե Ալեքսանյան
Անահիտ Սիմոնյան

Խմբագրակազմ՝

Նվարդ Փիլիպոսյան
Անահիտ Սիմոնյան
Նարինե Ալեքսանյան

Լեզվական խմբագրումը՝

Ազնիվ Նապյանի

Համակարգչային ձևավորումը՝

Մանե Արշալույսյանի

Հասպավումներ.....	6
Խմբագրակազմի կողմից	7
Հետազոտության նպատակն ու մեթոդաբանությունը.....	9
Հետազոտական առաջարկների ձևակերպման փաստարկային հենքը	9
Հետազոտության շրջանակը	12
Հետազոտության աղբյուրները.....	12
Գլուխ 1. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում	14
Բաժին 1.1 ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատումը վերացնելու անհրաժեշտությունը.....	16
I. ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատման վերաբերյալ 2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում տեղ գտած հիմնավորումների վիճահարույց բնույթը.....	18
II. ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատմամբ պայմանավորված սահմանադրական լուծումների խնդրահարույց բնույթը.....	22
III. ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված իրավունքների վերաբերյալ նորմատիվ ակտերի սահմանադրականության վիճարկման հնարավորության բացառումը.....	23
Առաջարկ (Գլուխ 1, Բաժին 1.1)	25
Բաժին 1.2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում.....	25
I. Առողջության իրավունք.....	26
Առողջության իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները	26
Առողջության իրավունքի միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը	28
II. Աշխատանքային իրավունքներ	30
Աշխատանքային իրավունքների ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները	30
Աշխատանքային իրավունքների միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը.....	32
III. Սոցիալական ապահովության իրավունք	34
Սոցիալական ապահովության իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները	34
Սոցիալական ապահովության իրավունքի միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը.....	35
IV. Բավարար կենսամակարդակի իրավունք	36
Բավարար կենսամակարդակի իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները	36
Բավարար կենսամակարդակի իրավունքի միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը.....	37
V. Կրթության իրավունք	38
Կրթության իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները և սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը	38
VI. Մշակութային կյանքին մասնակցելու և գիտական նվաճումներից օգտվելու իրավունքներ	40

Մշակութային կյանքին մասնակցելու և գիտական նվաճումներից օգտվելու իրավունքների ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները.....	40
Մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու իրավունքների միջազգային իրավական ամրագրումներն ու սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը	41
Առաջարկներ (Գլուխ 1, Բաժին 1.2)	42
Հավելված 1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատական փորձը սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ.....	43
Գլուխ 2. Ծրջակա միջավայրի իրավունքների սահմանադրական երաշխիքների վերանայում	47
Բաժին 2.1. Ծրջակա միջավայրի իրավունքների սահմանադրաիրավական կարգավորման ժամանակակից միտումները և միջազգային իրավական նորմերը.....	48
Բաժին 2.2. ՀՀ ներպետական համատեքստը և շրջակա միջավայրի իրավունքների սահմանադրական երաշխիքների վերանայման անհրաժեշտությունը.....	50
Առաջարկներ (Գլուխ 2)	52
Գլուխ 3. Երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում ...	53
Բաժին 3.1. Երեխայի իրավունքների սահմանադրականացումը որպես միջազգային պարտավորությունների կատարման երաշխիք	54
Բաժին 3.2. Երեխայի իրավունքների երաշխիքների և պաշտպանության սահմանադրականացման վերաբերյալ միջազգային մոտեցումները	55
Բաժին 3.3. ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված երեխայի իրավունքների շրջանակի գնահատումը միջազգային չափանիշների տեսանկյունից.....	56
Վերանայում N 1. Առկա է «երեխայի լավագույն շահ» եզրույթի մասով եզրույթաբանական անհամապատասխանություն ԵԻԿ-ի դրույթներին:.....	56
Վերանայում N 2. Լսված լինելու իրավունքն իր ամբողջ ծավալով ամրագրում չի ստացել սահմանադրական մակարդակում:.....	59
Վերանայում N 3. Երեխայի տնտեսական շահագործման և երեխայի համար վտանգավոր, նրա կրթությունը խոչընդոտող կամ նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը վնասող աշխատանքի արգելքը:.....	61
Առաջարկներ (Գլուխ 3)	64
Գլուխ 4. Հավասարության ապահովման և խտրականության արգելքի սահմանադրական ամրագրումների վերանայում.....	66
Բաժին 4.1. Փաստացի հավասարության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքի ամրագրում.....	67
Բաժին 4.2. Առանձին իրավունքների իրացման շրջանակում խտրականության բացառման և ներառականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների ներդրում	70
I. Կրթության ներառականության սկզբունքի երաշխիքի ամրագրում.....	70
II. Կրոնական կազմակերպությունների հետևորդների հավասարության իրավունքի ապահովում	71
III. Հաշմանդամության իրավունքահենք մոտեցման ամրագրում պետության քաղաքականության նպատակները սահմանող սահմանադրական ուղենիշների շրջանակում	73
IV. Անգործունակության ինստիտուտի սահմանադրական հիմքերի վերացում	74
V. Սահմանադրության տեքստում օգտագործվող խտրական եզրույթների բացառում	76
Առաջարկներ (Գլուխ 4)	76

Գլուխ 5. Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանադրական հիմքերի վերանայում	78
Բաժին 5.1. «Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» կոնցեպտի սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը	79
Բաժին 5.2. Մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակման հիմքերի վերանայման անհրաժեշտությունը	82
Բաժին 5.3. Սեփականության իրավունքի սահմանափակման հիմքերի վերանայման անհրաժեշտությունը	83
Առաջարկներ (Գլուխ 5)	84
Գլուխ 6. Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանադրական սահմանափակման վերանայում	85
Բաժին 6.1. Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ գործող սահմանադրական նորմի վերլուծությունը	85
Բաժին 6.2. Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ օտարերկրյա սահմանադրական փորձը և միջազգային չափանիշները	86
Բաժին 6.3. Գործող սահմանադրական նորմերի վերանայման անհրաժեշտությունը	89
Առաջարկ (Գլուխ 6)	89
Գլուխ 7. Համայնքների լաված լինելու իրավունքի՝ որպես անմիջական ժողովրդավարության կառուցակարգի սահմանադրական ամրագրման վերանայում	90
Բաժին 7.1. Վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լաված լինելու իրավունքի իրացման միջազգային և սահմանադրական երաշխիքները	91
Բաժին 7.2. Վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լաված լինելու վերաբերյալ միջազգային չափանիշները	92
Բաժին 7.3. Վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լաված լինելու իրավունքի ամրագրող սահմանադրական նորմերի մեկնաբանությունը և դրա օրենսդրական իրացման խնդիրները	94
Առաջարկ (Գլուխ 7)	96
Գլուխ 8. Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրական բովանդակության վերանայում	97
Առաջարկ (Գլուխ 8)	99
Գլուխ 9. Ազատ արտահայտվելու իրավունքի սահմանադրական ամրագրման վերանայում	100
Առաջարկ (Գլուխ 9)	101
Գլուխ 10. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթները մեկնաբանող սուբյեկտների հստակեցում	102
Առաջարկ (Գլուխ 10)	103
Եզրահանգում	104
Հետազոտության աղբյուրների ցանկ	105

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԵԻԿ	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
ԵԽ	Եվրոպայի խորհրուրդ
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
ՀԱՍԵ	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈՒՎԻԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիա
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԿ	«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԿ	Մարդու իրավունքների կոմիտե
ՄԻՀՀ	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
ՄԻՀԿ	Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն
ՄԴ	Սահմանադրական դատարան
ՄԴՈ	Սահմանադրական դատարանի որոշում
ՎԵՍԽ	Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա
ՏՄՄԻԴ	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՏՄՄԻԿ	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտե
ՏԻԵԽ	Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
ՔՔԻԿ	Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր



Խմբագրակազմի կողմից

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թ. համաժողովրդական հանրաքվեով: Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն (հոդված 1):

ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներն ամրագրող այս դրույթն անփոփոխ է և արժեքանական-գաղափարական այն հիմքն է, որի վրա պետք է կառուցվեն անհատ-պետություն փոխհարաբերությունները:

ՀՀ Սահմանադրությունը մինչ այժմ փոփոխվել է 2 անգամ՝ 2005¹ և 2015 թթ.²:

2005 թ. Սահմանադրության 2-րդ գլխում կատարվեցին բովանդակային և կառուցվածքային զգալի փոփոխություններ, որոնք ընդհանուր առմամբ անհրաժեշտ հիմք ձևավորեցին մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Մասնավորապես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի առաջին մասում ամրագրվեց, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն

արժեքներ են՝ ըստ այդմ ձևավորելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական պաշտպանության սկզբունքորեն նոր արժեքանական հիմք: 2005 թ. սահմանադրական փոփոխություններով վերացվեց մահապատիժը, և մարդու իրավունքների ու ազատությունների սահմանադրական ամրագրումներն ու երաշխիքներն ավելի ընդգրկուն ձևակերպումներ ստացան³:

Սահմանադրական հաշորդ՝ 2015 թ. փոփոխությունները մարդու իրավունքների ու ազատությունների մասով թե՛ դրական և թե՛ բացասական զարգացումների հանգեցրին: Փոփոխությունները մասամբ միտված էին սահմանադրական երաշխիքների բարելավմանը և նոր հիմնական իրավունքների⁴ սահմանադրական ամրագրմանը: Միաժամանակ, իրականացված փոփոխություններով նախկինում ամրագրված մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների մի մասը վատթարացվեց, իսկ որոշ երաշխիքներ առհասարակ վերացվեցին:

2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում մարդու իրավունքների վերաբերյալ դրույթների փոփոխությունները հիմնված էին «դասական հիմնական իրավունքների», «սոցիալական հիմնական իրավունքների» և «պետության քաղաքականության նպատակների» սահմանազատման վրա⁵:

1. *Տե՛ս* ՀՀ Սահմանադրությունը 2005 թ. փոփոխություններով, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>:
2. *Տե՛ս* ՀՀ Սահմանադրությունը 2015 թ. փոփոխություններով, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>:
3. Մասնավորապես ամրագրում ստացան այնպիսի նոր իրավունքներ, ինչպիսիք են յուրաքանչյուրի՝ իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը, հանրային ծառայության ընդունվելու իրավունքը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը և այլն:
4. Մասնավորապես ամրագրում ստացան այնպիսի նոր իրավունքներ, ինչպիսիք են երեխայի իրավունքները, այլընտրանքային ծառայության իրավունքը, պատշաճ վարչարարության իրավունքը, քաղաքական ապաստանի իրավունքը, արտաքսման արգելիքը և այլն:
5. *Տե՛ս* Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2015 թ., էջ 20, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

Հիմք ընդունելով տվյալ սահմանազատումը՝ Սահմանադրության 2-րդ՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ գլխում այլևս չամրագրվեցին մի շարք իրավունքներ, և ստեղծվեց նոր՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» վերտառությամբ 3-րդ գլուխը: Տվյալ գլխում տեղ գտած իրավունքների սահմանադրական երաշխիքները նվազեցվեցին. դրանք դադարեցին սուբյեկտիվ իրավունքներ համարվելուց ու վերածվեցին միայն օրենսդիրի և գործադիրի հայեցողությամբ իրականացվող օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության նպատակների: Բացի այդ՝ մի շարք իրավունքներ առհասարակ դուրս մնացին սահմանադրական ամրագրումների շրջանակից⁶: 2015 թ. սահմանադրական փոփոխություններով ՀՀ քաղաքացին զրկվեց սոցիալ-տնտեսական և մշակութային իր որոշ իրավունքների սահմանադրական ճանաչումից և դրանց պաշտպանության սահմանադրաիրավական հիմքերից, ինչը էական հետընթաց էր:

«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (ՄԻՀԿ) փորձագիտական թիմը խնդրահարույց և անընդունելի է համարում սահմանադրական փոփոխությունների իրականացման հետևանքով քաղաքացու իրավունքների սահմանափակումը և գործող Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատման վերացումը դիտարկում է իբրև առաջնային խնդիր, որը պետք է տեղ գտնի սահմանադրական հաջորդ փոփոխությունների հայեցակարգում:

2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող մի շարք ամրագրումներ ունեն վերանայման կարիք միջազգային իրավական չափանիշների, իրավունքի զարգացման առաջադեմ միտումների և ՀՀ միջազգային իրավական պարտավորությունների տեսանկյունից: Այդպիսի անհրաժեշտություն առկա է երեխայի իրավունքների, հավասարության ապահովման, մարդու իրավունքների սահմանափակման հիմքերի և մի շարք այլ երաշխիքների մասով:

«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, ըստ այդմ, նախաձեռնել է գործող Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների թիրախային ուսումնասիրություն, որի նպատակն է վերանայել հետազոտության արդյունքում ընտրված մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական նորմերը և գործող երաշխիքները, ներկայացնել դրանց կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ժամանակագրական առումով հետազոտության նախաձեռնումը արձագանքում է սահմանադրական բարեփոխումների գործընթացին⁷: Տվյալ գործընթացի շրջանակում և հետազոտությանը զուգընթաց, նպատակ ունենալով հանրության և պետության ուշադրության առանցք բերել մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության խնդիրները, ՄԻՀԿ-ն իրականացրել է հանրային քննարկումներ և իրագեկման միջոցառումներ, ներկայացրել է ընթացիկ վերլուծություններն ու առաջարկները շահագրգիռ բոլոր կողմերին, այդ թվում՝ ՀՀ արդարադատությամբ:

6. Մասնավորապես ամրագրում չստացան այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են բավարար կենսամակարդակի, ներառյալ բնակարանի կամ կենսապայմանների բարելավման իրավունքը, գիտության նվաճումներից օգտվելու իրավունքը, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:

7. Տվյալ գործընթացի համար իրավական հիմք է Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարական ծրագիրը (ՀՀ Կառավարության N 1441-Լ որոշում, 2019 թ.):

յան նախարարությանը, Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին:

ՄԻՀԿ-ի դիրքորոշումն այն է, որ սահմանադրական հաջորդ բարեփոխումը պետք է իրականացվի առավել հաշվետու, թափանցիկ և մասնակցային գործընթացի միջոցով և պետք է միտված լինի այնպիսի Սահմանադրության ընդունմանը, որը կդառնա ՀՀ քաղաքացու և անհատի իրավունքների ու ազատությունների պաշտպանության իրական և արդյունավետ գործիք:

Սահմանադրությամբ մարդու իրավունքների առավել բարձր երաշխիքների ամրագրումը

պետության զարգացման, ժողովրդավարական կառուցակարգերի և իրավունքի գերակայության սկզբունքի գործնականացման առանցքային նախապայմանն է: Սա է նաև այն հենակետը, որի վրա պետք է կառուցվի սահմանադրական բարեփոխումների յուրաքանչյուր գործընթաց:

Մենք լիահույս ենք, որ տվյալ հետազոտությունը ազդեցություն կունենա հետագա սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի ձևավորման վրա, օգտակար կլինի Հանձնաժողովի, մասնագիտական հանրության, իրավապաշտպան կազմակերպությունների և մարդու իրավունքների խնդիրներով հետաքրքրված լայն շրջանակի համար և կնպաստի ՀՀ-ում մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական դոկտրինի զարգացմանը:



Հետազոտության նպատակն ու մեթոդաբանությունը

Հետազոտության *նպատակն է* համեմատական վերլուծությամբ ներկայացնել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների բարձրացման և կատարելագործման հնարավորությունները՝ հիմք ընդունելով միջազգային իրավական չափանիշները, իրավունքի զարգացման առաջադեմ միտումները և ՀՀ միջազգային իրավական պարտավորությունները:

Առաջադրված նպատակի շրջանակում փորձ է արվել պատասխանելու հետևյալ հետազոտական *հարցին*՝ որո՞նք են այն փո-

փոխությունները և վերանայումները, որ կնպաստեն ՀՀ գործող Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների բարելավմանը:

Հետազոտության հիմնական *մեթոդն է* համեմատական իրավական վերլուծությունը:

Հետազոտական առաջարկների ձևակերպման փաստարկային հենքը

Հետազոտության իրականացման և առաջարկների ձևավորման համար ուղենիշ են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային իրավական չափանիշները, իրավունքի զարգացման առաջադեմ միտումները և ՀՀ միջազգային իրավական պարտավորություններին համապատաս-

խանեցման հնարավորությունները:

Նշված ուղենիշները վերհանվել են՝ ուսումնասիրելով Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետև նաև՝ ՄԱԿ) և Եվրոպայի խորհրդի (այսուհետև նաև՝ ԵԽ) շրջանակներում ՀՀ-ի կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերն ու դրանց հիման վրա գործող մարմինների պրակտիկան, միջազգային իրավունքի և մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության զարգացման առավել առաջադեմ միտումները:

Վերջին տասնամյակներին ԵԽ անդամ պետությունների ազգային սահմանադրությունների փոփոխությունների գործընթացներն ուղեկցվել են նոր իրավունքների ամրագրմամբ, արդեն իսկ ամրագրված իրավունքների պաշտպանության երաշխիքների բարձրացմամբ և բովանդակության ընդլայնմամբ⁸:

Այն կարծիքին ենք, որ իրավունքի ժամանակակից զարգացման միտումներին համապատասխան Հայաստանում ևս սահմանադրական փոփոխությունների գործընթացի նախաձեռնումը պետք է զուգորդվի մարդու իրավունքների պաշտպանության ներպետական-սահմանադրական և միջազգային շրջանակների ու երաշխիքների ներդաշնակեցմամբ:

Միջազգային չափանիշներին համապատասխան մարդու իրավունքների և ազատությունների առավել բարձր երաշխիքներ և պաշտպանության մակարդակ նախատեսող սահմանադրական նորմեր ամրագրելու անհրաժեշտության հիմնավորումը տեսնում ենք հետևյալում.

1. ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված սահմանադրաիրավական նորմերն իրենց անմիջական գործողության շնորհիվ իրավական բարձր պաշտպանություն են նախատեսում քաղաքացիների համար, և դրանցում առավել բարձր՝ միջազգային չափանիշներին և իրավունքի զարգացման առաջադեմ միտումներին համապատասխանող մարդու իրավունքների երաշխիքների ամրագրումն ուղղակիորեն բարձրացնում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անմիջական պաշտպանվածության մակարդակը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր նախադեպային որոշմամբ⁹ արձանագրել է, որ հանրային իշխանության բոլոր մարմինները Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների շրջանակում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը, հատկապես եթե, Սահմանադրության 3-րդ հոդվածին համահունչ, խոսքը անմիջականորեն գործող իրավունքի, այն է՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին է, որոնցով սահմանափակված է ամբողջ հանրային իշխանությունը: Ավելին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է¹⁰, որ հիմնական իրավունքներն ու ազատությունները սահմանող Սահմանադրության նորմերը մասնավոր անձանց միջև հարաբերություններում անմիջականորեն իրացվելի են միայն Սահմանադրությամբ և վերջինիս

8. *St'u* Final draft report on constitutional amendment procedures, Study No. 469/ 2008, Venice Commission (անգլերեն), [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL\(2009\)168-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2009)168-e):

9. *St'u* Ռ. Քոչարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննությունը մերժելու մասին իր՝ 2019 թվականի հունվարի 25-ի ՍԴԱՌ-7 աշխատակարգային որոշումը:

10. *St'u* ՍԴՌ-1412:

հիման վրա ընդունված օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Հանրային իշխանության վերոհիշյալ սահմանադրական պարտականության բովանդակությունից անմիջականորեն բխում է, որ պետությունը պարտավոր է օրենսդրական կարգավորումներով պաշտպանել հիմնական իրավունքներն ու ազատությունները երրորդ անձանց անիրավաչափ միջամտությունից:

Ուստի սահմանադրական նորմերի, հատկապես Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների բնույթը ապահովում է ինչպես դրանց կիրարկումը հանրային իշխանության բոլոր մարմինների կողմից, այնպես էլ այդ իրավունքների պաշտպանության և իրացման նպատակով օրենսդրական կարգավորումների ընդունումը:

2. Մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների հնարավորինս ընդգրկումն ամրագրումը կապահովի օրենսդիրի հայեցողության սահմանափակումն առավել հստակ և քարձր երաշխիքներ ամրագրող իրավունքների բովանդակությամբ:

ՀՀ օրենսդիր մարմինը՝ որպես հանրային իշխանության մարմին, սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Մա նշանակում է, որ մարդու իրավունքները որոշիչ են օրենսդրական ակտերի բովանդակության համար: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների բովանդակությունը սահմանափակում է օրենսդիրի հայեցողությունը մարդու իրավունքների վերաբերյալ օրենքներ ընդունելիս, ուստի քաղաքացու իրավունքների պաշտպանվածության քարձրացումը մեծապես պայմանավորված է Սահմանադրությունում ամրագրված իրավունքների բովանդակությամբ: Այս մոտեցումը արտացոլվել և զարգացել է ՀՀ սահ-

մանադրական արդարադատական փորձում: ՀՀ Սահմանադրական դատարանը, քննելով օրենսդիր մարմնի կողմից ընդունված ակտի սահմանադրականությունը, նաև անդրադառնում է օրենսդիր մարմնի հայեցողության շրջանակներին՝ գնահատելով այն ինչպես սահմանադրաիրավական սկզբունքների, այնպես էլ հենց կոնկրետ իրավունքը կամ ազատությունն ամրագրող հոդվածի սահմանադրաիրավական պահանջների տեսանկյունից¹¹:

3. Մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների հնարավորինս ընդգրկումն ամրագրումը և դրանց լիարժեք համապատասխանեցումը ՀՀ միջազգային պարտավորություններին գործունե երաշխիք է առ այն, որ անհատը, վիճարկելով նորմատիվ իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը, դրանով իսկ հնարավորություն է ունենում անուղղակիորեն ստուգելու դրանց համապատասխանությունը միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Միաժամանակ, ՀՀ-ում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի և ներպետական օրենքների միջև հակասության առկայության կամ բացակայության վերաբերյալ որոշում (review of conventionality) կայացնող մարմին առկա չէ: Դա նշանակում է, որ առկա չէ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց այն դեպքում, երբ անհրաժեշտ է պարզել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի և ներպետական օրենքների միջև հնարավոր հակասությունը: Այդպիսի հակասության ստուգման իրավասություն կարող է ունենալ ՀՀ Սահմանադրական դատարանը, սակայն ներկայումս

11. Տե՛ս ՍԴՌ-920, ՍԴՌ-1291, ՍԴՌ-1447:

նման լիազորությամբ այն օժտված չէ: Սահմանադրական դատարանն իրավասու է քննել նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, այլ ոչ թե ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին: Հետևաբար ՀՀ միջազգային պարտավորությունների լիարժեք արտացոլումը կարող է լինել մարդու իրավունքների իրավական պաշտպանության անուղղակի միջոց՝ ՀՀ Սահմանադրական դատարանում դրանց վերաբերյալ ընդունված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը վիճարկելու տեսանկյունից:

Ուղղորդվելով վերոգրյալ փաստարկներով փորձագիտական թիմը իրականացված հետազոտության շրջանակում ներկայացնում է մի շարք առաջարկներ, որոնք վերաբերում են Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների կատարելագործմանը՝ գործող կարգավորումների փոփոխմամբ կամ Սահմանադրության տեքստում նոր երաշխիքների ներդրմամբ:

Հետազոտության շրջանակը

Հետազոտության շրջանակը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային չափանիշներն են և ՀՀ Սահմանադրության 2-րդ, 3-րդ գլուխներում և հարակից հոդվածներում ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերյալ նորմերն ու երաշխիքները:

Հետազոտությունը չի հավակնում ուսումնասիրելու մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրումների ամբողջ շրջանակը, ընտրանքը կատարվել է ըստ թեմաների՝ հատկապես կարևորելով 2015 թ. սահմանադրական փոփոխություններով վերանայված սահմանադրական ակտերի ամրագրումները: Մասնավորապես հետազոտության առարկա չեն դարձվել դատական պաշտպանության, արդար դատաքնության և քրեական արդարադատության ըն-

թացակարգային երաշխիքները:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների (**Գլուխ 1**), շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքի (**Գլուխ 2**), երեխաների իրավունքների (**Գլուխ 3**), հավասարության սպառնալուծման և խտրականության արգելքի (**Գլուխ 4**), մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների հիմքերի (**Գլուխ 5**), դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանափակման (**Գլուխ 6**), համայնքների լաված լինելու իրավունքի (**Գլուխ 7**), անձնական տվյալների պաշտպանության իրավունքի (**Գլուխ 8**), ազատ արտահայտվելու իրավունքի (**Գլուխ 9**) և հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների մեկնաբանման ուղենիշներին և դրանք մեկնաբանող սուբյեկտներին վերաբերող (**Գլուխ 10**) սահմանադրաիրավական ամրագրումները:

Այս առումով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների վերանայում և կատարելագործում» վերտառությամբ հետազոտությունը յուրաքանչյուր մասնագիտական իրավական վերլուծություն է, որտեղ խորքային ուսումնասիրության են ենթարկվել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները, և ներկայացվել են հետազոտական առաջարկներ դրանց բարձրացման և կատարելագործման ուղղությամբ:

Հետազոտության աղբյուրները

Սույն հետազոտության աղբյուրները ներառում են ՀՀ Սահմանադրությունը՝ 2005 թ. և 2015 թ. խմբագրությամբ, 2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգը, ներպետական օրենսդրությունը, Սահմանադրական դատարանի արդարադատական պրակտիկան, գործող Սահմանադրության և 2015 թ. սահմանադրական փոփոխություն-

ների հայեցակարգի հիմնական դրույթների իրացման ուղղությունների վերաբերյալ աշխատությունները¹², 2015 թ. սահմանադրական փոփոխությունների առաջին նախագծի կապակցությամբ մասնագիտական կարծիքներն ու վերլուծությունները¹³: Հետազոտության աղբյուրների շարքին են դասվում նաև ՀՀ-ի կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը և դրանց հիման վրա գործող մարմինների պրակտիկան, ՄԱԿ-ի և ԵԽ-ի մարմինների կողմից ընդունված հանձնարարականներն ու

բանաձևերը, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կարծիքները, զեկույցներն ու ուսումնասիրությունները, մարդու իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունները և ուսումնասիրությունները, այլ պետությունների առաջադեմ սահմանադրական փորձը և համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներ¹⁴:

.....
12. *Տե՛ս* Մասնագիտական կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ գլուխների վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիք ներկայացնող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի աշխատանքային խումբ, Երևան, 2015 թ., http://advocates.am/images/handznazhoghovner/sahmanadrakan_31082015/Kartcik-Sahmanadrutyun-verjnakan_compressed.pdf?fbclid=IwAR3Es6BXWLOARec2Mrh00rAG7RtORwYk3XYriDayeh-JI4exIPFsFExmHqCU: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փաստաբանների խմբի կարծիքը, Երևան, 2015 թ., https://lex.am/docs/lawyers%20opinion.pdf?fbclid=IwAR3XbFBdsvIxBzaIH2ikc_EwTm4Ra6AV8sMYf65LFzFNADogsmc2vCAAPw:

13. Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Երևան, 2016 թ., http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf:

14. Մանրամասն տե՛ս «Հետազոտության աղբյուրների ցանկ» բաժինը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում



2015 թ. սահմանադրական փոփոխություններով մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների սպաստված տեսանկյունից հետդիմաց արձանագրվեց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների սահմանադրական մի շարք երաշխիքների և դատական պաշտպանության ռեժիմի թուլացման առումով:

Հետդիմացի բացառումը (non-regression principle) միջազգային հանրային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից է և հաճախ կիրառվում է հատկապես տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և շրջակա միջավայրի իրավունքների պաշտպանության համատեքստում¹⁵:

Մարդու իրավունքների պաշտպանության շրջանակի ընդլայնման արդի միտումների և ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների տեսանկյունից մարդու իրավունքների իրավական կարգավիճակի վատթարացմանն ուղղված սահմանադրական փոփոխությունները **խնդրահարույց են և անընդունելի**:

Տվյալ գլուխը բաղկացած է երկու բաժնից և հավելվածից:

Բաժին 1. ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատումը վերացնելու անհրաժեշտությունը:

Բաժին 2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում:

Հավելված 1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատական փորձը սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ամրագրված են ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերում¹⁶:

Տվյալ գլխի շրջանակում առավել մանրամասն կանոնադառնանք ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին (այսուհետև նաև՝ ՏՄՄԻԴ), որը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ամրագրող ամենա-

15. *Stu* Economic, Social and Cultural Rights Handbook for National Human Rights Institutions, OHCHR, HR/P/PT/12, New York and Geneva, 2015 (անգլերեն), <https://www.ohchr.org/Documents/Publications/training12en.pdf>:

16. *Stu* ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան, Մարդու իրավունքների և ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունը, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան և այլն:

հիմնարար միջազգային փաստաթուղթն է¹⁷: ՀՀ-ի կողմից ՏՄՄԻԴ-ը վավերացվել է 1993 թ.:

2020 թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ-ն վավերացրել է նաև ՏՄՄԻԴ-ի լրացուցիչ արձանագրություններ¹⁸, որի համաձայն՝ անհատը իր տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքների խախտման դեպքում ներպետական ատյանները սպառելուց հետո կարող է իր իրավունքների խախտումը քննության ներկայացնել ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեում (այսուհետև նաև՝ ՏՄՄԻԿ):

Դաշնագրում ամրագրված են սոցիալ-տնտեսական այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ *աշխատանքի* (հոդված 6), *սոցիալական ապահովության, այդ թվում՝ սոցիալական ապահովագրության* (հոդված 9), *բավարար կենսամակարդակի* (հոդված 11), *ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի* (հոդված 12), *կրթության* (հոդված 13) և այլ իրավունքներ ու երաշխիքներ:

Դաշնագրի նախաբանում նշված է. «...Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի համաձայն՝ վախից ու կարիքից զերծ մարդկային ազատ անհատի իդեալը կարող է միայն իրականանալ, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնցում յուրաքանչյուրը կարող է օգտվել իր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից, ինչպես որ քաղաքացիական և քաղաքական իրավունքներից...»:

Այսպիսով՝ ՏՄՄԻԴ-ը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանությունը դնում է քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության հետ միևնույն նժարի վրա:

ՏՄՄԻԴ-ի 2-րդ հոդվածն ամրագրում է անդամ պետությունների պարտավորությունը՝ *պրոգրեսիվ կերպով*՝ «առաջադիմորեն հասնելու Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը բոլոր պատշաճ միջոցներով, ներառյալ մասնավորապես օրենսդրական միջոցների ընդունմամբ» (ձևակերպումը՝ ըստ սկզբնաղբյուրի՝ «*achieving progressively the full realization of the rights recognized in the present Covenant by all appropriate means, including particularly the adoption of legislative measures*»):

Պետության պարտավորությունների բնույթին ՏՄՄԻԿ-ն անդրադարձել է իր 3-րդ Ընդհանուր մեկնաբանությամբ¹⁹՝ նշելով, որ պետության կողմից «*ձեռնարկվող բոլոր պատշաճ, ներառյալ օրենսդրական միջոցները*» ներառում են նաև սահմանադրական դրույթների ամրագրումը:

Իրավունքների պրոգրեսիվ իրականացման սկզբունքը ենթադրում է նաև, որ պետությունը պետք է զերծ մնա հետընթաց կամ ռեգրեսիվ քայլեր ձեռնարկելուց: Այս առումով իրավունքի պաշտպանության ավելի բարձր մակարդակից ավելի ցածր մակարդակի անցումը ևս կարող է դիտարկվել իբրև հետընթաց և դաշնագրային պարտավորության խախտում²⁰:

17. *ՏՄՄԻԿ* Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, <http://www.irttek.am/views/act.aspx?aid=37347>: Դաշնագիրը ուժի մեջ է մտել 1976 թ., վավերացված է 176 պետությունների կողմից:

18. *ՏՄՄԻԿ* Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրություն, http://www.parliament.am/draft_docs7/K-608_ardzanagrutyun.pdf:

19. *ՏՄՄԻԿ* Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 3 (անգլերեն), <https://www.refworld.org/pdfid/4538838e10.pdf>:

20. *ՏՄՄԻԿ* Economic, Social and Cultural Rights Handbook for National Human Rights Institutions, OHCHR, HR/P/PT/12, New York and Geneva, 2015 (անգլերեն), <https://www.ohchr.org/Documents/Publications/training12en.pdf>:

2015 թ. փոփոխությունների համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղի են ունեցել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների նվազում և հետընթաց:

Առանձին տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների նվազեցմամբ պայմանավորված հետընթացին անդրադառնում ենք տվյալ գլխի 2-րդ բաժնում՝ իրավունքների բովանդակային քննարկման շրջանակում:



ԲԱԺԻՆ 1.1

ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատումը վերացնելու անհրաժեշտությունը

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ամրագրված էին 2-րդ գլխում՝ մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների շարքում: Դրանց թվում էին անվտանգ աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, բժշկական սպասարկման, բավարար կենսասնակարգակի, բնակարանի, մշակութային կյանքին մասնակցելու, աշխատանքի ազատ ընտրության, գործադուլի, կրթության, սեփականության և այլ իրավունքներ:

2015 թ. փոփոխություններով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների զգալի մասը՝ սոցիալական ապահովության, առողջության պահպանման, արժանապատիվ գոյության, նվազագույն աշխատավարձի և աշխատանքի բավարար պայմանների, բնակարանի, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները, ամրագրում չստացան Սահմանադրության 2-րդ գլխում և դադարեցին «հիմնական իրավունքներ» համարվելուց: Դրանք մասնակի ամրագրվեցին Սահմանադրության 3-րդ գլխում՝ որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքներ և պետության քաղաքականության հիմնական նպատակներ: Իրավունքների մի շարք էլ՝ բավարար կենսասնակարգակի, ներառյալ կենսապայմանների բարելավման, գիտության նվաճումներից օգտվելու և առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքները, ընդհանրապես հանվեցին Սահմանադրության տեքստից: Միևնույն ժամանակ կրթության, սեփականության, աշխատանքի ազատ ընտրության և գործադուլի իրավունքները պահպանվեցին Սահմանադրության 2-րդ գլխում՝ որպես անմիջականորեն գործող հիմնական իրավունքներ:

Այսպիսով՝ Սահմանադրության 2-րդ գլխից դուրս մնացած իրավունքները դադարեցին «հիմնական իրավունքներ» համարվելուց, ինչի հետևանքով դրանք չունեն Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված անմիջական գործողություն, վերջիններիս նկատմամբ կիրառելի չեն Սահմանադրության 78-80-րդ հոդվածներում ամրագրված համաչափության, որոշակիության, եության անխախտելիության սկզբունքները, ինչպես նաև Սահմանադրության 81-րդ հոդվածը:

Ավելին՝ վերոնշյալ փոփոխություններով անհատը և Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետև՝ նաև ՄԻՊ) զրկվեցին 2-րդ գլխից դուրս մնացած իրավունքների վերաբերյալ իրավական ակտերի սահմանադրականության վիճարկման մեխանիզմից:

**2005 թ. փոփոխություններով
ՀՀ Սահմանադրություն**

**2015 թ. փոփոխություններով
ՀՀ Սահմանադրություն**

Տնտեսական, սոցիալական և մշակութային **իրավունքները** ներառել են՝

- աշխատանքի ընտրության ազատությունը,
- արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը,
- անվտանգության և հիգիենայի պայմաններին բավարարող աշխատանքային պայմանների իրավունքը,
- գործադուլի իրավունքը,
- հանգստի իրավունքը,
- կրթության իրավունքը,
- սոցիալական ապահովության իրավունքը,
- բժշկական սպասարկման իրավունքը,
- բավարար կենսամակարդակի իրավունքը,
- գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատությունը,
- գիտության նվաճումներից օգտվելու իրավունքը,
- հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային **իրավունքները** ներառում են՝

- կրթության իրավունքը,
- ստեղծագործության ազատությունը (գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատությունը),
- աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները (աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը),
- գործադուլի իրավունքը,
- սեփականության իրավունքը:

Օրենսդրական երաշխիքները ներառում են՝

- աշխատանքային պայմանները (ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունք, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման իրավունք, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք),
- սոցիալական ապահովությունը,
- արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը,
- առողջության պահպանությունը:

Քաղաքականության նպատակները ներառում են՝

- բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը,
- բնակարանային շինարարության խթանումը,
- բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը,
- քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը,
- անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը,
- հիմնարար և կիրառական գիտության զարգացումը:

Աղյուսակ 1

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանությանը վերաբերող 2015 թ. փոփոխությունների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- Փոփոխություններն էականորեն ազդել են քաղաքացու՝ ՏՄՄԻԴ-ով տրամադրվող իրա-

վունքներից օգտվելու, դրանք իրացնելու հնարավորությունների վրա:

- Քննության առարկա չի դարձվել և հայեցակարգում իր արտացոլումը չի գտել այն հարցը, թե ինչ ծավալով է պետությունը պատրաստվում իրականացնելու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության միջազգային իրավական իր պարտավորությունները փոփոխված Սահմանադրության պայմաններում:
- Փոփոխությունները կարող են գնահատվել որպես հետընթաց քայլ ՏՄՄԻԳ-ով սահմանված՝ պետության պարտավորությունների իրականացման և ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

I. ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատման վերաբերյալ 2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում տեղ գտած հիմնավորումների վիճահարույց բնույթը

Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատման հիմնավորման վերաբերյալ *մոտեցումներն ու փաստարկները* տեղ են գտել 2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում (այսուհետև նաև՝ Հայեցակարգ)²¹:

Սույն ենթակետում ներկայացվող ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներն ու փաստարկները վիճահարույց են, ինչով պայմանավորված է նաև դրանց հիման վրա տրված սահմանադրական լուծումների խնդրահարույց բնույթը:

Հայեցակարգային մոտեցումները հանգում են հետևյալին.

1. Իրավունքների անմիջական գործողության ապահովման համար անհրաժեշտ է տարանջատել «դասական հիմնական իրավունքները» «սոցիալական հիմնական իրավունքներից» և «պետության նպատակներից» անմիջական գործողության ու դատական պաշտպանության ընթացակարգեր ապահովել «դասական հիմնական իրավունքների» համար²²:
2. Անհրաժեշտ է վերանայել սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքները, ինչը կրկին պայմանավորված է «դասական հիմնական իրավունքների», «սոցիալական հիմնական իրավունքների» և «պետության նպատակների» տարանջատմամբ:
3. Անհրաժեշտ է սահմանադրական մակարդակով ամրագրել հիմնական իրավունքների սահմանափակումներին ներկայացվող պահանջները, մասնավորապես օրենսդիրի հայեցողությունը սահմանափակող՝ իրավունքների էության անխախտելիության, համաչափության և որոշակիության սկզբունքները²³, որոնք ևս կիրառելի են միայն «դասական հիմնական իրավունքների» նկատմամբ:

ՄԻՀԿ փորձագիտական թիմը համամիտ չէ վերոգրյալ հայեցակարգային մոտեցումների հետ և վիճարահույց է համարում հայեցակարգում ներկայացված՝ դրանք հիմնավորող փաստարկները, ինչին անդրադառնում ենք ստորև:

21. *Տե՛ս* Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014 թ., <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

22. Այս մոտեցումն իր ամրագրումը ստացավ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում:

23. Այս մոտեցումն իր ամրագրումը ստացավ ՀՀ Սահմանադրության 78-80-րդ հոդվածներում:

1. *Հայեցակարգային փաստաթուղթ*. «Եթե ազատությունը երաշխավորող դասական հիմնական իրավունքները պետությունից առաջին հերթին պահանջում են ձեռնպահ մնալ այդ իրավունքներին միջամտելուց, սպա սոցիալական հիմնական իրավունքների մեծ մասը, ընդհակառակը, պահանջում է հանրային իշխանության պոզիտիվ գործողություններ՝ այդ իրավունքներն իրականացնելու նպատակով»:

Այս փաստարկը հիմնավոր չէ իրավունքի զարգացման և մարդու իրավունքների նորմերի ժամանակակից մեկնաբանման շրջանակներում²⁴: Ժամանակակից մարդու իրավունքների տեսության մեջ և միջազգային մարմինների պրակտիկայում չեն կիրառվում «դասական հիմնական իրավունքներ» և «սոցիալական հիմնական իրավունքներ» արտահայտությունները, և չեն տարանջատվում դրանք:

Մարդու բոլոր իրավունքների պաշտպանությունը պահանջում է պետություններից ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ քայլեր և տարբեր ռեսուրսներ:

Թե՛ մարդու իրավունքների պայմանագրային մարմինները իրենց մեկնաբանություններում և թե՛ միջազգային դատական ատյանները²⁵ հաստատել են, որ պետության նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունները մեկ ընդհանուր նորմատիվ պահանջի մաս են, որը վերաբերում է և՛ քաղաքական ու քաղաքացիական, և՛ սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքներին:

Այսպես, օրինակ՝ «հիմնարար» քաղաքական իրավունքներից մեկը՝ ընտրելու իրավունքը, չի կարող երաշխավորվել, եթե պետությունը չապահովի ընտրությունների պարբերական անցկացումը, ինչը պոզիտիվ պարտավորության դրսևորում է: Մյուս կողմից, երբ անձն իրացնում է իր սոցիալական կամ տնտեսական իրավունքները, պետությունը չպետք է կատարի այնպիսի գործողություն, որը միջամտում է կամ վնասում է այդ իրավունքի իրացմանը: Օրինակ՝ բնակարանի իրավունքի իրացումը պետությունից պահանջում է գերծ մնալ հարկադիր վտարումից²⁶, ինչը պետության նեգատիվ պարտավորության դրսևորում է: Ավելին՝ և՛ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների, և՛ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերում տեղ գտած խտրականության բացառման դրույթները պետությունների համար առաջացնում են և՛ նեգատիվ, և՛ պոզիտիվ պարտավորություններ²⁷:

2. *Հայեցակարգային փաստաթուղթ*. «Սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր այն դրույթները, որոնք պարտավորեցնում են միայն օրենսդիրին և գործադիրին, պետք է ձևակերպվեն որպես պետության նպատակներ, քանի որ դրանք անհատի անմիջական իրավական պահանջներ չեն, այլ պարունակում են միայն նպատակներ, որոնք պետությունը պետք է իրագործի «հնարավորության շրջանակում»:

24. *Sh'u* The Justiciability of Social and Economic Rights: An Updated Appraisal (անգլերեն), http://www.socialrights.ca/Publications/porter_the_justiciability_of_social_and_economic_rights%20copy.pdf:
 25. *Sh'u*, օրինակ, *Airey v Ireland*, ECtHR, Application No. 6289/73, ECtHR, Judgment of 9 October 1979 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57420>:
 26. *Sh'u* Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 7 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/47a70799d.html>:
 27. *Sh'u* Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 31 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/478b26ae2.html>: Տնտեսական, սոցիալական և մշակութային կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 20 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4a60961f2.html>:

Հայեցակարգի հեղինակները այս փաստարկով փորձել են հիմնավորել սահմանադրական փոփոխություններով սոցիալական իրավունքների մի մասը որպես սուբյեկտիվ իրավունք վերացնելու և փոխարենը որպես օրենսդրական երաշխիք կամ պետության քաղաքականության նպատակ ամրագրելու իրենց մտադրությունը:

Հատկանշական է, որ «սոցիալական ոլորտին վերաբերող դրույթներ» ասելով՝ Հայեցակարգը մշակողները նկատի են ունեցել սոցիալական ապահովության, առողջության, բավարար կենսամակարդակի, նվազագույն աշխատավարձի և մի շարք այլ տնտեսական, սոցիալական իրավունքներ, որոնց ապահովելու իրավական պահանջ անհատը միանշանակ պետք է ունենա, և այդ իրավունքների պաշտպանությունը և իրացումը ՀՀ միջազգային իրավական պարտավորություն են ՏՄՄԻԴ-ի, ինչպես նաև ՀՀ-ի կողմից վավերացված այլ միջազգային իրավական փաստաթղթերի շրջանակներում:

Ավելին՝ ՀՀ-ի կողմից վավերացված փաստաթղթերից որևէ մեկում ակնարկ անգամ չկա սոցիալական իրավունքների՝ միայն գործադիրին և օրենսդիրին պարտավորեցնելու մասին: Ինչպես արդեն նշել ենք, ՏՄՄԻԴ-ի նախաբանում հստակ ամրագրված է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հավասարությունը քաղաքական, քաղաքացիական իրավունքներին:

Ինչ վերաբերում է «հնարավորության շրջանակում» դրանց իրագործման հանգամանքին, ապա ՏՄՄԻԿ-ը, անդրադառնալով հնարավորությունների հարցին, այնուամենայնիվ նշում է, որ պետության ձեռնարկած քայլերը պետք է իրականացվեն հնարավորությունների առավելագույն սահմաններում, բայց և պետք է լինեն ապացուցելի կոմիտեի կամ այլ վերահսկող մարմնի, ինչպես նաև ներպետական դատական մարմինների համար:

Կարևոր է արձանագրել, որ վերջին տարիներին աճել է ազգային սահմանադրություններում սոցիալական և տնտեսական իրավունքներ ամրագրող երկրների թիվը, նաև ձևավորվել է հարուստ նախադեպային իրավունք ինչպես տարածաշրջանային մարմինների, այնպես էլ ներպետական դատարանների կողմից սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ դատական հայցերի քննության ու որոշումների կայացման արդյունքում: Նման հարուստ փորձ ձևավորել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը²⁸:

Սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ որոշումներ են կայացվել տարածաշրջանային մարմինների կողմից, ինչպիսիք են Մարդու իրավունքների Աֆրիկյան հանձնաժողովը²⁹, Մարդու իրավունքների հարցերով Միջամերիկյան հանձնաժողովը³⁰, Սոցիալական իրավունքների հարցերով եվրոպական հանձնաժողովը³¹, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և

28. *St'u* առավել մանրամասն ՀՀ Սահմանադրական դատարանի նախադեպային փորձը սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ սույն գլխին կից Հավելված 1-ում:

29. *St'u* Purohit and Moore v. Gambia, ACHPR, Communication 241/2001 (անգլերեն), <https://www.esccr-net.org/caselaw/2006/purohit-and-moore-v-gambia-cited-communication-no-2412001-sixteenth-activity-report>: SERAC and CESR v. Nigeria, ACHPR, Case No. 155/96 (անգլերեն), https://www.achpr.org/public/Document/file/English/achpr30_155_96_eng.pdf:

30. *St'u* Jehovah's Witnesses v. Argentina, IACHR, Case 2137 (անգլերեն), <http://www.cidh.org/annualrep/78eng/Argentina.2137.htm>: Jorge Odir Miranda Cortez et al. v. El Salvador, IACHR, Case 12.249 (անգլերեն), <http://hrlibrary.umn.edu/cases/29-01.html>:

31. *St'u* International Association Autism Europe v. France, ECSR, Complaint No. 13/2002 (անգլերեն), <https://www.esccr-net.org/caselaw/2006/international-association-autism-europe-v-france-complaint-no-132002#:~:text=Summary%3A,access%20to%20adequate%20educational%20services>: FIDH v. France, ECSR, Complaint No. 14/2003 (անգլերեն), <https://www.esccr-net.org/caselaw/2006/international-federation-human-rights-leagues-fidh-v-france-complaint-no-142003>:

բազմաթիվ ներպետական դատարաններ³²: 2008 թվականից անհատական գործեր քննում և այդպիսի որոշումներ կայացնում է նաև ՏՍՄԻԿ-ը, որի իրավասությունը, ինչպես նշեցինք, 2020 թ. հոկտեմբերից ճանաչել է նաև ՀՀ-ն՝ վավերացնելով ՏՍՄԻԿ-ի կամընտիր արձանագրությունը:

Այսպիսով՝ ձևավորվել է արդարադատական փորձ, որը հաստատել է, որ սոցիալ-տնտեսական իրավունքներն առաջացնում են անհատի անմիջական իրավական պահանջներ և ունեն դատական վիճարկելիություն:

3. *Հայեցակարգային փաստաթղթի. «Սոցիալական պետության սկզբունքը բովանդակությամբ այնքան լայն է, որ դրանից հնարավոր չէ արտածել ճշգրիտ իրավական հետևանքներ, այդ պատճառով էլ այդ սկզբունքի կոնկրետացումն առաջին հերթին օրենսդիրի խնդիրն է... Սոցիալական պետության սկզբունքը օրյեկտիվ սահմանադրական նորմ է և, որպես այդպիսին, դեռևս չի սահմանում քաղաքացու սուբյեկտիվ իրավունքներ»:*

Վերոնշյալ պնդումը ոչ միայն հիմնավորված չէ որևէ փաստարկով, այլև հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի՝ սոցիալական պետության վերաբերյալ մեկնաբանություններին: Այսպես՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում մեկնաբանել է «սոցիալական պետություն» հասկացությունը և իրավական հետևանքներ արտածել դրանից: Մասնավորապես անդրադառնալով «սոցիալական պետություն» հասկացությանը, ՄԴ-ն մեկնաբանել է այն՝ արձանագրելով, որ ««սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես սոցիալական պետության բնութագրիչ»³³, և որ «սոցիալական իրավունքների ամրագրումն ու այդ իրավունքների իրականացման ապահովումը բխում են Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է»³⁴:

Սահմանադրական դատարանը, ըստ էության, իր իրավական դիրքորոշումներում արձանագրել է սոցիալական իրավունքների ամրագրման ու դրանց իրականացման ապահովման պարտականությունը՝ որպես «սոցիալական պետություն» կոնցեպտի բովանդակության մաս:

Կարևոր է նաև հաշվի առնել, որ «սոցիալական պետության» տեսլականի, դրա սահմանադրաիրավական բովանդակության, սոցիալ-տնտեսական իրավունքների ամրագրման, դրանց երաշխիքների և պաշտպանության ռեժիմների ընտրության վրա մեծ ազդեցություն է ունենում նաև կոնկրետ երկրի սահմանադրաիրավական մշակույթը, ինչպես նաև տվյալ երկրի քաղաքացիների իրավական սպասելիքներն ու ակնկալիքները պետությունից: Դրանով է բացատրվում մասնավորապես այն հանգամանքը, որ սոցիալ-տնտեսական իրավունքների ամրագրումը հետխորհրդային երկրների սահմանադրություններում բավականին համակողմանի է, որն արդյունք է տասնամյակներ շարունակ պետության կողմից սոցիալական իրավունքների բարձր պաշտպանության ապահովման:

32. Այդպիսի երկրների թվին են դասվում Լատվիան, Ֆինլանդիան, Հունգարիան, Ֆիլիպինները, Ծվեյցարիան, Իռլանդիան, Վենեսուելան, Արգենտինան և այլն:

33. Տե՛ս ՄԴՈ-1142:

34. Տե՛ս ՄԴՈ-1424:

II. ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատմամբ պայմանավորված սահմանադրական լուծումների խնդրահարույց բնույթը

Վերոնշյալ հայեցակարգային մոտեցումներով 2015 թ. Սահմանադրությամբ տրված սահմանադրական լուծումները հանգեցրին հետևյալ խնդրահարույց իրավիճակին, երբ սոցիալ-տնտեսական և մշակութային մի շարք իրավունքների (առողջության պահպանման, սոցիալական ապահովության, բավարար կենսամակարդակի, գիտական նվաճումներից օգտվելու և այլն) ապահովման մասով հանրային իշխանության մարմինները ձեռք բերեցին բացարձակ հայեցողություն:

- Այսպես՝ այս իրավունքների իրացման համար ընդունվող օրենքների մասով չկա օրենսդիրի հայեցողությունը սահմանափակող որևէ ուղենիշ. օրենսդիրը և գործադիրը սահմանափակված չեն համաչափության սկզբունքով, այսինքն՝ տեսականորեն կարող են, օրինակ, սահմանափակել անձանց առողջության պահպանման իրավունքը այնքան, որքան հարկ կհամարեն, ընդհուպ մինչև կարևորագույն առողջապահական հիմնարկների լուծարումը:
- Այս իրավունքների նկատմամբ չի տարածվում նաև իրավունքի էության անխախտելիության սկզբունքը, այսինքն՝ օրենսդիրը, օրինակ, կարող է ընդունել օրենք, որով կսահմանի սոցիալական ապահովության իրավունքից օգտվելու համար այնպիսի ֆորմալ պահանջներ, որոնք գործնականում անհնար կդարձնեն անձի համար իր կենսաթոշակի իրավունքի իրացումը: Նախկինում ՀՀ քաղաքացիները բախվել էին նման խնդրի, երբ կենսաթոշակ ստանալու իրավունքը օրենքը պայմանավորել էր սոցիալական քարտերի պարտադիր առկայությամբ, որի հետևանքով սահմանափակվել էր սոցիալական քարտ ստանալուց հրաժարված անձանց սոցիալական ապահովության իրավունքը: ՀՀ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական և անվավեր է ճանաչել օրենքի այդ դրույթը, քանի որ այն խախտում է իրավունքի բուն էությունը³⁵:
- Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված իրավունքները մեկնաբանելիս հանրային իշխանության մարմինները կաշկանդված չեն նաև Սահմանադրության 81-րդ հոդվածում ամրագրված՝ ՀՀ-ի վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի կիրառումը հաշվի առնելու պահանջով, քանի որ մեկնաբանման այս ուղենիշը ևս կիրառելի է միայն 2-րդ գլխում ամրագրված իրավունքների նկատմամբ:
- Ներկայումս անհատը զրկվել է նաև վերոնշյալ իրավունքների վերաբերյալ ընդունված իրավական ակտերի սահմանադրականության վիճարկելիության իրավունքից, ինչին առավել մանրամասն անդրադառնում ենք ստորև:

Այս ամենը դիտարկելով կայուն մեծամասնական պառլամենտական համակարգի լույսի ներքո, երբ գործադիր և օրենսդիր իշխանությունները սահմանադրորեն մեկ քաղաքական ուժի կամ կոալիցիայի վերահսկողության տակ են, պարզ է դառնում, որ **Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացումը պայմանավորված է մեկ քաղաքական ուժի բացարձակ հայեցողությամբ, ինչը վտանգի տակ է դնում նաև իրավունքի գերակայության սկզբունքի իրացումը:**

.....
35. Տե՛ս ՄԴՈ-649:

III. ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված իրավունքների վերաբերյալ նորմատիվ ակտերի սահմանադրականության վիճարկման հնարավորության բացառումը

Դատական վիճարկելիությունը սահմանվում է որպես իրավունքի խախտման դեպքում անկախ և անաչառ մարմնի առջև այդ իրավունքի վերականգնում պահանջելու հնարավորություն³⁶:

ՀՀ Սահմանադրական դատարանում Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված սոցիալ-տնտեսական իրավունքների դատական վիճարկելիության կարգավորումների վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև Վենետիկի հանձնաժողովը, որը, կարևորելով այդ իրավունքների օրենսդրական կիրարկման անհապաղ իրականացումը, հարցադրումներ է կատարել այս «վիրտուալ» երաշխիքների դատական պաշտպանության հնարավորության, իմպլեմենտացնող օրենսդրության չընդունման դեպքում Սահմանադրական դատարան դիմելու հնարավորության հետ կապված³⁷:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության վիճարկման առումով իրավունքների դատական պաշտպանության միջոցների նվազեցումը խնդրահարույց է հետևյալ հիմնավորումներով.

1. Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրական դատական վերահսկողությունից դուրս մնալու հանգամանքը վտանգում է իրավունքի գերակայության սկզբունքի³⁸ և զսպումների ու հակակշիռների գործուն մեխանիզմների գործնականացումը:

Դատական իշխանությունը, ի դեմս Սահմանադրական դատարանի, կարևոր դեր է կատարում ժողովրդավարական կառավարման ամրապնդման համար՝ դատական վերահսկողության ենթարկելով օրենսդիր և գործադիր մարմինների ակտերը մարդու իրավունքների բովանդակության հետ դրանց համապատասխանության տեսանկյունից: Երբ դատարանը վերահսկողություն է իրականացնում Կառավարության ակտերի նկատմամբ, տեղի է ունենում «լիազորության շարժ», որը ժողովրդավար հասարակարգերում լիազորությունների հավասարակշռման և փոխզսպման մաս է: Այս համատեքստում սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ ընդունված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության ստուգման նախաձեռնություն ունեցող սուբյեկտների շրջանակի նեղացումը և այդ շրջանակից ՄԻՊ-ին ու քաղաքացիներին (որպես

36. Դատական վիճարկելիության հնարավորությունը նշանակում է իրավունքների ապահովման մեխանիզմների հասանելիություն: Դատարանում վիճարկելի իրավունքները իրավունքը կրողներին տալիս են միջոց՝ դրանք իրացնելու համար, եթե իրավունքի հասցեատերը չի կատարում իր պարտականությունները: Իրավական պաշտպանության միջոցի առկայությունը լիարժեք իրավունքի հատկանիշն է: Դա նշանակում է ինչպես ընթացակարգային միջոցի ապահովում (դատարանի արդյունավետ մատչելիություն), երբ խախտումը տեղի է ունեցել կամ անխուսափելի է, այնպես էլ վնասի պատշաճ հատուցման տրամադրումն ապահովող գործընթաց: Պաշտպանության միջոցի իրավունքը մարդու բոլոր իրավունքների պաշտպանությանն ուղղված հիմնարար և կարևոր իրավունքներից է: *Stu* International Commission of Jurists. Courts and the Legal Enforcement of Economic, Social and Cultural Rights. Comparative experiences of justiciability. Geneva: International Commission of Jurists, 2008 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4a7840562.html>:

37. *Stu* Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 757/2014, կետ 64, [https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm):

38. Իրավունքի գերակայության սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված «իրավական պետության» կոնցեպտից, ինչը տեղ է գտել ՄԻ մի շարք որոշումներում, ներառյալ սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես ՄԴՈ-731 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը կենսաթոշակների ձևերի, դրանց նշանակման կարգն ու պայմանները սահմանելու պետության հայեցողությունը համարել է սահմանափակելի իրավունքի գերակայության, իրավական որոշակիության, հավասարության և խտրականության արգելման սկզբունքներով:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերականգնում

կարևոր դերակատարների) դուրս թողնելը սահմանափակում են զսպումների և հակակշիռների մեխանիզմի գործնականացման հնարավորությունները:

2. Դիտարկվող սահմանափակումը խնդրահարույց է Սահմանադրության մեջ տեղ գտած սոցիալ-տնտեսական իրավունքների սահմանադրականության վիճարկման վերաբերյալ սահմանադրական համակարգային լուծումների տեսանկյունից:

Այսպես՝ ՄԳ դիմող սուբյեկտների և նրանց դիմումների «առարկայի ու սահմանների» վերաբերյալ սահմանադրական նորմերի³⁹ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, «Հ նախագահը, Կառավարությունը և դատարանները կարող են դիմել Սահմանադրական դատարան, նաև սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ ընդունված նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով: Այս տարբերակված մոտեցումը անձի սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության և նրա սահմանադրական արդարադատական իրավունքի իրացվելիության տեսանկյունից արդարացված չէ, հատկապես եթե հաշվի առնենք, որ վերոնշյալ սուբյեկտները՝ որպես սահմանադրական վերահսկողության նախաձեռնող սուբյեկտներ, բավականին պասիվ են⁴⁰: Հետևաբար սահմանադիրը խնդիր է տեսնում ոչ թե ընդհանրապես սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ նորմատիվ ակտերի դատական վիճարկելիության ինստիտուտի, այլ դիմող սուբյեկտների մասով: Նման տարբերակված մոտեցումը խնդրահարույց է, և դրա իրավաչափությունը հիմնավորված չէ:

3. Գործող Սահմանադրությունում սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների դատական վիճարկելիության սահմանադրական սահմանափակումը վիճահարույց է նաև իրավունքների դատական պաշտպանության իրավունքի տեսանկյունից, ներառյալ գործող Սահմանադրության ամրագրումների առումով, քանի որ Սահմանադրության 61-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, որը վերաբերում է բոլոր, ներառյալ սոցիալ-տնտեսական իրավունքներին: Հետևաբար Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իրավունքի իրացումը սահմանափակվում է 3-րդ գլխի իրավակարգավորումների դատական պաշտպանության սահմանափակման հետևանքով:
4. Սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի դատական վիճարկելիության սահմանափակումը սահմանադրական մակարդակում հիմնավորված չէ ՀՀ սահմանադրական արդարադատական իրավակիրառ պրակտիկայով և կարող է գնահատվել որպես արհեստական օրակարգ:

ՀՀ Սահմանադրական դատարանում սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ օրենսդրական նորմերի սահմանադրականության վիճարկման փորձի (2006-2018 թթ.) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց դատական պաշտպանությունը Սահմանադրական դատարանում ձևավորել է բավականին համապարփակ, առաջադիմական և սոցիալ-տնտեսական իրավունքների բովանդակությունը զարգացնող սահմանադրական նախադեպային իրավունք⁴¹:

39. *Տե՛ս* ՀՀ Սահմանադրության 168-րդ և 169-րդ հոդվածներ:

40. *Տե՛ս* ՄԳ տարեկան հաղորդումները, <http://concourt.am/armenian/report/index.htm>:

41. *Տե՛ս* առավել մանրամասն ՀՀ Սահմանադրական դատարանի նախադեպային փորձը սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ սույն գլխին կից Հավելված 1-ում:

ՀՀ Սահմանադրական դատարանում սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ օրենսդրական ակտերի վիճարկելիությունը իրավակիրառ պրակտիկայում եղել է դրական ինչպես դիմող կողմի իրավունքների պաշտպանության (անհատական գանգատի շրջանակում), այնպես էլ վիճարկվող իրավահարաբերությունների՝ սահմանադրական նորմերին համահունչ հետազա կարգավորման տեսանկյունից: Ընդ որում՝ հայտնի չէ այնպիսի իրավական հարց, որը ՄԳ-ի կողմից խնդրահարույց է դիտարկվել սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ ակտերի սահմանադրականության վիճարկման համատեքստում:

ԱՌԱՋԱՐԿ (Գլուխ 1. Բաժին 1.1)

Այսպիսով՝ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատումը և դրա հետևանքով տնտեսական, սոցիալական և մշակութային մի շարք իրավունքների իրավական պաշտպանության երաշխիքների նվազեցումը խնդրահարույց են և ենթակա են վերանայման:

Տվյալ բաժնում ներկայացված փաստարկներով պայմանավորված՝ առաջարկում ենք Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատման վերացման և տնտեսական, սոցիալական ու մշակութային բոլոր իրավունքների՝ որպես հիմնական իրավունքների ամրագրման անհրաժեշտությունը ներառել առաջիկա սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում՝ որպես հայեցակարգային առաջարկ:



ԲԱԺԻՆ 1.2

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում

Նախորդ բաժնում համապարփակ անդրադարձ կատարելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության ՀՀ միջազգային իրավական պարտավորություններին, ինչպես նաև տվյալ իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդմանն ուղղված՝ իրավունքի առաջադեմ զարգացումներին և վերահաստատելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների՝ որպես սուբյեկտիվ իրավունքների ճանաչման և 2015 թ. իրականացված հետընթաց փոփոխությունների վերացման անհրաժեշտությունը՝ սույն բաժնում կարևոր ենք համարում անդրադառնալ տվյալ իրավունքների բովանդակության վերանայման և բարելավման խնդրին:

Այս նպատակով ուղղորդող առանցքային միջազգային իրավական փաստաթղթից՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրից գատ՝ սույն բաժնի քննարկման շրջանակում հենվելու ենք նաև տարածաշրջանային կարևոր գործիքի՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի կարգավորումների վրա:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան⁴² (այսուհետև նաև՝ ՎԵՍԽ կամ Խարտիա) ՀՀ-ի կողմից վավերացված փաստաթղթերի շարքում սոցիալ-տնտեսական իրավունքներն ամրագրող համապարփակ տարածաշրջանային գործիքն է: Խարտիան վավերացվել է ՀՀ-ի

42. Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24230>:

կողմից 2004 թ-ին: Խարտիայում ամրագրված են սոցիալ-տնտեսական մի շարք իրավունքներ, որոնցից պետություններն ընտրում են այն իրավունքների նվազագույն ծավալը, որոնցով պետությունն իրեն պարտավորված է զգում: Խարտիան վավերացնելիս ՀՀ-ն իրեն պարտավորված է համարել շուրջ 20 հոդվածով ամրագրված իրավունքներով, որոնց թվում են՝ աշխատանքի իրավունքը, սոցիալական ապահովության իրավունքը, բժշկական և սոցիալական օգնության իրավունքը, սոցիալական ապահովության ծառայություններից օգտվելու իրավունքը, սոցիալ-տնտեսական այլ իրավունքներ:

Առանձին իրավունքների միջազգային իրավական բովանդակությունը ներկայացնելիս կանդրադառնանք և՛ ՏՄՄԻԴ-ով, և՛ ՎԵՄԽ-ով ՀՀ-ի ստանձնած պարտավորություններին: Միևնույն ժամանակ իրավունքների բովանդակությունների քննարկումը նպատակ է հետապնդում ընդգծելու այդ իրավունքների փոխկապակցվածությունը, ներկայացնելու իրավունքների միջև անմիջական բովանդակային կապը՝ այսպիսով կարևորելով Սահմանադրությամբ երաշխիքների համալիր վերանայման և կատարելագործման անհրաժեշտությունը:

I. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջության իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները

Առողջության իրավունքին առնչվող սահմանադրաիրավական երաշխիքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 25-րդ, 85-րդ և 86-րդ հոդվածներում:

2015 թ. սահմանադրական փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունում ամրագրվեց Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը (հոդված 25), որը գործող Սահմանադրությունում առկա՝ առողջության իրավունքին առնչվող միակ սուբյեկտիվ իրավունքն է, որ տեղ է գտել Սահմանադրության 2-րդ գլխում:

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը ՀՀ ՄԴ-ն մեկնաբանել է 30.01.2020 թ. կայացված ՄԴՈ-1504 որոշմամբ՝ իրավունքի բովանդակությունը տարածելով նաև անգործունակ անձանց՝ իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին պատշաճ մասնակցելու իրավունքի, իրազեկված համաձայնություն ստանալու պահանջի անհրաժեշտության, իրենց վերաբերյալ բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքի, երեխայի՝ իր նկատմամբ կատարվող բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքի և այլ իրավունքների նկատմամբ:

Առողջության իրավունքին առնչվող այլ դրույթներն ամրագրված են Սահմանադրության 3-րդ գլխում որպես օրենսդրական երաշխիքներ և պետության քաղաքականության նպատակներ:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածում որպես օրենսդրական երաշխիք ամրագրված է առողջության պահպանումը, ըստ որի՝ «յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք», և «օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը»:

Սահմանադրության 86-րդ հոդվածի 7-րդ ենթակետում «բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման

պայմանների ստեղծումը» ամրագրված են որպես պետության քաղաքականության հիմնական նպատակներ:

Մինևույն ժամանակ, առողջության պաշտպանության նպատակը Սահմանադրության տարբեր հոդվածներում նշված է որպես մի շարք իրավունքների, մասնավորապես բնակարանի անձեռնմխելիության, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության, հավաքների ազատության և մի շարք այլ իրավունքների սահմանափակման հիմք: 2020 թ. համաճարակային զարգացումները ցույց տվեցին, որ մի շարք հիմնարար իրավունքներ կարածամկետ սահմանափակումների ենթարկվեցին հենց առողջության պաշտպանության նպատակով:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված էր նաև բժշկական օգնության և սպասարկման իրավունքը՝ որպես սուբյեկտիվ, սահմանադրական վիճարկելիություն ունեցող իրավունք: ՄԴ-ն իր նախադեպային որոշումներով գնահատական է տվել բժշկական օգնության և սպասարկման իրավունքի⁴³ իրացման մատչելիությանը՝ դիտարկելով այն պետության՝ բնակչության առողջության պահպանման նպատակային ծրագրեր իրականացնելու և արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ապահովելու խնդրի համատեքստում:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ	
2005 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն	2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն
<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ՝</p> <ul style="list-style-type: none"> բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը, առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ՝</p> <ul style="list-style-type: none"> ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը:
	<p>Ամրագրում են ստացել իբրև օրենսդրական երաշխիքներ՝</p> <ul style="list-style-type: none"> առողջության պահպանումը:
<p>Ամրագրում են ստացել իբրև պետության խնդիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև քաղաքականության նպատակներ՝</p> <ul style="list-style-type: none"> բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:

Աղյուսակ 2

43. Տե՛ս ՄԴՈ-913:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում

Այսպիսով 2015 թ. սահմանադրական փոփոխություններով էապես հետընթաց են ապրել առողջության իրավունքի սահմանադրաիրավական ամրագրումները՝ վերացնելով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքը և առողջության պահպանումը վերապահելով բացառապես գործադիր և օրենսդիր իշխանությունների մարմիններին:

Առողջության իրավունքի միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը

Առողջության իրավունքը մարդու արժանապատիվ կյանքի հիմնարար մասն է:

Այն իր բովանդակությամբ խաչվում է մի շարք այլ իրավունքների (բավարար կենսամակարդակի, առողջ շրջակա միջավայրի, սոցիալական ապահովության, անձնական կյանքի անձեռնմխելիության, կրթության և այլն) բովանդակությունների հետ:

Այսպես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (այսուհետև՝ նաև ՄԻՀՀ) առողջության իրավունքն ամրագրված է որպես բավարար կենսամակարդակի իրավունքի մի մաս (հոդված 25)⁴⁴:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում ամրագրված է յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույն հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը: «Իրավունքի լիարժեք իրականացման համար Դաշնագրի անդամ պետությունների կողմից պետք է իրականացվեն միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են մասնավորապես *մեռելաձեռության և մանկական մահացության կրճատման ապահովման և երեխայի առողջ զարգացման, շրջակա միջավայրի և արդյունաբերական աշխատանքի հիգիենայի բարելավման, համաճարակային, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման և դրանց դեմ պայքարի, ինչպես նաև հիվանդության դեպքում բժշկական օգնությունը և բժշկական խնամքը ապահովող պայմաններ ստեղծելու համար*»:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի մեկնաբանմամբ առողջության իրավունքը չպետք է հասկանալ որպես առողջ լինելու իրավունք⁴⁵: Այն ներառում է մի շարք ազատություններ և իրավական հնարավորություններ (*entitlement*): Ազատությունները ներառում են յուրաքանչյուրի՝ իր առողջությունն ու մարմինը կառավարելու իրավունքը, ներառյալ սեռական և վերարտադրողական ազատությունը և խոշտանգումից, առանց համաձայնության բժշկական միջամտությունից և փորձերից զերծ լինելու իրավունքները: Ի հակադրություն դրա՝ իրավական հնարավորությունները ներառում են այնպիսի առողջապահական համակարգից օգտվելու իրավունքը, որը հավասար հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուրին՝ օգտվելու առողջության առավելագույնս հասանելի մակարդակից:

ՎԵՄԽ-ը առողջության իրավունքը դիտարկում է սոցիալական օգնության իրավունքի հետ համատեղ⁴⁶. ՎԵՄԽ-ի ամրագրմամբ սոցիալական և բժշկական օգնության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով պետությունները պարտավոր են երաշխավորել, որ ցանկացած անձի, ով չունի համապատասխան ռեսուրսներ և ի վիճակի չէ ապահովելու դրանք

44. Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>:
45. Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.14 (անգլերեն), <https://www.refworld.org/pdfid/4538838d0.pdf>:
46. Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 13-րդ հոդվածի 1-ին մասը:

սեփական ջանքերով կամ այլ աղբյուրներից, օրինակ՝ սոցիալական ապահովության ծրագրով տրվող նպաստներից, հիվանդության դեպքում պետք է տրամադրվի իր վիճակով պայմանավորված խնամք:

ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում առողջության իրավունքին անդրադարձել է 8-րդ հոդվածի՝ մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի շրջանակում և մասնավոր կյանքի շրջանակում է մեկնաբանել նաև անձի ֆիզիկական, բարոյական և հոգեկան անձեռնմխելիությունը, ինչպես նաև բժշկական միջամտության ենթարկվելու կամ բուժվելու ազատությունը⁴⁷:

Առողջության իրավունքն ամրագրված է մի շարք երկրների սահմանադրություններում⁴⁸, օրինակ՝ Բելգիայի սահմանադրության 23-րդ հոդվածում, Բուլղարիայի սահմանադրության 52-րդ հոդվածում, Խորվաթիայի սահմանադրության 59-րդ հոդվածում, Էստոնիայի սահմանադրության 28-րդ հոդվածում, Նիդերլանդների սահմանադրության 22-րդ հոդվածում և այլն:

Այսպիսով՝ առողջության իրավունքի ամրագրումները միջազգային մարդու իրավունքների փաստաթղթերում նույնանման չեն, սակայն մարդու իրավունքների թե՛ միջազգային, թե՛ տարածաշրջանային փաստաթղթերում և միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայում առողջության իրավունքը մեկնաբանվում է որպես լայն և ընդգրկուն իրավունք, որն առնվազն երաշխավորում է անձի.

- ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության պաշտպանությունը,
- ժամանակին և պատշաճ բժշկական սպասարկումն ու բուժօգնությունն առանց խտրականության,
- հանրային առողջության պահպանմանն ուղղված պետական ծրագրերի իրականացումը:

Համեմատելով առողջության իրավունքի վերոնշյալ միջազգային իրավական բովանդակությունները ՀՀ գործող սահմանադրական ամրագրումների հետ՝ կարող ենք եզրահանգել՝ գործող Սահմանադրությամբ սահմանադրաիրավական ամրագրում ունի միայն ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքը:

2015 թ. փոփոխություններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը դուրս է մնացել ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխից, իսկ առողջության պահպանման իրավունքը ձևակերպված է որպես օրենսդրական երաշխիք, ինչը զգալիորեն թուլացրել է այդ երաշխիքի իրավական ռեժիմը:

Հանրային առողջության պահպանմանն ուղղված պետական ծրագրերի իրականացումը ամրագրված է պետության քաղաքականության նպատակների մեջ:

Այսպիսով, թեև ՀՀ Սահմանադրությամբ առողջության պաշտպանության նպատակով թույլատրելի են և կիրառվում են հիմնարար իրավունքների սահմանափակումներ, սակայն առողջության պահպանման իրավունքն ինքնին՝ որպես առողջության իրավունքի կարևորագույն բաղադրիչ, ամրագրված չէ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում որպես սուբյեկտիվ անմիջականորեն գործող հիմնարար իրավունք: Սա նաև հետևանք է 2015 թ. փոփոխություններով արձա-

47. *Stu Glass v. the United Kingdom*, ECtHR, Application No.61827/00, Judgment of 9 March 2004 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61663>; *Tysiac v. Poland*, ECtHR, Application No.5410/03, Judgement of 20 March 2007 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-79812>:

48. Հետազոտության համար օգտագործվել է Codices համակարգը, <http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm>:

նագրված հետընթացի, ինչի վերականգնումը օրակարգային խնդիր պետք է լինի սահմանադրական փոփոխությունների գործընթացում:

Մինևույն ժամանակ, նկատի ունենալով, որ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ առողջության պահպանման իրավունքը ձևակերպված էր որպես բժշկական սպասարկում և օգնություն ստանալու իրավունք և համապատասխան իրավական զարգացում էր ապրել ՄԳ նախադեպային որոշումների միջոցով, իրավունքի զարգացման շղթան ապահովելու համար նպատակահարմար է իրավունքի սահմանադրաիրավական ամրագրման վերականգնումը 2005 թ. ձևակերպմամբ:

Ուստի առաջարկում ենք Սահմանադրության 2-րդ գլխում վերականգնել բժշկական սպասարկում և օգնություն ստանալու իրավունքը՝ որպես անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունք:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Աշխատանքային իրավունքների չչ սահմանադրաիրավական ամրագրումները

Աշխատանքային իրավունքներին առնչվող սահմանադրաիրավական երաշխիքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության հետևյալ հոդվածներում.

- աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը (45-րդ հոդված),
- աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը և հարկադիր աշխատանքի արգելքը (57-րդ հոդված),
- գործադուլի իրավունքը (58-րդ հոդված),
- որպես օրենսդրական երաշխիքներ՝ առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունքը, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքը (82-րդ հոդված),
- որպես պետության քաղաքականության նպատակ՝ բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը (86-րդ հոդված):

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ անվտանգության և հիգիենայի պահանջներին բավարարող աշխատանքային պայմանների իրավունքը, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, հանգստի իրավունքը, նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը ամրագրված էին որպես սուբյեկտիվ իրավունքներ:

Բնակչության զբաղվածությանը նպաստելը և աշխատանքի պայմանների բարելավումը 2005 թ. Սահմանադրությամբ ամրագրված էր որպես պետության խնդիր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

**2005 թ. փոփոխություններով
ՀՀ Սահմանադրություն**

**2015 թ. փոփոխություններով
ՀՀ Սահմանադրություն**

<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ`</p> <ul style="list-style-type: none"> • աշխատանքի ընտրության ազատությունը, • արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը, • անվտանգության և հիգիենայի պայմաններին բավարարող աշխատանքային պայմանների իրավունքը, • գործադուլի իրավունքը, • հանգստի իրավունքը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ`</p> <ul style="list-style-type: none"> • աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները (աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը), • գործադուլի իրավունքը:
<p>Ամրագրում են ստացել իբրև օրենսդրական երաշխիքներ`</p> <ul style="list-style-type: none"> • աշխատանքային պայմանները (ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունք, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման իրավունք, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք), • նվազագույն աշխատավարձը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև քաղաքականության նպատակներ`</p> <ul style="list-style-type: none"> • բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը:
<p>Ամրագրում են ստացել իբրև պետության խնդիրներ`</p> <ul style="list-style-type: none"> • նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև քաղաքականության նպատակներ`</p> <ul style="list-style-type: none"> • բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը:

Աղյուսակ 3

Այսպիսով՝ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով աշխատանքային մի շարք իրավունքների սահմանադրաիրավական ամրագրումները հետընթաց են ապրել՝ վերացնելով անհատի առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի և նվազագույնից ոչ ցածր վարձատրության իրավունքները՝ որպես սուբյեկտիվ սահմանադրական իրավունքներ, և աշխատանքի անվտանգության, հանգստի ու վարձատրության նվազագույն երաշխիքների ապահովումը վերապահելով բացառապես օրենսդիր և գործադիր մարմիններին:

Աշխատանքային իրավունքների միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը

Աշխատանքային իրավունքներն իրենց ամրագրումն են գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում⁴⁹:

Աշխատանքային ոլորտի խնդիրների կարգավորմանն են ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետև՝ նաև ԱՄԿ) տարաբնույթ կոնվենցիաները⁵⁰:

Աշխատանքային իրավունքները լայն բովանդակությամբ ամրագրում են ստացել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 6 և 7) և ՎԵՄԽ-ում (մաս 2, հոդված 1):

Դաշնագրի 6-րդ հոդվածը սահմանում է աշխատանքի իրավունքը, որը ներառում է «յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ ունենալու հնարավորություն՝ վաստակելու իր սպրուտն այն աշխատանքով, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է»: Տվյալ հոդվածը նաև ամրագրում է պետության պարտավորությունը՝ «ձեռնարկելու հարկ եղած քայլերն այդ իրավունքի սպահովման համար»: Իրավունքի «լիակատար իրականացման նպատակով» պետությունների կողմից ձեռնարկվող քայլերն ընդգրկում են «պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման և վերապատրաստման ծրագրերն ու այնպիսի քաղաքականություններն ու տեխնիկաները, որոնք ուղղված են տնտեսական, սոցիալական և մշակութային անշեղ զարգացմանը և լրիվ ու արդյունավետ զբաղվածության սպահովմանն այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են մարդու հիմնական քաղաքական և տնտեսական ազատությունները»:

ՏՄՄԻԿ-ն աշխատանքի իրավունքի մասին իր թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությունում նշում է, որ «Դաշնագիրը մշակելիս Մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատել է լայն իմաստով աշխատանքի իրավունքի ճանաչման անհրաժեշտությունը՝ պարզ փիլիսոփայական սկզբունքների փոխարեն մասնավոր իրավական պարտավորություններ ամրագրելով»⁵¹: Ըստ այդմ՝ ՏՄՄԻԿ-ի 6-րդ հոդվածում աշխատանքի իրավունքը սահմանված է լայնորեն, և դրա բաղադրիչները սպառնիչ չեն, իսկ հաջորդող հոդվածներում սահմանվում են աշխատանքի իրավունքի մասնավոր երաշխիքներ:

ՏՄՄԻԿ-ի 7-րդ հոդվածում ամրագրված են անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների, հանգստի, նվազագույնից ոչ ցածր, արդար, համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության, աշխատանքում առաջխաղացման հավասար հնարավորությունների իրավունքները, իսկ 8-րդ հոդվածում՝ գործադուլի և արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքները:

49. Տե՛ս մասնավորապես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդված 23), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (հոդված 5), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (հոդված 11), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (հոդված 11) և այլն:

50. Մինչ օրս ՀՀ-ի կողմից վավերացվել են ԱՄԿ 29 կոնվենցիաներ: Տե՛ս https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORML-EX-PUB:11200:0::NO::P11200_COUNTRY_ID:102540:

51. Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No 18 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4415453b4.html>:

Մինևույն ժամանակ, ՏՄՄԻԿ-ի թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությունում նշվում է նաև, որ աշխատանքի իրավունքը չպետք է հասկանալ որպես յուրաքանչյուրի բացարձակ և առանց որևէ նախապայմանի զբաղվածություն ունենալու իրավունք: Սակայն պետությունն ունի պարտավորություն՝ ձեռնարկելու ՏՄՄԻԿ-ով ամրագրված իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերը, որոնց ցանկը սպառնիչ չէ՝ այդ տեսլականին հասնելու համար: ՏՄՄԻԿ-ը նշել է նաև, որ միջազգային գործիքների ինկորպորացիան և աշխատանքի իրավունքի ճանաչումն ազգային իրավական մակարդակում զգալիորեն ավելացնում են իրավական պաշտպանության միջոցների ծավալն ու արդյունավետությունը:

ՎԵՍԽ-ի 2-րդ մասի 1-ին հոդվածը սահմանում է աշխատանքի իրավունքը որպես լայն կոնցեպտ: Վավերացնելով Խարտիան՝ ՀՀ-ն ընտրել է այդ հոդվածը և իրեն պարտավորված է համարել վերջինով: Աշխատանքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են՝

1. զբաղվածության հնարավորինս բարձր և կայուն աստիճանի հասնելն ու պահպանելը՝ լիակատար զբաղվածություն ձեռք բերելու տեսլականով ճանաչել որպես պետության հիմնական նպատակներից և պարտականություններից մեկը,
2. արդյունավետորեն պաշտպանել իր ապրուստը վաստակելու աշխատողի իրավունքը նրա կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով,
3. ստեղծել կամ պահպանել աշխատանքի տեղավորման անվճար ծառայություններ բոլոր աշխատողների համար,
4. օժանդակել կամ ապահովել համապատասխան մասնագիտական վերապատրաստում և ուսուցում:

Խարտիայի հաջորդող հոդվածները վերաբերում են աշխատանքի արդար պայմանների, արդարացի վարձատրության, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքներին, սակայն այս հոդվածներով ՀՀ-ն իրեն չի պարտավորեցրել:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ միջազգային պարտավորությունները աշխատանքի իրավունքի մասով, կարող ենք արձանագրել, որ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով ՀՀ-ն ճանաչել է աշխատանքային անվտանգ, առողջ պայմանների, հանգստի և բավարար նվազագույն վարձատրության իրավունքները՝ որպես մարդու և քաղաքացու սուբյեկտիվ իրավունքներ, իսկ Խարտիայով ստանձնել է աշխատանքի իրավունքի և դրա բաղադրիչների ապահովումը, ներառյալ, որպես վերջնանպատակ, իր քաղաքացիների լիակատար զբաղվածության ապահովումը: Մինչդեռ ՀՀ Սահմանադրությամբ հանգստի, աշխատանքային պայմանների և նվազագույն վարձատրության իրավունքները երաշխավորված չեն որպես սուբյեկտիվ իրավունքներ, և նույնիսկ պետության քաղաքականության նպատակներում լիակատար զբաղվածության ապահովումն ամրագրված չէ:

Հետևաբար ՏՄՄԻԿ-ով և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ամրագրված աշխատանքային իրավունքների բովանդակությունն ու դրանց ապահովման համար պետության ստանձնած պարտավորությունների ծավալն ավելի լայն են, քան ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված աշխատանքային իրավունքների երաշխիքները:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրել առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի և նվազագույնից

ոչ ցածր վարձատրության իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունքներ, իսկ Սահմանադրության 86-րդ հոդվածում ամրագրված *բնակչության զբաղվածության խթանման նպատակը փոխարինել բնակչության լիակատար զբաղվածության ապահովման նպատակով*:

III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

Սոցիալական ապահովության իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 37-րդ հոդվածն ամրագրում էր յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 83-րդ հոդվածով սոցիալական ապահովության իրավունքը սուբյեկտիվ իրավունքից վերածվեց օրենսդրական երաշխիքի, այսինքն՝ այն կարող է կիրառվել միայն համապատասխան օրենսդրական ակտի հիման վրա և դրանում սահմանված կարգով: Միևնույն ժամանակ ամրագրվեց, որ օրենքին համապատասխան սոցիալական ապահովության իրավունքից օգտվելու դեպքերը ներառում են մայրությունը, բազմազավակությունը, հիվանդությունը, հաշմանդամությունը, աշխատավայրում դժբախտ պատահարները, խնամքի կարիք ունենալը, կերակրողին կորցնելը, ծերությունը, գործազրկությունը, աշխատանք կորցնելը և օրենքով սահմանված այլ դեպքեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ	
2005 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն	2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն
Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ ՝ <ul style="list-style-type: none"> • սոցիալական ապահովության իրավունքը: 	Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ ՝ <ul style="list-style-type: none"> • -----
	Ամրագրում են ստացել իբրև օրենսդրական երաշխիքներ ՝ <ul style="list-style-type: none"> • սոցիալական ապահովությունը (օրենքին համապատասխան, նշված դեպքերում):

Աղյուսակ 4

Այսպիսով՝ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով սոցիալական ապահովության իրավունքի սահմանադրաիրավական ամրագրումներն էական հետընթաց ապրեցին: Սոցիալական ապահովության իրավունքը՝ որպես սուբյեկտիվ սահմանադրական իրավունք, փաստացի վերացվեց, և սոցիալական ապահովության իրացումը վերապահվեց բացառապես օրենսդիր և գործադիր մարմիններին:

Սոցիալական ապահովության իրավունքի միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը

SUSԻԳ-ի 9-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության իրավունքը:

SUSԻԿ-ը սոցիալական ապահովության իրավունքը մեկնաբանել է իր թիվ 19 Ընդհանուր մեկնաբանությունում⁵²: Կոմիտեն նշում է, որ սոցիալական ապահովության իրավունքը մեծ կարևորություն ունի բոլոր մարդկանց արժանապատվության երաշխավորման տեսանկյունից, երբ նրանք բախվում են հանգամանքների, որոնք զրկում են նրանց SUSԻԳ-ով ամրագրված իրավունքների ամբողջական իրացման հնարավորությունից: Սոցիալական ապահովության իրավունքը ներառում է նպաստ ստանալու իրավունքը՝ կանխիկ կամ այլ եղանակով առանց խտրականության ապահովելու համար պաշտպանություն հետևյալ ոչ սպառիչ դեպքերում.

- իր աշխատանքով վաստակած եկամտի պակասի, հիվանդության, հաշմանդամության, մայրության, աշխատանքային վնասվածքի, գործազրկության, ծերության կամ ընտանիքի անդամի մահվան,
- առողջապահական համակարգից օգտվելու անհասանելիության,
- անբավարար ընտանեկան աջակցության, մասնավորապես երեխաների և կախյալ (խնամքի կարիք ունեցող) մեծահասակների:

Սոցիալական ապահովության իրավունքի հիմնական բաղադրիչներից են սոցիալական ռիսկերը: Սոցիալական ռիսկերը պահանջում են, որ սոցիալական ապահովության համակարգը գործի առնվազն հետևյալ 9 ոլորտներում՝ առողջապահություն, հիվանդություն, ծերություն, գործազրկություն, աշխատանքային վնասվածք, ընտանիքի կամ երեխայի աջակցություն, մայրություն, հաշմանդամություն և վերապրածներ ու ծնողական խնամքից զրկված երեխաներ:

Սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է նաև Խարտիայի 12-րդ հոդվածով, որի արդյունավետ կիրառման նպատակով ՀՀ-ն ստանձնել է հետևյալ պարտավորությունները.

- ստեղծել կամ պահպանել սոցիալական ապահովության համակարգը,
- փորձել աստիճանաբար բարձրացնել սոցիալական ապահովության համակարգի մակարդակը:

Սոցիալական ապահովության իրավունքի մասով ՀՀ ՄԴ-ն մինչև 2015 թ. ունի նախադեպային հարուստ փորձ⁵³ այս իրավունքի մեկնաբանման մասով, որում հղում է կատարել նաև միջազգային մարդու իրավունքների մարմինների մեկնաբանություններին՝ իրավունքի ավելի լայն մեկնաբանման համար:

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ սոցիալական ապահովության իրավունքի հիմքերը, որոնք ամրագրված են Սահմանադրության 83-րդ հոդվածով, ամբողջական չեն և չեն ներառում առողջապահական համակարգից օգտվելու իրավունքը:

Ուստի առաջարկում ենք սոցիալական ապահովության իրավունքն ամրագրել ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում որպես սուբյեկտիվ հիմնարար իրավունք և լրացնել սոցիալական ապահո-

52. *Տե՛ս* Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 19 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/47b17b5b39c.html>:

53. *Տե՛ս* տվյալ գլխին կից Հավելված 1-ը:

վության իրավունքից օգտվելու հիմքերը՝ ավելացնելով նաև առողջապահական համակարգից օգտվելու անհնարինությունը:

IV. ԲԱՎԱՐԱՐ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՐԱՎՈՒՆԵ

Բավարար կենսամակարդակի իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները

ՀՀ գործող Սահմանադրությամբ բավարար կենսամակարդակի իրավունքն ամրագրված է:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը (հոդված 34) ամրագրում էր տվյալ երաշխիքը հետևյալ ձևակերպմամբ. «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»: Բացի այդ՝ Սահմանադրության 48-րդ հոդվածով տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից էր սահմանվում «խթանել բնակարանային շինությունը և նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը»:

2015 թ. սահմանադրական փոփոխություններով տվյալ սահմանադրական երաշխիքները վերացվեցին:

ԲԱՎԱՐԱՐ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՐԱՎՈՒՆԵ	
2005 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն	2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն
<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ՝</p> <ul style="list-style-type: none"> բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ՝</p> <ul style="list-style-type: none"> -----
	<p>Ամրագրում են ստացել իբրև օրենսդրական երաշխիքներ՝</p> <ul style="list-style-type: none"> արժանապատիվ գոյությունը (կարիքավոր և տարեց մարդը, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք):
<p>Ամրագրում են ստացել իբրև պետության խնդիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը, ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև քաղաքականության նպատակներ՝</p> <ul style="list-style-type: none"> բնակարանային շինարարության խթանումը:

Այսպիսով՝ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով բավարար կենսամակարդակի իրավունքը վերացվեց, ինչը կարող է գնահատվել որպես իրավունքի էական հետընթաց:

Բավարար կենսամակարդակի իրավունքի միջազգային իրավական բովանդակությունը և սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը

Բավարար կենսամակարդակի իրավունքը սոցիալական պաշտպանության կարևոր երաշխիքներից է: Տվյալ իրավունքն ամրագրված է միջազգային մի շարք գործիքներում⁵⁴:

Մասնավորապես Դաշնագրի հոդված 11-ով ամրագրված է պետության պարտավորությունը՝ ապահովելու յուրաքանչյուրի՝ իր ու իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Տվյալ հոդվածն առավել մանրամասն մեկնաբանված է Դաշնագրի կոմիտեի թիվ 12 (բավարար հագուստի իրավունք), թիվ 4 և 7 (բավարար բնակարանի իրավունք), թիվ 5, 6, 14 (բավարար հագուստի իրավունքի մասնավոր դրսևորումներ) Ընդհանուր մեկնաբանությունների շրջանակներում: Բավարար բնակարանային պայմանների իրավունքի շրջանակը մեկնաբանված է ՏՄՄԻԿ-ի թիվ 4 Ընդհանուր մեկնաբանությունում, ըստ որի՝ տվյալ իրավունքը ենթադրում է անձին ոչ թե ապահովում գուտ բնակելի տարածքով, այլ այնպիսի բնակարանային պայմաններով, որոնք համապատասխանում են բնակարանային պայմանների «բավարարության» մի շարք չափանիշներին⁵⁵:

Բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքն ամրագրված է նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով (հոդվածներ 31, 16, 19.4):

Բավարար կենսամակարդակի և բավարար բնակարանային պայմանների իրավունքի սահմանադրական երաշխիքներ են տրված մի շարք պետությունների, օրինակ՝ Հնդկաստանի, Բելգիայի, Հարավային Աֆրիկայի, Էկվադորի, Իրանի, Մեքսիկայի, Պորտուգալիայի, Պերուի, Ռուսաստանի, Իսպանիայի սահմանադրություններով⁵⁶:

Այսպիսով՝ բավարար կենսամակարդակի իրավունքը, լինելով մարդու հիմնարար իրավունքներից մեկը, որն ամրագրված է նաև ՀՀ-ի վավերացրած մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, չի ամրագրվել ՀՀ Սահմանադրությունում:

Ուստի առաջարկում ենք Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրել յուրաքանչյուրի՝ բավարար կենսամակարդակի, ներառյալ բավարար բնակարանային պայմանների իրավունքը որպես սուբյեկտիվ իրավունք:

54. *Տե՛ս* Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (հոդված 25.1), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդված 11), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով (հոդված 27), Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով (հոդված 14), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով (հոդված 28) և այլ միջազգային պայմանագրերով:

55. *Տե՛ս* Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 4 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/47a7079a1.html>:

56. Հետազոտության համար օգտագործվել է Codices համակարգը, <http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm>:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում

V. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԸ

Կրթության իրավունքի ՀՀ սահմանադրաիրավական ամրագրումները և սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը

Կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածում:

«1. Յուրաքանչյուր որ ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր որ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցույթային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունները օրենքով սահմանված շրջանակում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը»:

Ի տարբերություն վերևում քննարկված սոցիալ-տնտեսական և մշակութային այլ իրավունքների՝ կրթության իրավունքի ամրագրումը պահպանվել է Սահմանադրության 2-րդ գլխում, և այն սուբյեկտիվ սահմանադրական իրավունք է:

Միևնույն ժամանակ, Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի որոշ երաշխիքներ բավականին թույլ են⁵⁷, քանի որ դրանցում սահմանադրաիրավական հստակ ամրագրումների փոխարեն իրավունքի ծավալը պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով, ինչը դրանց սահմանադրական երաշխիքներից վերածում է օրենսդրական երաշխիքների: Նման երաշխիքների թվում են.

- պարտադիր կրթության երաշխիքը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը,
- մրցույթային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունքը:

Վերոնշյալ 3 երաշխիքներն էլ ամրագրված են Սահմանադրության 38-րդ հոդվածում, սակայն այս ձևակերպումները դրանց գոյությունն ու ծավալը թողնում են օրենսդիրի հայեցողությանը:

Այսպես՝ մրցույթային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունքը Սահմանադրությունը պայմանավորում է օրենքում սահմանված կարգով և դեպքերով, ինչը փաստացի նշանակում է, որ բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք քաղաքացին ունի միայն օրենսդիրի սահմանած դեպքերում: Այսպիսի մեկնաբանություն է տվել նաև ՀՀ ՄԳ-ն 22.02.2013 թվականի իր ՄԳՈ-1075 որոշմամբ՝ անդրադառնալով անվճար բարձրագույն կրթության իրավունքին՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության ձևակերպմամբ:

57. Սահմանադրաիրավական ամրագրում չունի նաև ներառական կրթության երաշխիքը, ինչին առավել մանրամասն անդրադառնում ենք սույն հետազոտության 4-րդ գլխում:

Նույն կերպ, գործող սահմանադրաիրավական կարգավորումների համաձայն, բարձրագույն ուսումնական հաստատությունները օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը: Այս ձևակերպումը ևս ենթադրում է, որ բուհերի ինքնակառավարման իրավունքը, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը, գոյություն ունեն միայն օրենսդիրի սահմանած շրջանակներում, այսինքն՝ սահմանադիրը օրենսդիրին տալիս է իրավունքի սահմանափակման լիակատար հայեցողություն: Եթե նման սահմանափակման հնարավորությունը որոշ չափով կարող է արդարացված լինել անվճար բարձրագույն կրթության ապահովման երաշխիքի առումով, որտեղ անվճար կրթության ապահովումը ենթադրում է մեծածավալ ֆինանսական ռեսուրսների պարբերաբար ներդրում պետության կողմից, ապա բուհերի ինքնակառավարման և հատկապես ակադեմիական ու հետազոտական ազատության սահմանափակումների անորոշ ծավալը և սահմանափակման հիմքերի բացակայությունը սահմանադրական հողվածում համարում ենք խնդրահարույց:

Ի տարբերություն վերոնշյալ 2 երաշխիքների, որոնք նույնանման ձևակերպումներ են ունեցել նաև 2005 թ. սահմանադրական կարգավորումներով, պարտադիր կրթության երաշխիքը հետընթաց է ապրել 2015 թ. փոփոխություններով: Այսպես, եթե 2005 թ. Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն *հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր էր՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ կարող էր սահմանվել օրենքով*, ապա 2015 թ. փոփոխություններով ներկայումս *պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Այսպիսով՝ պարտադիր կրթության որևէ մակարդակ, այդ թվում՝ նույնիսկ հիմնական կրթության պարտադիր բնույթը, սահմանադրաիրավական ամրագրում չունի:*

Հիմնական կրթության՝ պարտադիր լինելու երաշխիքն ամրագրված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 1-ա և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ա կետերով:

Թեպետ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է տարրական և հիմնական կրթության պարտադիր լինելը, տվյալ երաշխիքի՝ սահմանադրական մակարդակում ամրագրումը կարևոր է ոչ միայն կրթության, այլև մի շարք հատվող ոլորտային օրենսդրությունների և քաղաքականությունների կարգավորման համար՝ հասցեագրելով Հայաստանում ամկա այնպիսի էական խնդիրներ, ինչպիսիք են վաղ ամուսնությունները, մանկական աշխատանքը և բոլոր այն խնդիրները, որոնք հանգեցնում են տարբեր խմբերի երեխաների՝ կրթությունից դուրս մնալուն:

Այսպիսով, թեև վերոնշյալ երաշխիքները տեղ են գտել Սահմանադրության 2-րդ գլխում, և դրանց վրա տարածվում են օրենսդիրի հայեցողության սահմանափակման սկզբունքները, իսկ դրանց հիման վրա ընդունված օրենքներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը այս երաշխիքների համապատասխանության տեսանկյունից կարող են քննվել ՄԳ-ում, սակայն դրանք իրենց ձևակերպումներով կրթական իրավունքների սահմանափակման լայնածավալ հնարավորություններ են տալիս օրենսդիրին:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք Սահմանադրության 38-րդ հոդվածում.

- **վերականգնել հիմնական կրթության պարտադիր լինելու երաշխիքը,**
- **ամրագրել բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը և սահմանադրորեն ամրագրել այդ իրավունքի սահմանափակման հիմքերը:**

VI. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՊԻՏԱԿԱՆ ԼՎԱՃՈՒՄՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մշակութային կյանքին մասնակցելու և գիտական նվաճումներից օգտվելու իրավունքների չչ սահմանադրաիրավական ամրագրումները

2005 թ. Սահմանադրության 40-րդ հոդվածն ամրագրում էր. «Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»:

2015 թ. սահմանադրական փոփոխություններով վերոնշյալ հոդվածով ամրագրված իրավունքների մի մասը դուրս է մնացել սահմանադրական ամրագրումներից. գիտության նվաճումներից օգտվելու և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները՝ որպես սուբյեկտիվ իրավունքներ, համապատասխան ամրագրում չեն ստացել:

Գործող Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը»:

Սահմանադրության 43-րդ հոդվածում ամրագրվել է *յուրաքանչյուրի՝ գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատությունը*:

Մշակութային կյանքին մասնակցության և գիտության վերաբերյալ որոշակի դրույթներ տեղ են գտել նաև պետության քաղաքականության հիմնական նպատակները սահմանող 86-րդ հոդվածում: Մասնավորապես, տվյալ հոդվածի համաձայն, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից են նաև *մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության խթանումը և հիմնարար և կիրառական գիտության զարգացումը*:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՊԻՏԱԿԱՆ ԼՎԱՃՈՒՄՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	
2005 թ. փոփոխություններով չչ Սահմանադրություն	2015 թ. փոփոխություններով չչ Սահմանադրություն
<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ՝</p> <ul style="list-style-type: none"> • գիտության նվաճումներից օգտվելու իրավունքը, • հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը: 	<p>Ամրագրում են ստացել իբրև իրավունքներ՝</p> <ul style="list-style-type: none"> • -----
	<p>Ամրագրում են ստացել իբրև քաղաքականության նպատակներ՝</p> <ul style="list-style-type: none"> • քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը:

Վերոնշյալ հոդվածներն ամրագրում են միայն պետության պարտավորությունը՝ զարգացնելու մշակույթը և գիտությունը, և չեն կարող համարվել գիտության նվաճումներից օգտվելու և մշակութային կյանքին մասնակցելու սուբյեկտիվ իրավունքների բովանդակության արտացոլում:

Սահմանադրական վերոնշյալ դրույթների բովանդակությունը, ըստ այդմ, ցույց է տալիս, որ յուրաքանչյուրի՝ մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու իրավունքների սահմանադրական ամրագրման առումով նախորդ սահմանադրական փոփոխություններով տեղի է ունեցել հետընթաց:

Մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու իրավունքների միջազգային իրավական ամրագրումներն ու սահմանադրական փոփոխության անհրաժեշտությունը

Յուրաքանչյուրի՝ մշակութային կյանքին մասնակցելու և գիտական առաջընթացի ու դրա կիրառման բարիքներից օգտվելու իրավունքն ամրագրված է ՏՄՄԻԴ-ի 15-րդ հոդվածի 1-ա և 1-բ կետերում⁵⁸:

Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը ամրագրված է նաև ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք այլ միջազգային պայմանագրերում, ինչպիսիք են ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (31-րդ հոդված), ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (30-րդ հոդված), ՄԱԿ-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (5-րդ հոդված), ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (13-րդ հոդված):

ՏՄՄԻԿ-ն իր թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությանում պետություններին հորդորում է երաշխավորել ՏՄՄԻԴ-ի 15-րդ հոդվածի 1-ա կետով նախատեսված իրավունքի իրացումն առանց խտրականության, ճանաչել մշակութային պրակտիկան և գերծ մնալ դրա իրացմանն ու զարգացմանը միջամտելուց⁵⁹:

ՏՄՄԻԿ-ի թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ պետք է ելնել այն հիմնավոր կանխավարկածից, որ գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունքին առնչվող հետընթաց միջոցներն անընդունելի են: Բացառիկ հանգամանքներում, երբ հետընթաց միջոցներն անխուսափելի են, պետությունները պետք է երաշխավորեն, որ այդ միջոցներն անհրաժեշտ են և համաչափ⁶⁰:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրով ստանձնված ՀՀ միջազգային պարտավորության տեսանկյունից սահմանադրական հետընթաց իրավական կարգավորումը խնդրահարույց է:

2015 թ. սահմանադրական փոփոխություններով մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու իրավունքների առումով կատարված փոփոխությունների խնդրահարույց բնույթը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը դադարել է սուբյեկտիվ իրավունք լինելուց: Այն ամրագրվել է որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ (86-րդ

58. «1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը. ա) մասնակցելու մշակութային կյանքին, բ) օգտվելու գիտական առաջընթացի և դրա կիրառման բարիքներից, գ) օգտվելու այն բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ»:

59. Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 21 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4ed35bae2.html>:

60. Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 25 (անգլերեն), https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=9&DocTypeID=11:

հողված, 12-րդ կետ): Ընդ որում՝ սահմանադիրը որպես պետական քաղաքականության նպատակ ամրագրել է մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը (86-րդ հոդված): Մինչդեռ մշակութային կյանքին մասնակցությունը միայն առանձին սոցիալական խմբի՝ երիտասարդների համար որպես պետության քաղաքականության նպատակ դիտարկելը խնդրահարույց է ընտրանքային մոտեցման տեսանկյունից, քանի որ պարզ չէ, թե ինչու է այդ նպատակը սահմանվել միայն երիտասարդների համար և չի ընդգրկել, օրինակ, ծերերին, երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց և վերջապես չի սահմանվել հասարակության բոլոր անդամների համար: Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքն ամրագրված է հատուկ համատեքստ ունեցող միջազգային պայմանագրերում, որոնք վավերացվել են ՀՀ-ի կողմից, ինչպես Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան: Բոլոր դեպքերում 86-րդ հոդվածում տեղ գտած սահմանադրական այս ձևակերպումը չի ստեղծում մշակութային կյանքի մասնակցության սուբյեկտիվ իրավունք:

2. Գիտության նվաճումներից օգտվելու իրավունքը ընդհանրապես դուրս է մնացել սահմանադրական ամրագրումներից: Ինչպես պետության քաղաքականության նպատակներում հիմնարար և կիրառական գիտության զարգացման ամրագրումը (86-րդ հոդված, կետ 14), այնպես էլ պետության՝ գիտությունը զարգացնելու հանձնառությունը (15-րդ հոդված) չեն կարող դիտարկվել որպես գիտության նվաճումներից օգտվելու սուբյեկտիվ իրավունքի բովանդակային արտացոլում:

Այսպիսով՝ սահմանադրական փոփոխություններով մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու իրավունքները՝ որպես սուբյեկտիվ իրավունքներ, ամրագրում չեն ստացել: Հետևաբար անհրաժեշտ է վերականգնել 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված սահմանադրական երաշխիքները՝ համապատասխանեցնելով դրանք ՏՄՄԻԴ-ի ձևակերպմանը:

Ուստի առաջարկում ենք Սահմանադրության 2-րդ գլխում ներառել համապատասխան հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Յուրաքանչյուր ոք ունի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի գիտական առաջընթացի ու դրա կիրառման բարիքներից օգտվելու իրավունք»:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ (Գլուխ 1, Բաժին 1.2)

Տվյալ բաժնում ներկայացված փաստարկներով և սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության երաշխիքները բարելավելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկում ենք.

1. Սահմանադրության 2-րդ գլխում վերականգնել բժշկական սպասարկում և օգնություն ստանալու իրավունքը որպես անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունք:
2. Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրել առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի և նվազագույնից ոչ ցածր վարձատրության իրավունքները որպես անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունքներ, իսկ Սահմանադրության 86-րդ հոդվածում ամրագրված *բնակչության զբաղվածության խթանման նպատակը* փոխարինել *բնակչության*

լիակատար զբաղվածության ապահովման նպատակով:

3. Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրել սոցիալական ապահովության իրավունքը որպես սուբյեկտիվ իրավունք և լրացնել սոցիալական ապահովության իրավունքից օգտվելու հիմքերը՝ ավելացնելով նաև առողջապահական համակարգից օգտվելու անհնարինությունը:
4. Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրել յուրաքանչյուրի՝ բավարար կենսամակարդակի, ներառյալ բավարար բնակարանային պայմանների իրավունքը որպես սուբյեկտիվ իրավունք:
5. Սահմանադրության 38-րդ հոդվածում վերականգնել հիմնական կրթության պարտադիր լինելու երաշխիքը և ամրագրել բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը և սահմանադրորեն ամրագրել այդ իրավունքի սահմանափակման հիմքերը:
6. Սահմանադրության 2-րդ գլխում ներառել համապատասխան հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Յուրաքանչյուր որ ունի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Յուրաքանչյուր որ ունի գիտական առաջընթացի ու դրա կիրառման բարիքներից օգտվելու իրավունք»:



ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատական փորձը սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ

Սահմանադրական դատարանում սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ ընդունված իրավակարգավորումների վիճարկման պրակտիկան գործել է մինչև 2018 թվականը, երբ 2015 թ. սահմանադրական փոփոխություններն ամբողջությամբ ուժի մեջ մտան: Սահմանադրական դատարանի կողմից սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ իրավադրույթների վիճարկման գործերով կայացրած որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄԳ-ում սոցիալ-տնտեսական իրավունքների վիճարկելիության առումով տարիներ շարունակ ունեցել ենք այդ իրավունքների պաշտպանության բավականին դրական փորձ:

Սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությանն ուղղված դիմումներ են ներկայացվել ինչպես վերացական սահմանադրական վերահսկողության (Մարդու իրավունքների պաշտպանի, պատգամավորների 1/5-ի դիմումների հիման վրա), այնպես էլ կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում: Դիմումատուները մեծ մասամբ եղել են ֆիզիկական անձինք:

Սահմանադրական դատարանում քննության առարկա են դարձել այնպիսի օրենսդրական ակտերի դրույթներ, ինչպիսիք են «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը (ՄԳՈ-649), «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (ՄԳՈ-731, ՄԳՈ-1061, ՄԳՈ-1325), ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (ՄԳՈ-792, ՄԳՈ-902, ՄԳՈ-991, ՄԳՈ-677), «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը (ՄԳՈ-1148), «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (ՄԳՈ-1142, ՄԳՈ-1224) և այլն:

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը վերաբերել են այնպիսի սոցիալ-տնտեսական իրավունքների, ինչպիսիք են անձի բժշկական օգնության և սպասարկման իրավունքը, սոցիալական ապահովության իրավունքը, արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը և այլն:

Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչվել սոցիալական իրավունքներ կարգավորող մի շարք օրենսդրական դրույթներ⁶¹, ինչի արդյունքում անձը Սահմանադրական դատարանում արդյունավետ կերպով իրացրել է դատական պաշտպանության իր իրավունքը և վերականգնել իր խախտված իրավունքը: Այդ որոշումների հիման վրա նաև օրենսդիր մարմնի կողմից կատարվել են փոփոխություններ համապատասխան օրենսդրական ակտերում:

Մասնավորապես «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի սահմանադրականության վիճարկման գործով Սահմանադրական դատարանը քննել է, թե արդյոք աշխատավարձ, կենսաթոշակ, նպաստ, դրամական փոխանցում ստանալիս սոցիալական ապահովության քարտի առկայությունը որպես պարտադիր պայման սահմանելը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: ՀՀ Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ օրենքը մի շարք քաղաքացիների դրել է երկրնտրանքի առջև՝ զրկվել սոցիալական իրավունքների իրականացումից կամ համոզմունք ունենալու և դրան հավատարիմ մնալու իրավունքից և վիճարկվող նորմը ՀՀ Սահմանադրության 31-րդ (սեփականության իրավունք), 32-րդ (2-րդ մաս) (աշխատանքի և վարձատրության իրավունք) եւ 37-րդ հոդվածներով (սոցիալական ապահովության իրավունք) ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 6-րդ (1-ին, 2-րդ մասեր), 42-րդ, 43-րդ եւ 48-րդ (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր: Բացի այդ՝ Սահմանադրական դատարանն իր որոշման ուժը տարածել է դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա՝ այդպիսով հնարավորություն տալով բազմաթիվ քաղաքացիների⁶² ստանալ իրենց չստացած կենսաթոշակներն ու նպաստները մինչև ՄԴ դիմելու ժամանակահատվածի համար:

ՄԴՈ-1325 որոշման շրջանակում քննարկելով կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման վերաբերյալ դրույթի սահմանադրականությունը՝ այն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ճանաչել է ՀՀ Սահմանադրության 3, 60, 61, 78, 79 և 83-րդ հոդվածներին հակասող և անվավեր: Սույն որոշման հիմքում դրվել է այն, որ նման իրավակարգավորումը, երբ հաշվի չի առնվում անձին կենսաթոշակ չվճարելը՝ առանց նրա կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման կոնկրետ հանգամանքները հաշվի առնելու, իրավաչափ չէ և չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջներին: Նման իրավակարգավորման պարագայում անձը զրկվում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հարցը դատական կարգով բողոքարկելու, ինչպես նաև իր սեփականության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունից:

61. *Տե՛ս* ՄԴՈ- 649, ՄԴՈ- 731, ՄԴՈ- 792, ՄԴՈ- 902, ՄԴՈ- 966, ՄԴՈ- 1142, ՄԴՈ- 1424:

62. Համաձայն ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տվյալների՝ միայն հիմնադրամի համակարգում հաշվառված 530246 կենսաթոշակառուներից կատեգորիա էր 1317-ին կենսաթոշակի վճարումը՝ սոցիալական քարտ չունենալու պատճառով:

ՀՀ Սահմանադրական դատարանում սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ օրենսդրական նորմերի սահմանադրականության վիճարկման փորձի (2006-2018 թթ.) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց դատական պաշտպանությունը Սահմանադրական դատարանում ձևավորել է բավականին առաջադիմական և նշանակալի սահմանադրական նախադեպային իրավունք:

Վերոնշյալ որոշումների շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումներում ՄԴ-ի կողմից կատարվել են կարևոր շեշտադրումներ, և տրվել են առանցքային նշանակություն ունեցող մեկնաբանություններ, մասնավորապես.

- Արձանագրվել են սոցիալական իրավունքի (սոցիալական ապահովության իրավունքի) անմիջական գործողությունը և պետության սահմանափակվածությունն այդ իրավունքով (ՄԴՈ-1142):
- Սահմանադրական իրավակարգավորման մեկնաբանման արդյունքում հստակեցվել է, որ օրենսդիրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ապահովության ծավալի՝ քանականական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը (ՄԴՈ-1142⁶³):
- ՀՀ Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ սոցիալական իրավունքների վերաբերյալ կարգավորումներ սահմանելիս օրենսդիրի հայեցողությունը սահմանափակված է, մասնավորապես համաչափության և համամասնականության, լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության հիմնարար սկզբունքներով և պայմանավորված է մի կողմից՝ պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով (ՄԴՈ-1142, ՄԴՈ-723)⁶⁴:
- Սահմանադրական դատարանը մեկնաբանել է կոնկրետ սոցիալական իրավունքն ու ցույց տվել դրա բովանդակային նշանակությունը՝ մասնավորապես նշելով, որ «Սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող»: «Ակնհայտ է, որ սոցիալական ապահովության խնդիրներին տարբերակված լուծում պետք է տրվի, եւ դրանք չեն կարող տարրալուծվել սոցիալական ապահովագրության ու սոցիալական աջակցության խնդիրներում» (ՄԴՈ-1142):
- Սահմանադրական դատարանը իրավական գնահատական է տվել ինչպես սոցիալական իրավունքի (կոնկրետ դեպքում՝ բժշկական օգնության ու սպասարկման իրավունքի) իրացման ապահովման, այնպես էլ այդ իրավունքի պահպանման ծրագրեր եւ արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ապահովելու պետության պարտականության՝ որպես սահմանադրաիրավական նպատակի իրացվելիության խնդրին (ՄԴՈ-913):
- Սահմանադրական դատարանը դիտարկել է սոցիալական իրավունքի իրացումը ոչ խտրական հիմունքների տեսանկյունից և վիճարկվող նորմերը համարել է աշխատանքի ազատ և անխտրական ընտրության ու սոցիալական ապահովության անձի իրավունքների միատեղ իրացմանը խոչընդոտող, ինչպես նաև աշխատանքի իրավունքի իրացումն անձի սոցիալական իրավունքի իրացման փաստով պայմանավորող ոչ իրավաչափ նորմեր, որոնք իմաստագրվում են Սահմանադրության 32-րդ և 37-րդ հոդվածներով երաշխավորված ան-

63. *Տե՛ս* նույն տեղում:
64. *Տե՛ս* նույն տեղում:

ձի իրավունքների բովանդակությունն ու սահմանափակում նրա հիմնական իրավունքները և ազատությունները (ՄԴՈ-792): Սոցիալական իրավունքների անխտրական իրացմանը Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև իր ՄԴՈ-731 որոշման մեջ:

- Սահմանադրական դատարանը վիճարկվող նորմերը գնահատել է սոցիալական պետության հիմնական խնդիրների տեսանկյունից, որոնք ստացել են համապատասխան սահմանադրական ամրագրում: Մասնավորապես իր ՄԴՈ-649 որոշման մեջ⁶⁵ Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ «Նկատի ունենալով, որ օրենքի 11-րդ հոդվածի հատկապես 2-րդ մասի գործողության հետևանքով նյութական դժվարին վիճակում հայտնվածների զգալի մասը թոշակատուներ են, այդ նորմերը խոչընդոտում են Սահմանադրության 48-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջի կատարումը, որով սոցիալական պետության հիմնական խնդիրներից է հռչակվել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը»:
- Սահմանադրական դատարանը իրավական գնահատական է տվել սոցիալական իրավունքների իրացման հետ կապված կարգավորման հետադարձ ուժին՝ մասնավորապես նշելով, որ «Կատարված աշխատանքի վարձատրությունից զրկելը, նախկինում սոցիալական ապահովության պարտադիր վճարների կատարումով վաստակած կենսաթոշակի վճարման կասեցումը, ինչպես նաև մինչ օրենքի ընդունումը կայացած աշխատանքային պայմանագրերով չնախատեսված նոր պայման ավելացնելու պարտադրանքը նշանակում է, հակառակ սահմանադրական այս պահանջին, հետադարձ ուժ տալ օրենքին: Օրենքի հետադարձ գործողությունն առավել ցայտուն է այն բազմաթիվ դեպքերում, երբ աշխատավարձի կամ թոշակի վճարումների ուշացման հետևանքով քաղաքացին զրկվել է օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող տարվա կենսաթոշակից կամ աշխատավարձից»⁶⁶:

65. *Տե՛ս* որոշման 4-րդ կետը:

66. *Տե՛ս* նույն տեղում:

Շրջակա միջավայրի իրավունքների սահմանադրական երաշխիքների վերանայում



Շրջակա միջավայրի իրավունքները միավորում են մի շարք խաչվող սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավունքներ, մասնավորապես՝ առողջության իրավունքի, սեփականության իրավունքի, տեղեկատվության ազատության իրավունքի, բավարար կենսամակարդակի և այլ իրավունքների բնապահպանական ասպեկտները, և արժանապատիվ կյանքի ապահովման անբաժանելի մաս են:

ՀՀ գործող Սահմանադրությունը պարունակում է նորմեր, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի խթանման պետության պարտավորություններին և շրջակա միջավայրի պաշտպանության անհատների պարտավորություններին:

Մասնավորապես Սահմանադրության 12-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն սպազա սերունդների առջև: 2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»:

Կարևոր է արձանագրել, որ մի շարք երաշխիքներ, որոնք ամրագրված էին 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ, 2015 թ. փոփոխություններով վերացվել են կամ փոփոխվել: Մասնավորապես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 10-րդ հոդվածն ամրագրում էր պետության պարտավորությունը՝ ապահովելու շրջակա միջավայրի պահպանությունը, վերականգնումը և բնական պաշարների ողջամիտ օգտագործումը: 31-րդ հոդվածն ամրագրում էր, որ սեփականության իրավունքի իրականացումը վնաս չպետք է պատճառի շրջակա միջավայրին: 33.2-րդ հոդվածն ամրագրում էր յուրաքանչյուրի իրավունքը՝ ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում և պարտավորությունը՝ անձամբ և այլոց հետ համատեղ պահպանելու և բարելավելու շրջակա միջավայրը: Նույն հոդվածը նաև սահմանում էր պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Այսպիսով՝ 2005 թ. Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրաիրավական մի շարք երաշխիքներ 2015 թ. Սահմանադրության տեքստում տեղ չգտան, ինչի արդյունքում շրջակա միջավայրի իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների առումով արձանագրվեց հետընթաց⁶⁷:

67. Հետընթացն արձանագրում են նաև ոլորտի մասնագետները, առավել մանրամասն տե՛ս https://www.ecolur.org/hy/news/electionspoliticsecology/---:/7694/?fbclid=IwAR3uynJxZ6CC9cH_jz19iQvNQ6sH4dopVNdJnZup0be492KOPmVJN8Rvngk:



ԲԱԺԻՆ 2.1

Շրջակա միջավայրի իրավունքների սահմանադրաիրավական կարգավորման ժամանակակից միտումները և միջազգային իրավական նորմերը

ՀՀ-ի կողմից վավերացվել են մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք այս կամ այն չափով վերաբերում են շրջակա միջավայրի պաշտպանությանը: Շրջակա միջավայրն ուղղակիորեն նշվում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի՝ առողջության իրավունքն ամրագրող հոդվածում (հոդված 12.2):

Շրջակա միջավայրի պաշտպանության՝ միջազգային պարտավորություններ առաջացնող միջազգային փաստաթղթերի շարքում են Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին ՅՈՒՆԵՍԿՈ-ի կոնվենցիան⁶⁸ (1972 թ.), Օգոնային շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիան⁶⁹ (1985 թ.), Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի կոնվենցիան⁷⁰ (1987 թ.), Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան⁷¹ (1992 թ.), Կենսաբազմազանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (1992 թ.), «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (Օրիոուսի կոնվենցիա, 1998 թ.)⁷² և այլն:

Անվտանգ, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի իրացման կապակցությամբ մարդու իրավունքների պարտավորությունների հարցերով ՄԱԿ-ի անկախ փորձագետն իր 2012 թ. զեկույցում նշել է, որ մարդու իրավունքների և շրջակա միջավայրի միջև հարաբերությունների «հստակ հաստատված» կողմերից մեկն այն է, որ «շրջակա միջավայրի վատթարացումը կարող է ունենալ և ունենում է բացասական ազդեցություն մարդու իրավունքների լայն ցանկի նկատմամբ»⁷³: Այդպիսի իրավունքների ցանկում են կյանքի, առողջության պահպանման, պատշաճ բնակարանի, սննդի և այլ իրավունքներ: Այս միջազգային փաստաթղթերից բացի՝ ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի շրջանակում ձևավորվել է նաև շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ «փափուկ» իրավունքի (*soft law*) աղբյուրների լայն ցանկ⁷⁴, որոնք իրենց համադրության մեջ վերհանել են շրջակա միջավայրին առնչվող պետությունների պարտավորությունների հիմնական շրջանակը՝

- ընդունել և կիրառել իրավական կարգավորումներ՝ պաշտպանելու համար շրջակա միջավայրը միջամտությունից և ապահովելու համար մարդու՝ առողջ շրջակա միջավայրի իրավունքի իրացումը,
- կարգավորել մասնավոր ոլորտը՝ նվազեցնելու համար շրջակա միջավայրին հասցվող վնասը:

68. ՀՀ-ի համար ուժի մեջ է 1993 թ-ից, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=37370>:

69. ՀՀ-ի համար ուժի մեջ է 1999 թ-ից, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76866>:

70. ՀՀ-ի համար ուժի մեջ է 1999 թ-ից, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76867>:

71. ՀՀ-ի համար ուժի մեջ է 1994 թ-ից, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77806>:

72. ՀՀ-ի համար ուժի մեջ է 2001 թ-ից, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=77849>:

73. *Տե՛ս* Անվտանգ, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի իրացման կապակցությամբ մարդու իրավունքների պարտավորությունների հարցերով ՄԱԿ-ի անկախ փորձագետի նախնական զեկույց, A/HRC/22/43, § 34 (անգլերեն), https://www.ohchr.org/Documents/HRBodies/HRCouncil/RegularSession/Session22/A-HRC-22-43_en.pdf:

74. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի նշանակած՝ Անվտանգ, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի իրացման կապակցությամբ մարդու իրավունքների պարտավորությունների հարցերով անկախ փորձագետի և Շրջակա միջավայրի հարցերով հատուկ զեկույցողի զեկույցները, Պատշաճ բնակարանի իրավունքի հատուկ զեկույցողը, Ծայրահեղ աղքատության և մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկույցողը, Սննդի իրավունքի մասով հատուկ զեկույցողը, Յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և մտավոր առողջության բարձրագույն հասանելի չափորոշիչներից օգտվելու իրավունքի հատուկ զեկույցողը, Իրավապաշտպանների իրավիճակի մասին հատուկ զեկույցողի զեկույցները:

Հատկապես կարևոր է պետության պարտավորությունը՝ բնակչությանը պաշտպանելու մասնավոր ընկերությունների կողմից շրջակա միջավայրին հասցված վնասից, և հենց այս առումով ուժեղ սահմանադրական երաշխիքներ են անհրաժեշտ: Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների կոմիտեն նշել է, որ «կորպորացիաների գործողությունները բացասաբար կարող են անդրադարձնալ կոնվենցիայով ամրագրված իրավունքների իրացման վրա», ներառյալ շրջակա միջավայրի նկատմամբ վնասակար ազդեցությունը, և պնդել է, որ «պետությունների պարտավորությունն է սպասիովել, որ կոնվենցիայով ամրագրված տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքները պաշտպանվեն, և իրավատերերը պաշտպանված լինեն կորպորատիվ գործողություններից»⁷⁵:

Տարբեր երկրներում առկա շրջակա միջավայրին առնչվող սահմանադրական կարգավորումները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝

- պետության պարտավորություններ՝ ուղղված շրջակա միջավայրի պաշտպանությանը,
- շրջակա միջավայրի նյութական իրավունքներ, այն է՝ անվտանգ, մաքուր շրջակա միջավայրի իրավունք,
- շրջակա միջավայրի ընթացակարգային իրավունքներ՝ շրջակա միջավայրի մասին տեղեկություն ստանալու իրավունք,
- շրջակա միջավայրի պաշտպանության անհատական պարտավորություններ սահմանող նորմեր,
- այլ մասնավոր կարգավորումներ՝ տվյալ պետության առանձնահատկությունները հաշվի առնելով:

Ներկայումս շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված սահմանադրական դրույթներ⁷⁶ առկա են ավելի քան 90 երկրների ազգային սահմանադրություններում, ներառյալ Հունաստանի, Պորտուգալիայի, Իսպանիայի, Նորվեգիայի, Բրազիլիայի, Չիլիի, Արգենտինայի, Աֆրիկայի և Ասիայի երկրների մեծամասնության սահմանադրությունները⁷⁷: Այս համատեքստում 2015 թ. ՀՀ Սահմանադրությունում առկա է միայն մասնավոր կարգավորում պետության պարտավորությունների վերաբերյալ՝ շրջակա միջավայրի խթանման մասով:

Այսպիսով՝ շրջակա միջավայրի իրավունքի վերաբերյալ այլ երկրների սահմանադրաիրավական կարգավորումները և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմները մարդու իրավունքների մեխանիզմները բավականին զարգացում են ապրել և ուրվագծել են բնապահպանական ոլորտում արդյունավետ սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակը: Մինչդեռ ՀՀ գործող Սահմանադրությունը նախորդի համեմատությամբ հրաժարվել է նույնիսկ շրջակա միջավայրի վերաբերյալ ամրագրված նյութական (առողջ շրջակա միջավայրի) և ընթացակարգային (բնապահպանական տեղեկատվություն ստանալու) իրավունքների սահմանադրաիրավական ամրագրումից:

75. *St'u* Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի պնդումը մասնավոր ոլորտի և տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների առնչությամբ պետության պարտավորությունների վերաբերյալ, E/C.12/2011/1, § 1 (անգլերեն), <https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slO6QSmlBEDzFEovLCu-W1AVC1NkPsgUedPIF1vfPMKOgNxs%2fCpnVM8K6XpeNimFvrj%2f4tQZvhH%2bXM9vEaJmHSX3FSXAcTmJ%2bW-c3iPSLafnoFpGQ9KIHCXooWHCPCpQt>:

76. Շրջակա միջավայրի պաշտպանության, անվտանգ, մաքուր շրջակա միջավայրի իրավունքի, շրջակա միջավայրի մասին տեղեկատվություն ստանալու իրավունքի և այլ կարգավորումների մասով:

77. Մանրամասն ցանկը *տե՛ս* The Status of Constitutional Protection for the Environment in Other Nations, Paper 4, David R. Boyd, 2013 (անգլերեն), <https://davidusuzuki.org/wp-content/uploads/2013/11/status-constitutional-protection-environment-oth-en-nations.pdf>:



Բաժին 2.2

ՀՀ ներպետական համատեքստը և շրջակա միջավայրի իրավունքների սահմանադրական երաշխիքների վերանայման անհրաժեշտությունը

Շրջակա միջավայրին առնչվող սահմանադրաիրավական կարգավորումների լավագույն շրջանակը մեծապես պայմանավորված է ներպետական բնապահպանական իրավիճակով և առանձնահատկություններով:

ՀՀ-ում վերջին տասնամյակների ընթացքում բնապահպանների կողմից բարձրաձայնվել են բնապահպանական բազմաթիվ խնդիրների մասին: Մասնագետների պնդմամբ բնապահպանական օրենսդրության անկատարության, գործող օրենքների պահանջների շրջանցման, պետական և մասնավոր սուբյեկտների նկատմամբ անբավարար հսկողության և վերահսկողության պայմաններում շրջակա միջավայրի պահպանությունը եղել է ոչ լիարժեք, բնական ռեսուրսներն օգտագործվել են ոչ ռացիոնալ⁷⁸: Բնապահպանական բազմաթիվ ոլորտներում (ջրային ռեսուրսներից մինչև անտառահատումներ և հանքարդյունաբերություն) խնդիրներ արձանագրվել են ոչ միայն բնապահպանների կողմից, այլև հաստատվել են պետության կողմից Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությամբ: Մասնավոր ոլորտի նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայության մասին է վկայում նաև հանքարդյունաբերության ոլորտում առկա իրավիճակը, որը հանգեցրել է նաև հասարակական բողոքի ալիքների⁷⁹:

Այս տեսանկյունից ՀՀ-ում հատկապես կարևոր են դառնում առողջ շրջակա միջավայրի իրավունքի և բնապահպանական նպատակներով մասնավոր կորպորացիաների իրավունքների սահմանափակման սահմանադրաիրավական ամրագրումները:

Նախորդիվ թվարկված միջազգային իրավական փաստաթղթերի առանցքային մոտեցումն այն է, որ պետությունները պարտավորություն ունեն բնակչությանը պաշտպանելու շրջակա միջավայրին պատճառով այնպիսի վնասներից, որոնք միջամտում են մարդու իրավունքների իրացմանը: Ուստի սոսկ «շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման խթանումը», ինչպես սահմանվում է ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածով, չի կարող դիտարկվել որպես անվտանգ, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի ապահովման բավարար երաշխիք: Այն չի կարող տվյալ երաշխիքի և մարդու մի շարք այլ իրավունքների միջև ուղղակի կապի և համապատասխան օրենսդրական կարգավորումների ապահովման հիմք լինել, մինչդեռ դա են պահանջում ներկայիս իրավական զարգացման միտումները: Այս առումով 2005 թ. Սահմանադրության կարգավորումներն ավելի բարձր երաշխիքներ էին նախատեսում, որոնց վերականգնումը մեծապես կբարձրացնի շրջակա միջավայրի իրավունքի պաշտպանության մակարդակը:

Մասնավորապես առողջ շրջակա միջավայրի իրավունքի ամրագրումը Սահմանադրության 2-րդ գլխում՝ որպես սահմանադրական դատական վիճարկելիություն ունեցող անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունք, քաղաքացիների կողմից առողջ շրջակա միջավայրի նկատմամբ իրենց պահանջատիրության կարևորագույն սահմանադրաիրավական հիմքը կարող է դառնալ:

Սրա մասին է վկայում մի շարք երկրների, օրինակ՝ Կոստա Ռիկայի և Արգենտինայի փորձը: Այսպես՝ Կոստա Ռիկայի Սահմանադրական պալատը, հիմնվելով իրենց Սահմանադրության 50-րդ հոդվածի վրա, որը սահմանում է առողջ շրջակա միջավայրի իրավունքը, 1989 թ-ից մինչև

78. *Stú* Էկոլոգիական քաղաքականությունը Հայաստանում, Վ. Բուռնագյան, <https://ge.boell.org/en/2019/06/24/ekologikan-kaghakanowtyowne-hayastanowm>:

79. *Stú*, օրինակ, Ամուլսարի հանքի շահագործման առնչությամբ հանրային բողոքների ակնարկը, <https://www.ecolur.org/hy/news/amulsar/>:

2012 թ. 85 գործ է քննել շրջակա միջավայրի պահպանության հարցերի վերաբերյալ և գործերից 36-ի դեպքում հակասահմանադրականության մասին որոշում է կայացրել⁸⁰: Արգենտինայի Գերագույն դատարանը ևս շրջակա միջավայրի իրավունքի վերաբերյալ առաջադեմ նախադեպային որոշում է կայացրել՝ հիմնվելով Արգենտինայի Սահմանադրության 41-րդ հոդվածի վրա, որը սահմանում է յուրաքանչյուրի առողջ և բալանսավորված շրջակա միջավայր ունենալու իրավունքը, որն անհրաժեշտ է մարդու զարգացման համար՝ չվտանգելով հետագա սերունդներին⁸¹:

Սեփականության իրավունքի սահմանափակման համար շրջակա միջավայրի պաշտպանությունը որպես առանձին նպատակ սահմանելը սահմանադրաիրավական հիմք կարող է լինել խոշոր կորպորացիաների նկատմամբ սահմանափակող օրենսդրություն ձևավորելու համար: Այս մոտեցումը համահունչ է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին ինչպես ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի՝ մասնավոր կյանքի իրավունքի պաշտպանության, այնպես էլ ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի սահմանափակման իրավաչափության տեսանկյունից: Շրջակա միջավայրի վերաբերյալ գործեր քննելիս ՄԻԵԴ-ը շրջակա միջավայրի պաշտպանությունը դիտարկել է որպես հանրային շահի պաշտպանությանն ուղղված օրինական նպատակ, իսկ որոշ գործերով նաև պետության պոզիտիվ պարտականություն ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի շրջանակում⁸²: Մասնավորապես *Օ՛Սալիվան Մքքարթի Մասրլ Էյթիդին ընդդեմ Իռլանդիայի* գործով ՄԻԵԴ-ը իրավաչափ է համարել ձկնաբուծության ոլորտում աշխատող կազմակերպության սեփականության իրավունքի սահմանափակումները (կրած ֆինանսական վնասները)⁸³ ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում, քանի որ դրանք արվել են ԵՄ շրջակա միջավայրի չափանիշներին համապատասխանելու համար և ունեցել են օրինական նպատակ:

Բնապահպանական տեղեկատվության հասանելիության սահմանադրաիրավական ամրագրումը բնապահպանական խնդիրների նկատմամբ հասարակական վերահսկողության սահմանադրաիրավական հիմք կարող է դառնալ: Սա նաև համապատասխանում է Օրիուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի պահանջներին, որն ամրագրում է բնապահպանական տեղեկատվության տրամադրման պետության պարտավորությունը և այդ տեղեկատվությունը մերժելու բացառիկ դեպքերը: Մասնավորապես նշվում է, որ բնապահպանական տեղեկատվության հարցման դեպքում անհրաժեշտություն չկա անձնական հետաքրքրությունը հիմնավորելու: Սա բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը առանձնահատուկ է դարձնում տեղեկատվության այլ ձևերի համեմատությամբ, որոնց հարցման դեպքում անձը անձնական հետաքրքրություն պետք է ցույց տա: Սրանով է պայմանավորված բնապահպանական տեղեկատվության տրամադրման մասով հատուկ սահմանադրաիրավական երաշխիքի ամրագրման անհրաժեշտությունը:

80. *Sh'u* The Environmental Jurisprudence of Costa Rica's Constitutional Court (անգլերեն), <http://environmentalrightsdatabase.org/the-environmental-jurisprudence-of-costa-ricas-constitutional-court/>:

81. Մասնավորապես Մատանգա Ռիախուելո գետի շրջակայքը, որը Լատինական Ամերիկայի ամենաաղտոտված քաղաքային տարածքներից է համարվում, առողջական մեծ վնասներ էր հասցնում տեղի բնակչությանը: 2004 թ. բնակիչներից մեկը՝ Բեատրիս Մենդոզան, որի առողջությունը ևս կրել էր աղտոտվածության ազդեցությունը, դատական կարգով կարողացավ պարտավորեցնել քաղաքային իշխանություններին, կառավարությանն ու 44 աղտոտող կազմակերպություններին անցկացնել տեսչական զննում և սեղմ ժամկետում վերականգնել բնակիչների՝ առողջ միջավայրում ապրելու սահմանադրական իրավունքը: *Sh'u* <https://www.futurepolicy.org/crimes/argentinian-supreme-courts-pioneering-judgement-on-environmental-rights>:

82. *Sh'u* Factsheet – Environment and the ECHR (անգլերեն), https://www.echr.coe.int/documents/fs_environment_eng.pdf:

83. *Sh'u* *O'Sullivan McCarthy Mussel Development Ltd v. Ireland*, ECtHR, Application no. 44460/16, Judgement of 7 June 2018 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/fre?i=001-183395>:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ (Գլուխ 2)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք.

1. Սահմանադրության 12-րդ հոդվածում ամրագրել պետության կողմից առողջ, անվտանգ շրջակա միջավայրի պաշտպանության պարտավորությունը:
2. Սահմանադրության 2-րդ գլխում որպես անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունք ամրագրել յուրաքանչյուրի՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:
3. Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել բնապահպանական տեղեկատվությունը մերժելու անթույլատրելիության և այդ տեղեկատվությունը թաքցնելու համար պատասխանատվություն նախատեսող դրույթով:
4. Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասում, որպես սեփականության իրավունքի սահմանափակման հիմք, ամրագրել նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում



ՀՀ Սահմանադրությունում 2015 թ. սահմանադրական փոփոխություններով առանձին ամրագրում ստացան երեխայի իրավունքները: Մասնավորապես Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրվեց.

1. *Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:*
2. *Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:*
3. *Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք՝ բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:*
4. *Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են»:*

Հարկ է նշել, որ երեխայի որոշ իրավունքներ տեղ են գտել նաև Սահմանադրության 36-րդ (ծնողների իրավունքները և պարտականությունները), 47-րդ (ՀՀ քաղաքացիության իրավունքը) և 57-րդ (աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքային իրավունքները) հոդվածներում: Սահմանադրության 86-րդ հոդվածում որպես պետության քաղաքականության նպատակ է ամրագրված *երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը*: Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ *մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են*:

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ, 36-րդ, 86-րդ հոդվածների և 37-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները երեխային, ընտանիքը, մանկությունը դիտարկում են որպես հատուկ հոգածության և պաշտպանության առարկա, իսկ 37-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, 47-րդ, 57-րդ հոդվածների դրույթները երեխային օժտում են անմիջական գործող իրավունքներով և նրան դիտարկում որպես իրավունքի լիակատար սուբյեկտ:

Այս մոտեցմամբ ՀՀ Սահմանադրությունը համադրում է միջազգային փորձում պայմանականորեն առանձնացվող «հատուկ պաշտպանության» և «երեխայակենտրոն» սահմանադրությունների տեսակները⁸⁴:

84. «Հատուկ պաշտպանության» սահմանադրությունները երեխային դիտարկում են որպես պաշտպանության և հոգածության օբյեկտի և ոչ որպես առանձին իրավատերերի և պարունակում են կարգավորումներ ընտանիքի, մանկության, երեխաների պաշտպանության, ծնողների պարտավորությունների և պետության հատուկ հոգածության մասին: «Երեխայակենտրոն» սահմանադրությունները երեխային դիտարկում են որպես իրավատիրոջ և իրավասուբյեկտի և ամրագրում են երեխաների համար սուբյեկտիվ իրավունքներ ու երեխաների հետ պետության հարաբերությունները կարգավորող հիմնարար սկզբունքներ, ինչպես՝ երեխայի լավագույն շահը, լաված լինելու իրավունքը, կրթության իրավունքը, շահագործումից և վնասակար աշխատանքից զերծ լինելու իրավունքը և այլն: *Shu P. Alston, J. Tobin, Laying the Foundations for Children's Rights: An Independent Study of some Key Legal and Institutional Aspects of the Impact of the Convention on the Rights of the Child, UNICEF, 2005 (անգլերեն), https://www.unicef-irc.org/publications/pdf/ii_layingthefoundations.pdf:*

Երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայում

Երեխայի իրավունքների պաշտպանության երաշխիքների գործող սահմանադրական կարգավորումների ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ անհրաժեշտ են որոշակի վերանայումներ, որոնց անդրադառնում ենք տվյալ գլխում: Մասնավորապես քննարկվում են.

- «Երեխայի լավագույն շահ» եզրույթի սահմանադրական ամրագրման վերանայման անհրաժեշտությունը,
- լաված լինելու իրավունքի սահմանադրական ամրագրման վերանայման անհրաժեշտությունը,
- երեխաների տնտեսական շահագործման և երեխայի համար վտանգավոր, նրա կրթությունը խոչընդոտող կամ նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը վնասող աշխատանքի արգելքի սահմանադրական ամրագրման վերանայման անհրաժեշտությունը:



ԲԱԺԻՆ 3.1

Երեխայի իրավունքների սահմանադրականացումը որպես միջազգային պարտավորությունների կատարման երաշխիք

ՀՀ-ի կողմից վավերացվել են միջազգային և տարածաշրջանային մի շարք փաստաթղթեր, որոնք այս կամ այն չափով անդրադառնում են երեխայի իրավունքների պաշտպանությանը⁸⁵: Դրանցից հիմնականը ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին 1989 թ. կոնվենցիան է (այսուհետև նաև՝ ԵԻԿ)⁸⁶:

ԵԻԿ-ի 4-րդ հոդվածի համատեքստում Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն (այսուհետև նաև՝ Կոմիտե) առանձնակի շեշտադրել է երեխաների իրավունքների սահմանադրականացման կարևորությունը: Եթե ներպետական սահմանադրություններում առկա են երեխայի իրավունքների վերաբերյալ նորմեր, ապա կարևոր են իրավունքահենք մոտեցումը և կոնվենցիայի ընդհանուր սկզբունքների ամրագրումը. «Կոմիտեն ողջունում է ազգային սահմանադրություններում երեխայի իրավունքների վերաբերյալ այնպիսի հոդվածների ամրագրումը, որոնք արտացոլում են կոնվենցիայի հիմնական սկզբունքները: Դա նպաստում է կոնվենցիայի այն հիմնական գաղափարի կարևորմանը, որ երեխաները մարդու իրավունքների կրողներ են (holders of human rights)»⁸⁷: Կոմիտեն արձանագրել է, որ երեխաների իրավունքների սահմանադրականացումը կարևոր քայլ է «կոնվենցիայով սահմանված իրավունքների լիարժեք իրականացման համար»⁸⁸:

Կոմիտեն իր թիվ 5 Ընդհանուր մեկնաբանության մեջ⁸⁹ կոնվենցիայի դրույթներում առանձնացնում է չորս հիմնական սկզբունք, մասնավորապես՝

- խտրականության բացառումը (2-րդ հոդված),
- երեխայի լավագույն շահը (3-րդ հոդված),

85. Դրանց թվին են պատկանում մասնավորապես Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին ԱՄԿ կոնվենցիան, Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիան և այլն:

86. *Տե՛ս* Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>:

87. *Տե՛ս* Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 5 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4538834f11.html>:

88. *Տե՛ս* նույն տեղում:

89. *Տե՛ս* նույն տեղում:

- կյանքի, գոյության և զարգացման իրավունքը (6-րդ հոդված),
- երեխաների վրա ներգործություն ունեցող որոշումների կայացման ժամանակ երեխայի լաված լինելու իրավունքը (12-րդ հոդված):

Այս ընդհանուր սկզբունքները ոչ միայն սահմանված են որպես երեխայի նյութական իրավունքներ, այլև ուղենիշ են ԵԻԿ-ի մեկնաբանման և կիրառման համար: Երեխայի իրավունքների կոմիտեն առաջարկել է, որ այս սկզբունքները մասնավորապես ստանան իրավական ուժ և կարգավիճակ (*legal standing and effect*) ներպետական իրավական համակարգերում:



ԲԱԺԻՆ 3.2

Երեխայի իրավունքների երաշխիքների և պաշտպանության սահմանադրականացման վերաբերյալ միջազգային մոտեցումները

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (այսուհետև նաև՝ ԵԽԽԿ) «Երեխաների իրավունքների ներառումը ներպետական սահմանադրություններում որպես երեխաների վերաբերյալ արդյունավետ ներպետական քաղաքականությունների կարևոր բաղադրիչ» վերտառությամբ 2015 թ. մայիսի 6-ի զեկույցի համաձայն՝ երեխայի իրավունքների ինկորպորացիան սահմանադրություններում և երեխայի իրավունքների հարցերով մարդու իրավունքների ներպետական ինստիտուտների ստեղծումը երեխայի իրավունքների վերաբերյալ արդյունավետ քաղաքականությունների էական բաղադրիչներն են:

Երեխայի իրավունքների սահմանադրականությունը մեծապես պայմանավորված է ազգային սոցիալական համատեքստով և տվյալ երկրի իրավական մշակույթով ու ավանդույթներով⁹⁰, իսկ սահմանադրական դրույթների արդյունավետությունը՝ նաև երեխայի իրավունքների իրացմանն ուղղված ներպետական օրենսդրության ու քաղաքականության բովանդակությամբ և վարչական կառուցվածքներով⁹¹:

ԵԽԽԿ-ն կոչ է անում անդամ պետություններին վերլուծել երեխայի իրավունքների վերաբերյալ գործող սահմանադրական դրույթները միջազգային չափանիշների և զարգացումների լույսի ներքո և առավելագույնս ապահովել, որ երեխաների՝ որպես ինքնուրույն իրավատերերի՝ իրավունքի սուբյեկտների լավագույն շահերը առաջնային ուշադրության արժանանան երեխաների պաշտպանությանն ու զարգացմանը միտված ցանկացած հանրային կամ մասնավոր գործողության շրջանակում: Միջազգային չափանիշներին համապատասխան սահմանադրական և օրենսդրական համակարգերը թարմացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ԵԽԽԿ-ն կոչ է անում ամրագրելու երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման սահմանադրական երաշխիքները⁹²:

Վենետիկի հանձնաժողովն իր «Երեխաների իրավունքների պաշտպանություն. միջազգային չափանիշներ և ազգային սահմանադրություններ» վերտառությամբ զեկույցում⁹³ անդրադարձել

90. *Sh'u* The inclusion of children's rights in national constitutions as an essential component of effective national child policies, PACE, Report, Doc. 13787 (անգլերեն), https://pace.coe.int/en/files/21757/html#_TOC_N22FC0940N2300EDBC:

91. *Sh'u* նույն տեղում:

92. *Sh'u* The inclusion of children's rights in national constitutions as an essential component of effective national child policies, PACE, Resolution 2056 (անգլերեն), <https://pace.coe.int/en/files/21783/html>:

93. *Sh'u* On the Protection of Children's Rights: International Standards and Domestic Institutions, adopted by the Venice Commis-

է այն հարցին, թե երեխայի իրավունքները ինչպես պետք է ներառվեն ազգային սահմանադրություններում՝ դրանց արդյունավետ իրականացմանը նպաստելու համար:

Վենետիկի հանձնաժողովի փորձագետների համար միջազգային չափանիշների բավարարման բարձրագույն արտահայտությունն այն սահմանադրություններն են, որոնք ներառում են ԵԻԿ-ի վերոնշյալ ընդհանուր սկզբունքները, ուղղակիորեն ամրագրում երեխաների անօտարելի իրավունքները, ճանաչում երեխայի՝ որպես իրավատիրոջ կարգավիճակը՝ օժտելով նրան պետության առջև վիճարկելի իրավունքներով⁹⁴:

Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ ԵԻԿ-ի անդամ պետություններն իրենց սահմանադրական համակարգին համապատասխան պետք է ապահովեն երեխաների իրավունքների ճանաչման և պաշտպանության համար սահմանադրական երաշխիքներ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Անկախ ընտանիքի իրավական կարգավիճակից՝ երեխաները պետք է ճանաչվեն որպես առանձին իրավատերեր (*rights-holders*), ոչ թե որպես սուկ պաշտպանության կարիք ունեցող դերակատարներ:
2. Երեխաների վերաբերյալ բոլոր գործողություններում երեխայի լավագույն շահը առաջնահերթ ուշադրության պետք է արժանանա (ԵԻԿ-ի 3-րդ հոդվածին համապատասխան):
3. Երեխաները իրավունք պետք է ունենան լաված լինելու իրենց վերաբերյալ բոլոր որոշումների կայացման գործընթացներում (ԵԻԿ-ի 12-րդ հոդվածին համապատասխան):



ԲԱԺԻՆ 3.3

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված երեխայի իրավունքների շրջանակի գնահատումը միջազգային չափանիշների տեսանկյունից

Այսպիսով՝ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով Հայաստանում երեխայի իրավունքները սահմանադրականացվեցին, ինչը դրական զարգացում էր:

Այնուամենայնիվ, գործող սահմանադրական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ են որոշակի վերանայումներ, որոնց անդրադառնում ենք ստորև:

ՎԵՐԱՆԱՅՈՒՄ N 1

Առկա է «երեխայի լավագույն շահ» եզրույթի մասով եզրույթաբանական անհամապատասխանություն ԵԻԿ-ի դրույթներին:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի «*Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան*» ձևակերպման մեջ օգտագործված է «*երեխայի շահ*» եզրույթը «երեխայի լավագույն շահ» եզրույթի փոխարեն: Նույն հոդվածի 3-րդ մասում ևս օգտագործված է «*երեխայի շահ*» եզրույթը՝ ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու երեխայի իրավունքի սահմա-

sion at its 98th Plenary Session (Venice, 21-22 March 2014) (անգլերեն), [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)005-e.](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)005-e.):

94. Տե՛ս նույն տեղում:

նափակման առնչությամբ: Բացի այդ՝ Սահմանադրության 36-րդ հոդվածում ամրագրված է, որ ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ *երեխայի կենսական շահերն* ապահովելու նպատակով:

Որքանով են Սահմանադրության տերստում «երեխայի շահ» և «երեխայի կենսական շահ» եզրույթները համապատասխանում «երեխայի լավագույն շահ» միջազգային սկզբունքին և իրավունքին:

Այս հարցադրմանը պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել «երեխայի լավագույն շահ» հասկացության բովանդակությունը և այն համադրել Սահմանադրության մեջ տեղ գտած «երեխայի շահ», «երեխայի կենսական շահ» ձևակերպումների հետ:

«Երեխայի լավագույն շահ»-ը երեխաների իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներից է:

Ըստ ԵԻԿ-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի. *«Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:* «Երեխայի լավագույն շահ»-ը ամրագրված է նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մյուս հոդվածներում⁹⁵, ինչպես նաև կոնվենցիային կից երեք լրացուցիչ արձանագրություններում:

Կոմիտեն իր մեկնաբանություններում⁹⁶ նշել է, որ երեխայի լավագույն շահը եռատարր կոնցեպտ է.

1. Այն նյութական իրավունք է: Երեխան իրավունք ունի, որ իր լավագույն շահը գնահատվի, և դրան տրվի առաջնային նշանակություն այն դեպքում, երբ տարբեր շահեր են քննարկվում կոնկրետ հարցով որոշում կայացնելու համար, և որպեսզի երաշխավորվի, որ այդ իրավունքը կիրացվի բոլոր այն դեպքերում, երբ երեխայի վերաբերյալ որոշում է կայացվում: 3-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը պետությունների համար ստեղծում է անվիճելի պարտավորություն, այն անմիջական կիրառման նորմ է (համապատասխան օրենքների ընդունման անհրաժեշտություն չկա) և կարող է որպես հիմք ընդունվել դատարանում:
2. Այն հիմնարար, մեկնաբանող իրավական սկզբունք է: Երբ իրավական դրույթը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել, ապա պետք է ընտրվի այն մեկնաբանությունը, որն առավել արդյունավետորեն է ծառայում երեխայի լավագույն շահին: Կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում ամրագրված իրավունքները հիմք են մեկնաբանման համար:
3. Այն ընթացակարգային կանոն է: Երբ երեխայի վրա ազդող որոշում պետք է կայացվի, որոշման կայացման գործընթացը պետք է ներառի կոնկրետ երեխայի վրա այդ որոշման հնարավոր (դրական կամ բացասական) ազդեցության գնահատումը: Երեխայի լավագույն շահի որոշումն ու գնահատումը պահանջում են ընթացակարգային երաշխիքներ: Ավելին՝ որոշման կայացման պատճառաբանությունը պետք է ցույց տա, թե ինչպես է այդ շահը հաշվի առնվել, ինչն է համարվել երեխայի լավագույն շահ, ինչ չափանիշների հիման վրա, ինչպես է երեխայի լավագույն շահը համադրվել այլ դիտարկումների հետ:

«Երեխայի լավագույն շահ» հասկացությունը տեղ է գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Թեև երեխայի իրավունքներն առանձին ամրագրում չեն ստացել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, ՄԻԵԴ-ն իր մի շարք

95. Տե՛ս Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ, 10-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 37-րդ և 40-րդ հոդվածները:
96. Տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 14 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/51a84b5e4.html>:

որոշումներում հղում է կատարել երեխայի լավագույն շահի սկզբունքին և կիրառել այն: Մասնավորապես ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի տեսանկյունից անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ ՄԻԵԿ-ն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը պայմանավորված է կոնկրետ գործի հանգամանքներով⁹⁷:

Անդրադառնալով երեխայի և ծնողների փոխհարաբերություններին՝ ՄԻԵԿ-ը եզրակացրել է, որ ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածը պահանջում է, որ իշխանությունները երեխայի և ծնողների շահերի միջև գտնեն արդար հարաբերակցություն և այդ շահերը հավասարակշռելիս հատուկ ուշադրություն դարձնեն երեխայի լավագույն շահերին, որոնք, իրենց բնույթով և լրջությամբ պայմանավորված, կարող են գերակշռել ծնողների շահերից: Մասնավորապես, 8-րդ հոդվածի համաձայն, ծնողին չի կարող տրամադրվել այնպիսի միջոցներ ձեռնարկելու իրավունք, որոնք վնաս են հասցնում երեխայի առողջությանը և զարգացմանը⁹⁸:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարող ենք փաստել, որ «երեխայի լավագույն շահ» եզրույթը չի կարող նույնանալ «երեխայի շահ» կամ «երեխայի կենսական շահ» ձևակերպման հետ, քանի որ այն ունի կոնցեպտուալ բովանդակություն՝ որպես իրավունք, մեկնաբանման սկզբունք և ընթացակարգային կանոն, ինչը չի կարող արտացոլված լինել սահմանադրական կարգավորումներում տեղ գտած եզրույթներում: Երեխան կարող է ունենալ բազմաթիվ շահեր, որոնք բոլորն էլ համարվում են «երեխայի շահ», սակայն դրանցից ոչ բոլորը կարող են համարվել «երեխայի լավագույն շահ» կոնկրետ հարցի վերաբերյալ որոշում կայացնելիս:

Հարկ է նշել, որ օրենսդրական պրակտիկան ևս ՀՀ-ում ընթացել է միջազգային չափանիշներին համահունչ: Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը կիրառում է «երեխայի լավագույն շահ» ձևակերպումը⁹⁹:

ՀՀ Սահմանադրական դատարանը ևս իր որոշումներում օգտագործել է «երեխայի լավագույն շահ» սկզբունքը: Մասնավորապես, մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված «երեխայի շահ» եզրույթը, հղում է կատարել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային և Երեխայի իրավունքների կոմիտեի մեկնաբանություններին և այն մեկնաբանել է ՀՀ միջազգային պարտավորությունների տեսանկյունից¹⁰⁰՝ վերահաստատելով երեխայի իրավունքների իրացման ու պաշտպանության համար «երեխայի լավագույն շահ»-ի առանցքային բնույթը:

Այն պարագայում, երբ ՀՀ օրենսդրական կարգավորումներն ու դատական պրակտիկան զարգացել են միջազգային չափանիշներին ու սկզբունքներին համապատասխան, կիրառելով «երե-

97. *Stu C v. Finland*, ECtHR, Application No. 18249/02, Judgement of 9 May 2006, § 52, § 53 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-75337>:

98. *Stu Rytchenko v. Russia*, ECtHR, Application . No. 22266/04, Judgement of 20 January 2021, § 39 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-102894>:

99. Փոփոխությունները կատարվել են 2017 թ. դեկտեմբերի 21-ին: Ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածը «երեխայի լավագույն շահ»-ը հռչակում է որպես ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունք երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողությունում, իսկ որպես «երեխայի լավագույն շահերի» գնահատման տարրեր մատնանշվում են գրեթե նույնական դրույթներ (7-րդ մաս), ինչ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի մեկնաբանություններում: Միևնույն ժամանակ «երեխայի լավագույն շահը» ամրագրված է նաև որպես առաջնահերթ սկզբունք երեխաներին վերաբերող հարցերում իրավական նորմերը մեկնաբանելիս և կիրառելիս, եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել:

100. *Stu* ՍԴՈ-919, ՍԴՈ-1333, ՍԴՈ-1438, ՍԴՈ-1515:

խայի լավագույն շահ» եզրույթը, Սահմանադրությունը առաջնահերթ կերպով համահունչ պետք է լինի այդ միջազգային չափանիշներին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության նորմերում տեղ գտած «երեխայի շահ», «երեխայի կենսական շահ» ձևակերպումները չեն ապահովում ՀՀ միջազգային պարտավորություններին համահունչ նույնական եզրույթաբանություն և դրանով պայմանավորված՝ նաև բովանդակային համապատասխանություն: Սահմանադրության դրույթներում եզրույթաբանական նույնականության ապահովումը կարևոր է անմիջականորեն գործող սահմանադրական նորմի՝ ՀՀ միջազգային պարտավորություններին ու մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի հիման վրա գործող մարմինների պրակտիկային համապատասխանող մեկնաբանությամբ՝ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի կիրառման համատեքստում:

ՎԵՐԱՆԱՅՈՒՄ N 2

Լսված լինելու իրավունքն իր ամբողջ ծավալով ամրագրում չի ստացել սահմանադրական մակարդակում:

Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է իր կարծիքն ազատ արտահայտելու երեխայի իրավունքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

Այս ձևակերպումը բխում է ԵԻԿ-ի 12-րդ հոդվածի 1-ին մասի դրույթից, համաձայն որի՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք իրեն վերաբերող բոլոր դեպքերում: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, երեխայի համար իրեն վերաբերող դատական կամ վարչական ցանկացած քննության ժամանակ անմիջականորեն կամ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով լսված լինելու հնարավորություն է ապահովվում ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով:

Երեխայի իրավունքների կոմիտեն իր թիվ 12 Ընդհանուր մեկնաբանության մեջ¹⁰¹ անդրադարձել է ԵԻԿ-ի 12-րդ հոդվածի դրույթներին, դրանց իրավական վերլուծությանն ու մեկնաբանությանը: Կոմիտեն մասնավորապես նշել է, որ 12-րդ հոդվածը յուրօրինակ դրույթ է պարունակում, քանզի անդրադառնում է երեխայի իրավական և սոցիալական կարգավիճակին, ով մի կողմից՝ չունի ամբողջական անկախություն մեծահասակից, սակայն մյուս կողմից՝ իրավունքի սուբյեկտ է: Երեխաների լսված լինելու և լրջորեն ընկալվելու իրավունքները ԵԻԿ-ի հիմնարար արժեքներից են:

Կոմիտեն արձանագրել է, որ ԵԻԿ-ի ընդունումից հետո ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում օրենսդրության և քաղաքականության զարգացումներ են տեղի ունեցել 12-րդ հոդվածի կիրառման առումով: Մասնավորապես զարգացում է ապրել «երեխայի

101. *Sh'u* Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 12 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4ae562c52.html>:

մասնակցայնություն» կոնցեպտը, թեև այդ ձևակերպումը ԵԻԿ-ում ինքնին չկա: Այս համատեքստում արտահայտվելու և լսված լինելու իրավունքը Կոմիտեն մեկնաբանում է նաև որպես խմբային իրավունք, որը երեխաների մասնակցայնության մեխանիզմների ստեղծման հիմքը պետք է դառնա:

ԵԻԿ-ի 12-րդ հոդվածի 2-րդ մասը շեշտում է, որ լսված լինելու հնարավորությունը պետք է տրվի մասնավորապես «ցանկացած դատական և վարչական քննության ժամանակ, որն ազդեցություն ունի երեխայի վրա»: Կոմիտեն ընդգծում է, որ այս պահանջը տարածվում է երեխային վերաբերող դատական բոլոր գործընթացների վրա առանց բացառության, ներառյալ, օրինակ, ծնողների ամուսնալուծությունը, խնամակալության, որդեգրման հարցերը, օրենքի հետ խնդիր ունեցող երեխաների, ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնության զոհ դարձած երեխաների, փախստական կամ ապաստան հայցող երեխաների, պատերազմական գործողությունների կամ այլ արտակարգ իրավիճակների զոհ դարձած երեխաների մասնակցությամբ գործընթացները և այլն: Դասական վարչական վարույթները ներառում են, օրինակ, երեխայի կրթության, առողջության, բնակության պայմանների, պաշտպանության և այլ հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելուն ուղղված վարույթները:

Լսված լինելու իրավունքը վերաբերում է ինչպես երեխայի կողմից նախաձեռնված գործընթացներին, ինչպիսիք են վատ վերաբերմունքի կամ դպրոցից դուրս մնալու վերաբերյալ բողոքները, այնպես էլ այլ անձանց նախաձեռնությամբ սկսված ընթացակարգերը, ինչպիսիք են ամուսնալուծությունը կամ որդեգրումը: Կոմիտեն քաջալերում է պետություններին օրենսդրական կարգավորումներով պարտադիր ուժ տալ այն դրույթներին, որոնք վերաբերում են դատական և վարչական գործընթացներում որոշում կայացնողների կողմից (դատավորներ, վարչական մարմինների աշխատողներ) երեխայի կարծիքը հաշվի առնելու և երեխայի համար դրանց հետևանքները բացատրելու չափանիշներին:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ վարչական և դատական բոլոր քննությունները լինեն երեխաների համար մատչելի և հասանելի: Հատկապես ուշադրություն պետք է դարձվի երեխաների համար մատչելի տեղեկության տրամադրմանը, ինքնարտահայտման համար աջակցությանը, համապատասխան վերապատրաստում անցած անձնակազմի առկայությանը, դատական նիստերի դահլիճի կահավորմանը, դատավորների և փաստաբանների հագուստին, սպասման սրահներին և այլն:

Երեխայի լսված լինելու իրավունքի առավել լայն մեկնաբանման մասով դիրքորոշում է հայտնել ՀՀ Սահմանադրական դատարանն իր 20.12.2016 թ. N ՄԳՌ-1333 որոշմամբ: Անդրադառնալով Սահմանադրության 37-րդ հոդվածին՝ Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադիրը սովյալ նորմով երեխային վերապահել է ոչ միայն իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, այլև իրեն վերաբերող դատական գործընթացներում լսվելու իրավունք, լսվելու իրավունքի շրջանակում՝ դատական մարմինների կողմից իր կարծիքը հաշվի առնելու իրավունք»: Այսպիսով՝ ՄԳ դիրքորոշմամբ դատական և վարչական գործընթացներում երեխայի լսված լինելու իրավունքը ևս Սահմանադրության 37-րդ հոդվածի մաս պետք է կազմի:

Այնուամենայնիվ, նույնիսկ վերոնշյալ ՄԳ որոշմամբ արտահայտված լայն մեկնաբանման դեպքում գործող սահմանադրաիրավական ձևակերպման պարագայում լսված լինելու իրավունքը չի ընկալվում որպես բոլոր իրավունքների իրականացման և մեկնաբանման սկզբունք, ինչպես այն դիտարկում է Կոմիտեն: Այս իրավունքի ամբողջական ամրագրումը ԵԻԿ եզրույթաբանությամբ և բառապաշարով կստեղծի սահմանադրաիրավական այն հիմքը, որի վրա կգարգանան

երեխայի մասնակցայնության, երեխայի համար հասանելի և մատչելի դատական ու վարչական գործընթացների ապահովման և երեխայակենտրոն դատախարակական համակարգի ձևավորման կոնցեպտները:

Այսպիսով ԵԻԿ-ի 12-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած՝ երեխայի լաված լինելու իրավունքի բովանդակության լիարժեք սահմանադրական ամրագրումը բխում է ինչպես ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններից, այնպես էլ ՄԳ արդարադատական դրական փորձից և հավելյալ արժեք կարող է ստեղծել երեխայի լաված լինելու իրավունքի նոր կառուցակարգերի զարգացման համար:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասում ամբողջական ամրագրում տալ երեխայի լաված լինելու իրավունքին ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների շարադրմամբ, այն է՝ «Երեխան անմիջականորեն կամ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով լաված լինելու իրավունք ունի իրեն վերաբերող դատական կամ վարչական ցանկացած քննության ժամանակ»:

ՎԵՐԱՆԱՅՈՒՄ N 3

Երեխայի տնտեսական շահագործման և երեխայի համար վտանգավոր, նրա կրթությունը խոչընդոտող կամ նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը վնասող աշխատանքի արգելքը:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելը: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հետագա օրենսդրական կարգավորումները մանրամասնում են, որ 14-16 տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում, իսկ մինչև 14 տարեկան անձինք կարող են ընդգրկվել կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) և (կամ) կատարմանը, որը չպետք է վնասի նրանց առողջությանն ու բարոյականությանը, ինչպես նաև չպետք է խոչընդոտի նրանց կրթությունն ու անվտանգությունը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդված):

ԵԻԿ-ի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությունը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը:

Այսպիսով՝ ներկայիս սահմանադրաիրավական կարգավորումը նախատեսում է միայն «մշտական աշխատանքի» արգելք մինչև 16 տարեկան երեխաների համար, իսկ անվտանգության և շահագործման արգելքի վերաբերյալ բոլոր կարգավորումներն առկա են միայն օրենսդրական մակարդակում: Կարծում ենք, որ սահմանադրաիրավական դրույթը հստակ իրավունք պետք

Երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրական և օրենսդրական վերահսկման մեխանիզմներ

է սահմանի երեխայի համար՝ զերծ լինելու վտանգավոր ու վնասակար աշխատանքից հետևյալ հիմնավորմամբ:

Ներկայիս սահմանադրաիրավական կարգավորումները չեն ստեղծում անհրաժեշտ սահմանադրաիրավական հիմքեր երեխայի տնտեսական շահագործման և երեխայի համար վտանգավոր, նրա կրթությունը խոչընդոտող կամ նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը վնասող աշխատանքից զերծ մնալու իրավունքի ապահովման համար: Սահմանադրաիրավական արգելքի միակ չափանիշը աշխատանքի մշտական բնույթն է, ինչը բովանդակային առումով չի ներառում աշխատանքի վնասակար կամ կրթությունը խոչընդոտող լինելու հանգամանքները:

Հարկ է նշել նաև, որ Սահմանադրության 57-րդ հոդվածը Սահմանադրության 2-րդ գլխում է և ամրագրում է անմիջական գործող իրավունքներ: Այս համատեքստում, երեխայի տնտեսական շահագործման և վտանգավոր ու վնասակար մանկական աշխատանքի արգելքն ապահովելու համար կարևոր է Սահմանադրության 57-րդ հոդվածում ամրագրել հստակ և լիարժեք իրավական երաշխիքներ, որոնք կարող են պատշաճ գործել նույնիսկ օրենսդրական մանրամասն կարգավորումների բացակայության դեպքում:

Սա հատկապես ակներև է դառնում գործնական խնդիրների առկայության պայմաններում: Այս մասին են վկայում նաև ՀՀ-ի կողմից ներկայացված զեկույցի վերաբերյալ Կոմիտեի 08.07.2013 թ. Ամփոփոփիչ դիտարկումները¹⁰², որոնցում Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ զգալի թվով երեխաներ, ներառյալ 14 տարեկանը չրացած, դուրս են մնում դպրոցից, որպեսզի աշխատեն ոչ ֆորմալ ոլորտներում, օրինակ՝ գյուղատնտեսությունում, ավտոսպասարկման և շինարարության, մետաղի ջարդոնի հավաքման աշխատանքներում և ընտանեկան բիզնեսում: Կոմիտեն առանձնապես մտահոգիչ է համարել փողոցներում մուրացկանությամբ զբաղված և ծանր ֆիզիկական (բանվորի և բեռնողի) աշխատանք կատարող երեխաների թվի աճը, ինչպես նաև այն հանգամանքը, որ աշխատանքի տեսչություններն արդյունավետորեն չեն վերահսկում մանկական աշխատանքը:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2015 թ. իրականացված Երեխայի աշխատանքի ազգային հետազոտությունը ևս ի հայտ է բերել մանկական աշխատանքին առնչվող համակարգային խնդիրներ: Հետազոտության շրջանակում կիրառված մեթոդաբանության համաձայն՝ երեխայի համար արգելված համարվող աշխատանքներում (երեխաների զբաղվածությունը բոլոր այն աշխատանքներում, որոնք ֆիզիկապես, սոցիալապես կամ բարոյապես համարվում են վնասակար կամ վտանգավոր) ներգրավված է եղել 5-17 տարեկան երեխաների 9 %-ը (39.3 հազար երեխա): 16-17 տարեկան 5 երեխայից մեկը (19 %), 12-15 տարեկան 10 երեխայից մեկը (10 %) ներգրավված են եղել արգելված աշխատանքներում: 5-17 տարեկան զբաղված երեխաների 6.9 %-ը ներգրավված է եղել վնասակար համարվող աշխատանքներում¹⁰³:

Նվազագույն տարիքի մասին ԱՄԿ թիվ 138 կոնվենցիայով, որը վավերացվել է ՀՀ-ի կողմից 2005 թ., պետությունը պարտավորվել է ամրագրել աշխատանքի նվազագույն տարիք, որը չի կարող պարտադիր ուսումն ավարտելու տարիքից ցածր լինել: Այս համատեքստում հատկանշական

102. *Տե՛ս* Հայաստանի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների առնչությամբ Երեխայի իրավունքների կոմիտեի Ամփոփիչ դիտարկումները, CRC/C/ARM/3-4 (անգլերեն), https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en:

103. *Տե՛ս* «Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն» վերլուծական զեկույց, Աշխատանքի միջազգային կազմակերպություն և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, 2015 թ. էջ 108, https://www.armstat.am/file/article/national_child_labour_survey_in_armenia_report_-_web_version.pdf:

է, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում 12-ամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:

Այսպիսով՝ ՀՀ-ն այն սակավաթիվ երկրների շարքում է, որտեղ օրենսդրորեն ամրագրված պարտադիր կրթության տարիքը 18 տարեկանից բարձր է: Նման մոտեցումը պետությունները որդեգրում են առաջին հերթին երեխաների՝ դպրոցից վաղ դուրս մնալու դեպքերը կանխելու և մանկական աշխատանքն ու վաղ ամուսնությունները կանխարգելելու համար¹⁰⁴: Միևնույն ժամանակ սահմանադրական ամրագրում ստացած աշխատանքի նվազագույն տարիքն ընդամենը 16-ն է, ինչը կասկածի է ենթարկում 16-19 տարեկան անձանց պարտադիր կրթության իրավունքի իրացումը և աշխատանքի հետ այն համատեղելու հնարավորությունը: Սա նաև հակասում է Նվազագույն տարիքի մասին ԱՄԿ թիվ 138 կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որի՝ իր բնույթով կամ իրագործման հանգամանքների բերումով դեռահասի առողջությամբ, անվտանգությամբ կամ բարոյականությամբ հնարավոր վնաս հասցնող ցանկացած տեսակի զբաղվածության կամ աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքը ցածր չպետք է լինի 18-ից:

Այսպիսով՝ ԱՄԿ-ն ևս առաջնահերթ ուշադրություն է դարձնում երեխայի զբաղվածության անվտանգությանը և ոչ այնքան զբաղվածության մշտական կամ ժամանակավոր բնույթին և ամրագրում է աշխատանքի ընդունվելու նվազագույն տարիքի կապը պարտադիր կրթության տարիքի հետ, որը չի կարող ավելի ցածր լինել, քան 18 տարեկանը:

Միևնույն ժամանակ, ԵԻԿ Կոմիտեն առաջարկել է ապահովել աշխատանքային օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը ԵԻԿ-ի 32-րդ հոդվածին, ներառյալ գործող օրենքների արդյունավետ կիրառությունը և աշխատանքի տեսչությունների հզորացումն ու ներգրավումը, և ստեղծել մանկական աշխատանքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ:

Երեխայի իրավունքների միջազգային ցանցը ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին 2017 թ. ներկայացրած աշխատանքի իրավունքի և կայուն զարգացման նպատակների վերաբերյալ իր զեկույցում¹⁰⁵ հիմնավորել է այն մոտեցումը, որ քանզի մանկական աշխատանքը աղքատությանն առնչվող հիմնախնդիր է, աշխատանքի համընդհանուր արգելքը որոշակի տարիքի երեխաների համար կարող է մղել նրանց սովերային աշխատանքի, որը շահագործման և բռնության ենթարկվելու ավելի մեծ վտանգ է պարունակում: Ուստի ցանցը կարևորել է հիմնական ուշադրությունը դարձնել ոչ թե ֆորմալ արգելքի, այլ երեխայի առողջության, զարգացման և արժանապատիվ աշխատանքի պայմանների ապահովմանը:

Կոմիտեն դեռահաս երեխաների իրավունքների կիրառման մասին թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությունում¹⁰⁶ արձանագրել է, որ «*տարիքին համապատասխան աշխատանքներին ծանոթանալը զարգացնող կարևոր դեր է կատարում դեռահասաների կյանքում՝ տալով նրանց հնոտություններ և պատասխանատվություն ստանձնելու փորձ, իսկ եթե անհրաժեշտ է, նաև իրենց ընտանիքների սոցիալ-*

104. *Skú Free and compulsory education for all children: the gap between promise and performance*, K. Tomaševski, 2001 (անգլերեն), https://www.right-to-education.org/sites/right-to-education.org/files/resource-attachments/Tomasevski_Primer%202.pdf:
105. *Skú Submission to the UN High Commissioner for Human Rights on the right to work and the implementation of the Sustainable Development Goals* (անգլերեն), https://archive.crin.org/sites/default/files/submission_right_to_work_and_sdgs.pdf:
106. Ընդհանուր մեկնաբանությունը կենտրոնանում է հատկապես 10-18 տարեկան երեխաների խնդիրների վրա:

Երեխայի իրավունքների պաշտպանությունը սահմանադրական երաշխավորված վերականգնում

տնտեսական բարեկեցությանը մասնակցություն ունենալու և իրենց կրթության հասանելիությունն ապահովելու հնարավորություն...»: Կոմիտեն առաջարկել է որդեգրել անցումային մոտեցում՝ ապահովելու համար աշխատանքի դրական ազդեցության և առանց խտրականության պարտադիր կրթության իրավունքի ապահովման միջև հավասարակշռությունը դեռահասների կյանքում ¹⁰⁷:

Այսպիսով՝ Կոմիտեն ևս ընդգծել է մանկական աշխատանքի արգելքի հիմքում աշխատանքի վնասակար, վտանգավոր կամ կրթությանը խոչընդոտող բնույթը սահմանելու կարևորությունը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ-ի կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ իր արտահերթ զեկույցում¹⁰⁸ առանձնացրել է օրենսդրական մի շարք փոփոխությունների առաջարկներ, ինչպիսիք են «հարկադիր աշխատանքի», «աշխատանքի վատթարագույն ձևերի» և «անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների» օրենսդրական կարգավորումները, որոնք անհրաժեշտ են օրենքների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով: Այսպիսի կարգավորումների բացակայությունը ևս մեկ անգամ վկայում է ամուր սահմանադրաիրավական հիմքերի բացակայության մասին: Հստակ և թիրախային սահմանադրաիրավական կարգավորման դեպքում, Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն, հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ընդունումը օրենսդիրը կընկալեր որպես անմիջական պարտականություն:

Այսպիսով կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 4-րդ մասը չի արտացոլում մանկական աշխատանքի և երեխայի շահագործման վերաբերյալ կանխարգելման և դրանց դեմ պայքարի առնչությամբ ՀՀ միջազգային պարտավորությունների ամբողջական շրջանակը, աշխատանքի նվազագույն տարիքը չի համապատասխանում ՀՀ-ի վավերացրած միջազգային փաստաթղթերով ամրագրված տարիքի նվազագույն շեմի սահմանման չափանիշներին և թուլացնում է երեխայի արժանապատիվ աշխատանքի իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը:

Անհրաժեշտ ենք համարում սահմանադրորեն ամրագրել երեխայի (մինչև 18 տարեկան)՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությունը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը:

107. *Տե՛ս* Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 20 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/589dad3d4.html>:

108. Տե՛ս ՄԻՊ արտահերթ զեկույց, Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարումը վիճարկելու վերաբերյալ, <https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf>:

Մույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք.

1. Սահմանադրության 36-րդ և 37-րդ հոդվածներում կատարել եզրույթաբանական փոփոխություն՝ «երեխայի շահ», «երեխայի կենսական շահ» եզրույթները փոխարինելով «երեխայի լավագույն շահ» միջազգայնորեն ընդունված ձևակերպմամբ:
2. Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասում ամբողջական ամրագրում տալ երեխայի՝ անմիջականորեն կամ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ լսված լինելու իրավունքին:
3. Սահմանադրության 57-րդ հոդվածում ամրագրել երեխայի (մինչև 18 տարեկան)՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել երեխայի համար կամ խոչընդոտել նրա կրթությունը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը:

Հավասարության ապահովման և խտրականության արգելքի սահմանադրական ամրագրումների վերանայում



Դրանք կարելի է դասակարգել «ֆորմալ հավասարության» և «բովանդակային հավասարության» ապահովման երաշխիքների¹⁰⁹:

Փաստացի (բովանդակային) հավասարության ապահովման երաշխիքը, ի տարբերություն ֆորմալ հավասարության երաշխիքի, հաշվի է առնում փաստացի անհավասարության առկայությունը, դրա պատճառներն ու հիմքերը և փաստացի հավասարության ապահովմանն ուղղված կառուցողական գործողությունների իրականացումը դիտարկում է որպես հավասարության ապահովմանն ուղղված պետության պարտավորություն:

Սույն գլխում անդրադարձ է կատարվել հավասարության, խտրականության բացառման և ներառականության սկզբունքների սահմանադրաիրավական բավարար հիմքերի ստեղծման ու առկա խնդրահարույց իրավական կարգավորումների փոփոխման անհրաժեշտությանը:

Առանձնահատուկ քննության առարկա են դարձվել **փաստացի (բովանդակային) (*substantiv equality /de facto*) հավասարության ապահովման միջազգային չափանիշները**, ու առանձնացվել են ՀՀ սահմանադրաիրավական կարգավորումներում դրանք արտացոլելու հնարավոր լավագույն լուծումները:

Սույն գլխի շրջանակում վերհանվել են նաև Սահմանադրության տեքստում կիրառվող խտրական եզրույթները, և ուսումնասիրվել են խտրական մոտեցումների վրա հիմնված անգործունակության ինստիտուտի սահմանադրաիրավական հիմքերը, որոնց վերանայման անհրաժեշտությունը մարդու իրավունքների զարգացման ժամանակակից միտումներից է: Անդրադարձ է կատարվել նաև հավասարության իրավունքի ապահովմանն ու խտրականության բացառմանն ուղղված սահմանադրաիրավական այլ փոփոխությունների անհրաժեշտությանը, ինչպիսիք են հավասարության ուղիղ երաշխիքները բոլոր կրոնական համայնքների համար, պետության քաղաքականության նպատակների համապատասխանեցումը մարդու իրավունքների չափանիշներին և ներառական կրթության սահմանադրաիրավական հիմքերի ամրագրումը:

109. *Stu* Equality and Anti-Discrimination, Human Rights Library, University of Minnesota (անգլերեն), <http://hrlibrary.umn.edu/edumat/hreduseries/TB6/html/CH1.html#:~:text=In%20other%20words%2C%20de%20facto,capacity%20to%20contribute%20to%20society:>



ԲԱԺԻՆ 4.1

Փաստացի հավասարության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքի ամրագրում

Իրավահավասարության և խտրականության բացառման սահմանադրաիրավական հիմքերն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 28-30-րդ հոդվածներում: Դրանք կարելի է գնահատել որպես ֆորմալ հավասարության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքներ:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարությունը, իսկ 30-րդ հոդվածը՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը:

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն. «*Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդանությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է*»:

Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ ենթակետում, որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակ, ամրագրված է *կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը*:

Հարկ է նշել, որ պետության քաղաքականության նպատակներն ամրագրող նորմերն ուղենիշներ են պետական քաղաքականության ձևավորման համար, սակայն դրանք սուբյեկտիվ սահմանադրական իրավունքներ չեն առաջացնում քաղաքացիների համար և հստակ պարտավորություններ՝ պետության համար: Այսպիսով՝ կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանման ամրագրումը՝ որպես պետության քաղաքականության նպատակ, կարելի է գնահատել իբրև փաստացի հավասարության սկզբունքի միայն մասնակի սահմանադրաիրավական ամրագրում:

Անդրադառնանք փաստացի հավասարության սկզբունքի՝ միջազգային իրավունքում տրվող բովանդակությանը:

Բովանդակային կամ դե-ֆակտո (փաստացի)¹¹⁰ հավասարության սկզբունքը ճանաչում է անցյալում առկա խտրականությունը և քաղաքական, տնտեսական ու սոցիալական խոչընդոտները, որոնց անձինք բախվել են հավասար հնարավորությունների հասնելու և իրենց իրավունքներից օգտվելու ու որոշումներ կայացնելու ճանապարհին:

Մարդու իրավունքների վերաբերյալ ակադեմիական գրականության մեջ և մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի հիման վրա գործող մարմինների մեկնաբանություններում բովանդակային հավասարության սկզբունքն արդեն լայնորեն կիրառվում է: Վերջինս ենթադրում է, որ *պետությունները պետք է իրականացնեն կառուցողական գործողություններ՝ ապահովելով համակարգային խտրականության վերացմանն ուղղված իրենց պարտականությունների կատարումը*¹¹¹:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն իր թիվ 25 Ընդհանուր

110. Միջազգային մարմինների պրակտիկայի և ակադեմիական գրականության մեջ 3 եզրույթներն էլ համարժեքորեն օգտագործվում են:

111. *St'u Loper K. Substantive Equality in International Human Rights Law and its Relevance for the Resolution of Tibetan Autonomy Claims* (անգլերեն), <https://core.ac.uk/download/pdf/151516502.pdf>:

Հավասարության ապահովման և խտրականության արգելքի սահմանադրական ամրագրումների վերամայում

հանձնարարականում նշում է, որ «կանանց և տղամարդկանց միջև հավասարության հասնելու համար կոնվենցիայով [Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա] սահմանված խտրականության վերացման պահանջը պետք է մեկնաբանվի բովանդակային հավասարության սկզբունքի ներքո: Բովանդակային կամ դե ֆակտո հավասարությունն անհրաժեշտ է, որ բացառվի անհավասար վերաբերմունքի վերարտադրումը»¹¹²:

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն իր թիվ 6 Ընդհանուր հանձնարարականում շեշտել է որ «հնարավորությունների հավասարեցումը՝ որպես կոնվենցիայի [Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիա] 3-րդ հոդվածի ընդհանուր սկզբունք, արձանագրում է ֆորմալ հավասարության մոդելից բովանդակային հավասարության մոդելին անցնելու առաջադեմ զարգացում»:¹¹³ Հարկ է նշել նաև, որ ներառական հավասարության կոնցեպտը, որի վրա հիմնված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիան (այսուհետև նաև՝ ՀՈՒԱԻԿ), զարգացել է բովանդակային հավասարության մոդելի հիման վրա: Բովանդակային հավասարությունը, ըստ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի, ներառականության կոնցեպտի առավել համապարփակ և առաջադեմ մեկնաբանումներից է¹¹⁴:

Խմբային իրավունքներին անդրադարձող կոնվենցիոն մարմիններից բացի՝ բովանդակային/փաստացի հավասարությունը ճանաչվում է նաև ՏՄՄԻԴ-ով, որը պահանջում է բովանդակային անխտրական մոտեցում սոցիալական և տնտեսական իրավունքների երաշխիքների առումով (հոդված 2): ՏՄՄԻԿ-ը իր թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությունում որպես պետության պարտավորություն նշում է ոչ միայն ֆորմալ, այլև բովանդակային խտրականության վերացմանն ուղղված քայլերի իրականացումը¹¹⁵:

Սահմանադրական կարգավորումների առումով միջազգային փորձի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ փաստացի հավասարության սկզբունքն ամրագրում է ստացել հիմնականում գենդերային հավասարության համատեքստում: Սահմանադրական նորմերի հիմնական կարևորությունը կառուցողական գործողությունների կատարման պարտավորության ամրագրումն է պետության համար: Որոշ երկրների սահմանադրություններում այս սկզբունքն ամրագրում է ստացել՝ ընդգծելով կառուցողական գործողությունների իրականացման անհրաժեշտությունը: Գենդերային հավասարության ապահովման համար կառուցողական գործողությունների կատարման պետության սահմանադրաիրավական պարտավորությունը սահմանված է Հունաստանի, Հունգարիայի և Իտալիայի սահմանադրություններում¹¹⁶:

Բուն «բովանդակային հավասարություն» եզրույթը տեղ է գտել Վրաստանի սահմանադրության 11-րդ հոդվածում և Ավստրիայի սահմանադրության 7-րդ հոդվածում: Վրաստանի Սահմանադրության 11-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է պետության պարտավորությունը՝ կիրառելու հատուկ միջոցներ կանանց և տղամարդկանց բովանդակային հավասարությունն

112. *Տե՛ս* Կանանց նկատմամբ խտրականության կոմիտեի Ընդհանուր հանձնարարական No.20 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/52d91fd34.html>:

113. *Տե՛ս* Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.6 (անգլերեն), <https://digitallibrary.un.org/record/1626976?ln=en>:

114. *Տե՛ս* նույն տեղում:

115. *Տե՛ս* Տնտեսական, սոցիալական և մշակութային կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 20 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4a60961f2.html>:

116. Հետազոտության համար օգտագործվել է Codices համակարգը, <http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm>:

ապահովելու և անհավասարությունը վերացնելու համար: Վրաստանի սահմանադրությունն ամրագրում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմանների ստեղծման պետության պարտավորությունը¹¹⁷: Հատուկ միջոցների (կառուցողական գործողությունների) կատարման պետության պարտավորությունն ամրագրված է Հունգարիայի սահմանադրությամբ՝ կանանց, երեխաների և հաշմանդամություն ունեցող պաշտպանության համար:

ՀՀ Սահմանադրությունում գենդերային հավասարության ապահովման համար կառուցողական գործողությունների կատարման սահմանադրաիրավական հիմքերի անհրաժեշտությանը անդրադարձել է Վենետիկի հանձնաժողովը: Վերջինս 2015 թ. ՀՀ Սահմանադրության նախագծի մասին իր կարծիքում, անդրադառնալով Սահմանադրության 7-րդ հոդվածում ընտրական իրավունքի սկզբունքների մեջ կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքի բացակայությանը, իր մտահոգությունը պատճառաբանել է հատուկ միջոցների (կանանց համար հատուկ քվոտաների) սահմանման հնարավորության սահմանադրաիրավական հիմքերի անհրաժեշտությամբ¹¹⁸:

Կարծում ենք, որ այս մտահոգությունն արդիական է ոչ միայն ընտրական իրավունքով սահմանվող քվոտաների, այլև այլ ոլորտներում կիրառվող կառուցողական գործողությունների սահմանադրաիրավական հիմքերի տեսանկյունից, և այս առումով անհրաժեշտ են ավելի լայն կարգավորումներ:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան և այլ երկրների սահմանադրաիրավական զարգացումները առաջընթաց են գրանցել հավասարության իրավունքի և բովանդակային հավասարության սկզբունքի ամրագրման տեսանկյունից: Կառուցողական գործողությունների իրականացումը՝ որպես փաստացի հավասարության ապահովման միջոց, ՀՀ-ում չունի սահմանադրաիրավական հիմքեր: Ավելին՝ առանձնահատուկ սահմանադրաիրավական կարգավորման բացակայության պայմաններում դրանք կարող են նույնիսկ գնահատվել որպես խտրական, քանի որ առավելություններ ու արտոնություններ են նախատեսում մի խումբ անձանց համար:

Այսպես՝ ՀՀ օրենսդրությամբ կառուցողական գործողություններ են նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների¹¹⁹, հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կրթական իրավունքների¹²⁰, ազգային փոքրամասնությունների քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքների պաշտպանության համար, որոնց նպատակը աշխատանքի, կրթության և քաղաքականության ոլորտում փաստացի հավասարության ապահովումն է:

Կարծում ենք, որ Սահմանադրության 29-րդ հոդվածում անհրաժեշտ են լրացումներ, որոնք կստեղծեն վերոնշյալ կառուցողական գործողությունների սահմանադրաիրավական հիմքերը և կխրախուսեն պետության կողմից կառուցողական գործողությունների իրականացումը: Հաշմանդամություն ունեցող անձանց հավասարության իրավունքի ապահովմանն ուղղված ՀՀ միջազգային պարտավորություններով պայմանավորված՝ առաջարկում ենք նաև ավելի պարտավորեցնող սահմանադրաիրավական կարգավորում տալ այդ նպատակով կառուցողական գործո-

117. *Տե՛ս* Վրաստանի սահմանադրությունը, <https://matsne.gov.ge/en/document/view/30346?publication=36>:

118. *Տե՛ս* Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 757/2014, կետ 64, [https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm):

119. *Տե՛ս* «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը:

120. *Տե՛ս* «Զինվորական ծառայության և զինծառայողների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածը:

դուրյունների իրականացման սահմանադրաիրավական դրույթին:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթներով.

- *«Պետությունը կարող է կիրառել հատուկ միջոցներ (կառուցողական գործողություններ) անձանց հավասար իրավունքների ապահովման նպատակով: Այդպիսի միջոցների կիրառումը չի համարվում խտրականություն»:*
- *«Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների ապահովման նպատակով պետությունը պետք է կիրառի հատուկ միջոցներ (կառուցողական գործողություններ)»:*



ԲԱԺԻՆ 4.2

Առանձին իրավունքների իրացման շրջանակում խտրականության բացառման և ներառականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների ներդրում

I. Կրթության ներառականության սկզբունքի երաշխիքի ամրագրում

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և ՏՄՄԻԴ-ը երաշխավորում են կրթության իրավունքը՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, ծննդից և այլ կարգավիճակից (ՄԻՀՀ-ի 2-րդ հոդված և ՏՄՄԻԴ-ի 2-րդ հոդված), իսկ ԵԻԿ-ը որպես պաշտպանված հատկանիշներ ավելացրել է էթնիկ ծագումն ու հաշմանդամությունը:

Այս պաշտպանված հատկանիշներն ամրագրված են նաև Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիայով¹²¹, որի 1-ին հոդվածն արգելում է խտրականությունը կրթության բոլոր մակարդակներում: Մի շարք միջազգային կոնվենցիաներ, որոնք ամրագրում են հավասար իրավունքներ որոշակի խմբի անձանց համար, նույնպես ճանաչում են կրթության իրավունքի նկատմամբ դրանց կիրառելիությունը¹²²:

Ի լրումն մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով ամրագրված կրթական երաշխիքների՝ համաշխարհային հանրությունը կրթության համընդհանրությունը հռչակել է առաջնահերթություն՝ ընդունելով «Կրթություն բոլորի համար» կայուն զարգացման նպատակը¹²³ և «Տարրական ընդհանուր կրթության ապահովումը»՝ որպես Հազարամյակի զարգացման նպատակ¹²⁴:

Թեև ներառական կրթության իրավունքը հատակ ամրագրված չէ ԵԻԿ-ով, սակայն թվարկված են այն նպատակները, որոնց պետք է հասնել ներառական կրթությամբ¹²⁵: Բոլորի կրթությամբ

121. *Տե՛ս* Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիան, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75858>:

122. *Տե՛ս* Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և այլն:

123. *Տե՛ս* Կայուն զարգացման նպատակների առաջարկվող վերջնական ցուցանիշների ցանկ, http://un.am/up/file/SDGs_Targets_Indicators_ARMENIAN_FINALIZED.pdf:

124. *Տե՛ս* Հազարամյակի զարգացման նպատակներն ու Հայաստանը, <http://www.un.am/hy/p/mdgs-and-armenia>:

125. *Տե՛ս* Moving Towards Inclusive Education as a Human Right: An Analysis of International Obligations to Implement Inclusive Education in Law and Policy. Maastricht University Faculty of Law (անգլերեն),

յան իրավունքն ամրագրված է ԵԻԿ-ի 28-րդ հոդվածում, իսկ Հակախտրականության սկզբունքը՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածում: Այն ներառում է խտրականության բացառումը կրթության մեջ և պետություններին պարտավորեցնում է ապահովել բոլոր երեխաների՝ կրթություն ստանալու հավասար հնարավորությունները: Մասնավոր կարգավորմամբ 23-րդ հոդվածն ամրագրում է պետության պարտավորությունը՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթության հասանելիությունը: Այս բոլոր կարգավորումներն իրենց համակցության մեջ սահմանում են ներառական կրթության նպատակները, որոնք են հասանելիությունը, անհատական ուսուցումը և հավասարությունը կրթության մեջ:

Երեխայի իրավունքների կոմիտեն իր Ընդհանուր մեկնաբանություններով և Ամփոփիչ եզրահանգումներով պետություններին խրախուսում է կիրարկել ներառական կրթությունը¹²⁶: Իր հերթին ՏՄՄԻԿ-ը պահանջում է դաշնագրային դրույթների, այդ թվում՝ կրթության իրավունքի պրոգրեսիվ իրականացում (հոդված 2), ինչը նշանակում է, որ պետությունը շարունակական առաջընթաց պետք է արձանագրի իրավունքների իրացման ուղղությամբ:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասում որպես կրթության իրավունքի լրացուցիչ երաշխիք ամրագրել կրթության ներառականության սկզբունքը հետևյալ ձևակերպմամբ. «Պետությունն ապահովում է կրթության ներառականությունը»:

II. Կրոնական կազմակերպությունների հետևորդների հավասարության իրավունքի ապահովում

Սահմանադրության 17-րդ հոդվածով սահմանված է ՀՀ-ում կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը, իսկ Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված է պետության կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (այսուհետև՝ նաև՝ ՀԱՄԵ)՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելության ճանաչումը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում, և սահմանվում է, որ ՀԱՄԵ-ի հետ հարաբերությունները կարգավորվում են օրենքով: Միևնույն ժամանակ, թե՛ սահմանադրական դրույթները, թե՛ հետագա օրենսդրական կարգավորումները չեն պարզաբանում ՀԱՄԵ-ի իրավական կարգավիճակի վերաբերյալ հարցը՝ չհստակեցնելով եկեղեցու՝ կրոնական կազմակերպություն լինելու հարցը:

Կրոնի և դավանանքի ազատությունը և կրոնի հիմքով խտրականության բացառումը ՀՀ միջազգային իրավական պարտավորությունն է՝ ամրագրված ՄԻՀՀ-ի (հոդված 18), ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետև՝ նաև՝ ՔՔԻԴ) (հոդվածներ 4 և 18), ՄԻԵԿ-ի (հոդված 9) և դրան կից 2-րդ արձանագրության, ՄԱԿ-ի Կրոնի և համոզմունքի հիմքով անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագրի և միջազգային այլ փաստաթղթերի շրջանակներում:

«Խղճի ազատության ու կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը և «Հայաս-

https://www.right-to-education.org/sites/right-to-education.org/files/resource-attachments/Maastricht_University_Moving_Towards_Inclusive_Education_as_a_Human%20Right_2014_1.pdf:

126. *Տե՛ս* Երեխայի իրավունքների կոմիտեի Ամփոփիչ եզրահանգումները՝ ուղղված Սինգապուրին, U.N. Doc. CRC/C/SGP/2-3 (2011), § 53(b), (անգլերեն), <https://www.refworld.org/docid/4dcb89f92.html>, Իրանին, U.N. Doc. CRC/C/15/Add.123 (2000), § 42, (անգլերեն), <http://hrlibrary.umn.edu/crc/iran2000.html>, Հորդանանին, U.N. Doc. CRC/C/15/Add.125 (2000), § 44, (անգլերեն), <http://hrlibrary.umn.edu/crc/jordan2000.html>:

տանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը պատասխան չեն տալիս այն հարցին, թե արդյոք ՀԱՍԵ-ն համարվում է կրոնական կազմակերպություն, և ՀԱՍԵ-ի հետևորդների վրա տարածվում են արդյոք այն բոլոր սահմանափակումները, որոնք օրենսդրությամբ կրում են կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները: Մասնավորապես այդպիսի սահմանափակումներ են սահմանված «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը մասամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր¹²⁷:

Մարդու իրավունքների կոմիտեի (այսուհետև՝ նաև ՄԻԿ) թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն¹²⁸ անդրադառնում է ՔՔԻԴ-ի 18-րդ հոդվածին (մտքի, խղճի և կրոնի ազատություն)՝ մասնակիացնելով դրա ներպետական կիրարկման չափանիշները: Այսպես՝ ՄԻԿ-ի կողմից սահմանվում է, որ «այն փաստը, որ որոշակի կրոնական ուղղվածությունը ճանաչված է իբրև պետական, քանի որ դրա հետևորդն է բնակչության մեծամասնությունը, չպետք է հանգեցնի կրոնական այլ ուղղություններին հարող կամ կրոնական որևէ ուղղության չհարող անձանց հանդեպ խտրականության»: ՄԻԿ-ի հորդորն է ՔՔԻԴ-ը վավերացրած պետություններին ներկայացնել պարբերական տեղեկություն առ այն, թե ինչ քայլեր և միջոցառումներ են իրականացվում՝ ապահովելու կրոնական բոլոր համայնքների համար հավասար, ոչ խտրական ներպետական օրենսդրական և քաղաքականության շրջանակ:

Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրենության, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) Կրոնի կամ համոզումների ազատության հարցերով խորհրդատվական խորհրդի դիտարկմամբ «կրոնական որոշակի համայնքների համար նպաստավոր պայմաններ սահմանելը սկզբունքորեն չի հակասում ՄԻԵԿ-ի պահանջներին՝ պայմանով, որ տարբերակված վերաբերմունքը թելադրված լինի օբյեկտիվ և խելամիտ հիմնավորումներով»¹²⁹: Այս առումով, սակայն, կարևորագույն պահանջն է, որ յուրաքանչյուր կրոնական համայնք, որը կցանկանա օգտվել պետության կողմից կրոնական մեկ այլ համայնքին տրված առավելություններից, կարողանա ներկայացնել համապատասխան դիմում նախապես սահմանված ոչ խտրական չափորոշիչների հիման վրա:

ՀՀ օրենսդրական դաշտը չի պարունակում նման չափորոշիչներ՝ գործնականում բացառելով ՀԱՍԵ-ին տրվող առավելություններին հավակնելու կրոնական այլ համայնքների հնարավորությունը: Ի լրումն չափորոշիչների բացակայության՝ ՀԱՍԵ-ի կարգավիճակի¹³⁰ ոչ հստակ սահմանադրական կարգավորումը հանգեցնում է նրան, որ առկա չէ ՀՀ-ում գործող կրոնական բոլոր կազմակերպությունների համար հավասար հնարավորություններ ապահովող ոչ խտրական օրենսդրական և քաղաքականության դաշտ, ինչը ՀՀ-ի վավերացրած միջազգային պայմանագրերի դրույթներից բխող պահանջ է:

Կրոնական կազմակերպությունների հետևորդների և գերիշխող կրոնական կազմակերպոթ-

127. *Տե՛ս* ՍԳՈ- 1506:

128. *Տե՛ս* Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No 2 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/453883fa19.html>:

129. *Տե՛ս* Joint Guidelines on the Legal Personality of Religious or Belief Communities (անգլերեն), [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)023-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)023-e):

130. Սահմանադրական փոփոխությունների համատեքստում քննարկվում է նաև ՀԱՍԵ-ին հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ շնորհելը Սահմանադրությամբ, ինչը ևս մեկ անգամ կրնա դիտարկվել կրոնական կառույցի առանձնահատկությունն այլ կրոնական կազմակերպությունների համեմատ: ՀԱՍԵ-ի կարգավիճակի հարցը դուրս է սույն հետազոտության առարկայի շրջանակից: Անկախ ՀԱՍԵ-ի կարգավիճակից կամ դրա փոփոխությունից՝ ՀԱՍԵ-ի և այլ կրոնական կազմակերպությունների և վերջիններիս հետևորդների հավասար իրավունքների երաշխիքի հստակ սահմանադրաիրավական ամրագրման անհրաժեշտություն ենք տեսնում:

յան հետևորդների իրավունքների հավասարության ապահովման սահմանադրաիրավական լուծման լավ օրինակ է Կիպրոսը:

Կիպրոսի սահմանադրության 18-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է բոլոր կրոնների հավասարությունն օրենքի առաջ և հավելում, որ չսահմանափակելով Կոմունալ պալատների (հունական և թուրքական կրոնական համայնքների, որոնք մեծամասնություն են Կիպրոսում և Սահմանադրությամբ ունեն հատուկ կարգավիճակ) իրավասությունը Սահմանադրությամբ՝ հանրապետության օրենսդրական, գործադիր կամ վարչական որևէ ակտով չպետք է խտրականացվեն այլ կրոնական կազմակերպությունները կամ կրոնները¹³¹: Նմանօրինակ դրույթները սահմանադրաիրավական մակարդակում ապահովում են գերիշխող և մյուս կրոնների հավասարությունը:

Կարծում ենք, որ ՀՀ-ում գործող կրոնական բոլոր համայնքների իրավունքների և խտրականության բացառման տեսանկյունից նմանատիպ սահմանադրաիրավական դրույթի անհրաժեշտություն կա:

Ուստի առաջարկում ենք Սահմանադրության 41-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «Պետությունն ապահովում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և այլ կրոնական կազմակերպությունների հետևորդների իրավահավասարությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում»:

III. Հաշմանդամության իրավունքահենք մոտեցման ամրագրում պետության քաղաքականության նպատակները սահմանող սահմանադրական ուղենիշների շրջանակում

Սահմանադրության 86-րդ հոդվածի 8-րդ ենթակետում ամրագրված է հաշմանդամության կանխարգելումը՝ որպես պետական քաղաքականության հիմնական նպատակ:

2007 թ. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի (այսուհետև՝ ՀՈՒԱԿ) ընդունումից հետո կոնվենցիայի կոմիտեն բազմիցս նշել է, որ ՀՈՒԱԿ-ի ընդունմամբ տեղի է ունեցել պարադիգմայի փոփոխություն. հաշմանդամություն ունեցող անձանց ընկալումը օբյեկտից փոխվել է սուբյեկտի, և պետությունները պետք է առաջնորդվեն հաշմանդամության իրավունքահենք մոդելով նախկինում կիրառվող բժշկական մոդելի փոխարեն:

Բժշկական մոդելը հաշմանդամությունը տեսնում էր իբրև «խնդիր», որը պետք է շտկվի բժշկական միջամտության շնորհիվ: Տվյալ մոդելի գերակայումը պատմականորեն պայմանավորվում է հասարակությունում հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ բազմաթիվ կարծրատիպերի առկայությամբ, նրանց՝ գործորդությունից (agency) զուրկ ընկալմամբ:

Իրավունքահենք մոդելը հաշմանդամությունը ճանաչում է որպես մարդկանց բազմազանության կարևոր կողմ, պահանջում, որ հաշմանդամություն ունեցող անձինք լիարժեք իրացնեն իրենց իրավունքները առանց խտրականության և հաշմանդամությամբ պայմանավորված տարբերակման¹³²:

131. Հետազոտության համար օգտագործվել է Codices համակարգը, <http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm>:

132. *Sh'u* A Human Rights Model of Disability, Th. Degener, 2014 (անգլերեն), https://www.researchgate.net/publication/283713863_A_human_rights_model_of_disability#read:

Վավերացնելով ՀՈՒԱԻԿ-ը՝ ՀՀ-ն իր պետական քաղաքականության նպատակ պետք է ճանաչի հաշմանդամության իրավունքահենք մոդելների տեղայնացումը և հրաժարվի բժշկական մոդելից, ինչից բխում է «հաշմանդամության կանխարգելումն ու բուժումը» որպես պետության քաղաքականության նպատակ ամրագրող սահմանադրաիրավական գործող նորմը:

Այսպիսով՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածում որպես սոցիալական, մշակութային և տնտեսական ոլորտներում պետության քաղաքականության նպատակ ամրագրված հաշմանդամության կանխարգելումը փոխարինել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, հավասար հնարավորությունների ապահովման և ներառական հասարակության կառուցման նպատակով:

IV. Անգործունակության ինստիտուտի սահմանադրական հիմքերի վերացում

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է. «4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով **անգործունակ նանաշված**, ինչպես նաև դիտարկությանը կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

ՀՀ Սահմանադրության 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրան ազատագրվման դատապարտելու վերաբերյալ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան **անգործունակ**, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում»:

ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված է. «8. Դատավորի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, նրան **անգործունակ**, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա հրաժարականի, մահվան դեպքերում»:

ՀՀ Սահմանադրության 193-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված է. «5. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները դադարում են նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան **անգործունակ**, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում»:

Այսպիսով՝ ՀՀ-ում սահմանադրական մակարդակով ամրագրված է անգործունակության ինստիտուտը, և անգործունակ ճանաչված անձանց համար սահմանափակված է ընտրելու, ընտրվելու, հանրաքվեներին մասնակցելու, ԱԺ պատգամավոր, դատավոր և մարդու իրավունքների պաշտպան դառնալու իրավունքը: Անձին անգործունակ ճանաչելու կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Անգործունակության մասին սահմանադրական ամրագրումները հակասում են ՀՀ-ի ստանձնած մի շարք պարտավորություններին: Այսպես՝ ՀՈՒԱԿ-ի 12-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ հավասար հիմունքներով գործունակության (իրավունակության) իրավունքը կյանքի բոլոր ոլորտներում: Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է պետության պարտավորությունը՝ ձեռնարկելու համապատասխան միջոցներ, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դառնա այն աջակցությունը, որը կարող է պահանջվել նրանց իրավունակությունը (գործունակությունը) կիրառելիս: Այս հոդվածի կիրառմամբ տեղի ունեցավ պարաօլիմպիկ փոփոխություն գործունակության և անգործունակության ինստիտուտների կիրառման հարցում: Քաղաքական իրավունքների մասով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն իր թիվ 1 Ընդհանուր մեկնաբանությունում արձանագրել է, որ անձի՝ որոշում կայացնելու կարողությունը չի կարող հիմք ծառայել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց քաղաքական իրավունքների իրացման, ներառյալ քվեարկելու և ընտրվելու իրավունքի սահմանափակումն արդարացնելու համար¹³³:

Առկա միջազգային զարգացումների համատեքստում մի շարք երկրներում քննարկվում և իրականացվում են անգործունակության ինստիտուտի վերանայում և փոփոխություն, այդ թվում՝ Ֆրանսիայում, Հունգարիայում, Իռլանդիայում, Լատվիայում, Պորտուգալիայում, Սլովակիայում, Չեխիայում և Ռուսաստանում: Անգործունակության և խնամակալության ինստիտուտները փոխարինվեցին գործակալության և աջակցության մեխանիզմներով: Ընդ որում՝ գործունակությունն ընկալվում է որպես մարդու հիմնարար իրավունք, իսկ համապատասխան աջակցության ապահովումը՝ որպես պետության պարտականություն¹³⁴:

ՄԻԵԴ-ը ևս անդրադարձել է անգործունակության ինստիտուտին և նշել, որ նույնիսկ այն դեպքերում, երբ ներպետական մարմինների կողմից բավարար հստակությամբ հաստատվել է անձնական հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու հարցում անձի խնդիրների առկայությունը, գործունակության նույնիսկ մասնակի սահմանափակումը կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց միայն այն դեպքում, երբ բոլոր հնարավոր այլընտրանքները հաշվի առնելով ներպետական մարմինները հանգել են եզրակացության, որ առավել նվազ սահմանափակումներ ենթադրող միջոցի կիրառումն ապարդյուն կլինի¹³⁵: Գործունակությունից ամբողջությամբ զրկելը չի համապատասխանում իրավունքի սահմանափակման չափանիշներին¹³⁶:

ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև Հայաստանում գործող անգործունակության ինստիտուտի խնդիրներին *Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի* գործով և ճանաչել է անգործունակ ճանաչված քաղաքացու արդար դատաքննության իրավունքի և անձնական կյանքի իրավունքի խախտումները¹³⁷: Անգործունակության ինստիտուտի առկա համակարգային խնդիրներին հատկապես արդար դատաքննության իրավունքի ապահովման տեսանկյունից անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը¹³⁸:

133. *Տե՛ս* Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.1 (անգլերեն), <https://www.ohchr.org/en/hrbodies/crpd/pages/gc.aspx>:

134. *Տե՛ս* Who Gets to Decide? Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial Disabilities, Council of Europe, 2012 (անգլերեն), <https://rm.coe.int/who-gets-to-decide-right-to-legal-capacity-for-persons-with-intellectu/16807bb0f9>:

135. *Տե՛ս* Ivinovic v. Croatia, ECtHR, Application No. 13006/13, Judgement of 18 September 2014, § 44 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-146393>:

136. *Տե՛ս* Salontaji-Drobnjak v. Serbia, ECtHR, Application No. 36500/05, Judgement of 13 October 2009, § 144 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-94985>:

137. *Տե՛ս* Nikolyan v. Armenia, ECtHR, Application No. 7438/14, Judgement of 3 October 2019 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-196149>:

138. *Տե՛ս* ՍԴՈ- 1197:

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներում ամրագրված անգործունակության ինստիտուտը խնդրահարույց է, և դրա գաղափարական ու ընթացակարգային հիմքերը փոփոխման փուլում են աշխարհի և հատկապես Եվրոպայի մի շարք երկրներում: Ավելին՝ Սահմանադրության 48-րդ հոդվածում ամրագրված ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու անձի իրավունքի սահմանափակումը անգործունակության հիմքով հակասում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի մեկնաբանությանն ու համարվում է խտրականության դրսևորում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք.

- ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասից հանել *«դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված»* արտահայտությունը:
- ՀՀ Սահմանադրության 98-րդ, 164-րդ և 193-րդ հոդվածներից հանել անգործունակ ճանաչվելու հիմքով որոշակի պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները:

V. Սահմանադրության տեքստում օգտագործվող խտրական եզրույթների բացառում

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետում և 86-րդ հոդվածի 8-րդ մասում օգտագործվում են *«հոգեկան խանգարում ունեցող անձ»*, *«հարբեցող»*, *«թմրամոլ»*, *«հաշմանդամ»* բառերը, որոնք խտրական են և զգայուն եզրույթաբանությամբ փոխարինման կարիք ունեն:

Ժամանակակից իրավական փաստաթղթերում, որոնք ամրագրում են մարդու իրավունքների երաշխիքներ, կարևորվում է ոչ միայն իրավական փաստաթղթի բովանդակությունը, այլև օգտագործվող եզրույթների հակախտրական և զգայուն լինելը: Այս առումով ՀՀ Սահմանադրության տեքստն ունի վերանայման և մի շարք եզրույթների վերախմաստավորման կարիք:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք եզրույթաբանական փոփոխություններն իրականացնել Սահմանադրության 27-րդ և 86-րդ հոդվածներում. 27-րդ հոդվածում *«հոգեկան խանգարում ունեցող անձ»* եզրույթն անհրաժեշտ է փոխարինել *«հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ»* եզրույթով, *«հարբեցողը»* և *«թմրամոլը»* համապատասխանաբար՝ *«ալկոհոլից/թմրանյութերից կախվածություն ունեցող անձ»* եզրույթով, իսկ 86-րդ հոդվածում՝ *«հաշմանդամ»* եզրույթը *«հաշմանդամություն ունեցող անձ»* եզրույթով:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ (Գլուխ 4)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք.

1. Սահմանադրության 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթներով.
 - «Պետությունը կարող է կիրառել հատուկ միջոցներ (կառուցողական գործողություններ) անձանց հավասար իրավունքների ապահովման նպատակով: Այդպիսի միջոցների կիրառումը չի համարվում խտրականություն»:
 - «Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների ապահովման նպատակով»:

տակով պետությունը պետք է կիրառի հատուկ միջոցներ (կառուցողական գործողություններ)»:

2. ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասում որպես կրթության իրավունքի լրացուցիչ երաշխիք ամրագրել կրթության ներառականության սկզբունքը հետևյալ ձևակերպմամբ. *«Պետությունն ապահովում է կրթության ներառականությունը»:*
3. Սահմանադրության 41-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.
 - *«Պետությունն ապահովում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և այլ կրոնական կազմակերպությունների հետևորդների իրավահավասարությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում»:*
4. Սահմանադրության 86-րդ հոդվածում որպես սոցիալական, մշակութային և տնտեսական ոլորտներում պետության քաղաքականության նպատակ ամրագրված *«հաշմանդամության կանխարգելումը»* փոխարինել *«հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, հավասար հնարավորությունների ապահովման և ներառական հասարակության կառուցման»* նպատակով:
5. Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասից հանել *«դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված»* արտահայտությունը:
6. Սահմանադրության 98-րդ, 164-րդ և 193-րդ հոդվածներից հանել անգործունակ ճանաչվելու հիմքով որոշակի պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները:
7. Սահմանադրության 27-րդ և 86-րդ հոդվածներում իրականացնել եզրույթաբանական փոփոխություններ, մասնավորապես՝ 27-րդ հոդվածում *«հոգեկան խանգարում ունեցող անձ»* եզրույթը փոխարինել *«հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ»* եզրույթով, *«հարբեցողը»* և *«թմրամոլը»* համապատասխանաբար՝ *«սլկոհողից/թմրանյութերից կախվածություն ունեցող անձ»* եզրույթով, իսկ 86-րդ հոդվածում՝ *«հաշմանդամ»* եզրույթը *«հաշմանդամություն ունեցող անձ»* եզրույթով:



Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանադրական հիմքերի վերանայում

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում որոշակի վերանայման են ենթարկվել մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները:

Ըստ 2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում արտացոլված գնահատականի՝ «2005 թ. սահմանադրական փոփոխությունները համակարգային ամբողջականության մեջ չերաշխավորեցին նաև հիմնական իրավունքների սահմանափակումների առանձնահատկությունների հատակ տարբերակումը և դրանց համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին: Հիմնական իրավունքների ցանկի մի շարք հոդվածներում սահմանված են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ սահմանափակումներ, ինչն առաջացնում է տարակարծիք մեկնաբանություններ դրանց ծավալի և բովանդակության վերաբերյալ»¹³⁹: Այս առումով նշված հայեցակարգը շեշտադրել է հիմնական իրավունքների սահմանափակման խնդրի վերանայման անհրաժեշտությունը:

Մինչև 2015 թ. սահմանադրական փոփոխությունները Սահմանադրության տեքստը ներառում էր մարդու իրավունքների սահմանափակումների վերաբերյալ 2 հոդված (43-րդ և 44-րդ հոդվածներ), որոնցից առաջինը թվարկում էր մի շարք իրավունքների սահմանափակումներին ներկայացվող պահանջները¹⁴⁰, իսկ մյուսն ամրագրում էր արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու իրավունքների ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական կարգավորումներ:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հրաժարվել է մարդու իրավունքների սահմանափակումներին ներկայացվող ընդհանուր պահանջներից՝ նախատեսելով յուրաքանչյուր իրավունքի սահմանափակման հիմքերն առանձին-առանձին՝ կոնկրետ հոդվածի շրջանակում:

Այս մոտեցումը թույլ է տալիս հաշվի առնել յուրաքանչյուր իրավունքի և ազատության սահմանափակման առանձնահատկությունները, ինչպես նաև բխում է ՀՀ-ի կողմից վավերացված

139. Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014 թ., <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxunner/hayecakarg.pdf>:

140. 43-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-րդ (անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք), 24-րդ (բնակարանի անձեռնմխելիության իրավունք), 25-րդ (ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք), 27-րդ (կարծիքն արտահայտելու իրավունք), 27.1-ին (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու իրավունք), 28-րդ (միավորվելու իրավունք), 29-րդ (հավաքներ անցկացնելու իրավունք), 30 (ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք), 30.1-ին (քաղաքացիության իրավունք) հոդվածներով, 32-րդ հոդվածի 3-րդ մասով (գործադուլի իրավունք) ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք պայմանագրերում այս հարցի առումով առկա մոտեցումներից: Մասնավորապես այս մոտեցումն է որդեգրված ՄԻԵԿ-ի¹⁴¹, ԶԶԻԴ-ի¹⁴² և ՏՄՄԻԴ-ի շրջանակներում¹⁴³:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանադրական ամրագրման նոր մոտեցման տրամաբանությունն ընդհանուր առմամբ դրական է:

Այնուամենայնիվ, մարդու իրավունքների սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են որոշակի խնդիրներ, որոնց անդրադառնում ենք սույն գլխում, մասնավորապես.

- Մարդու իրավունքների սահմանափակումների իրավաչափության գնահատման ոչ բոլոր պահանջներն են (պայմանները, չափանիշները, սահմանափակման սահմանափակումները) տեղ գտել Մահմանադրության մեջ: Մասնավորապես խոսքը վերաբերում է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» ձևակերպմանը, որը, ամրագրված լինելով Մահմանադրության նախկին երկու խմբագրությամբ տեքստերում, չի ամրագրվել 2015 թ. սահմանադրական փոփոխություններով: Այս առումով կարող ենք փաստել, որ առկա է սահմանադրական երաշխիքների նվազեցում:
- Առանձին հոդվածներում մարդու իրավունքների սահմանափակումների վերաբերյալ ամրագրումները որոշ դեպքերում սահմանում են սահմանափակման իրավաչափ նպատակների ավելի լայն ցանկ՝ «միջազգային պարտավորություններով սահմանված ցանկի համեմատությամբ: Այսպիսի էքսցեսը խախտում է Մահմանադրության 81-րդ հոդվածով սահմանված՝ «իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել «միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները» սահմանադրական դրույթը:



ԲԱԺԻՆ 5.1

«Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» կոնցեպտի սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը

2005 թ. խմբագրությամբ Մահմանադրությունը մարդու մի շարք իրավունքների սահմանափակման թույլատրելիության պահանջներում ամրագրում էր սահմանափակման գնահատման «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» սահմանադրաիրավական պահանջը:

Մասնավորապես այն սահմանված է եղել նախորդ խմբագրությամբ Մահմանադրության 43-րդ հոդվածում և կիրառելի է եղել 2005 թ. Մահմանադրության 23-րդ (անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք), 24-րդ (բնակարանի անձեռնմխելիության իրավունք), 25-րդ (ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք), 27-րդ (կարծիքն արտահայտելու իրավունք), 27.1-ին (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու իրավունք), 28-րդ (միավորվելու իրավունք), 29-րդ (հավաքներ անցկացնելու իրավունք), 30-րդ (ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք), 30.1-ին (քաղաքացիության իրավունք)

141. *Sh'u*, օրինակ, Եվրոպական կոնվենցիայի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածները:

142. *Sh'u* 12-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածները:

143. *Sh'u* 8-րդ հոդվածը:

հողվածներով, 32-րդ հողվածի 3-րդ մասով (գործադուլի իրավունք) ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների նկատմամբ:

Համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ այժմ նման պահանջ ՀՀ Սահմանադրությունում ամրագրված չէ, մինչդեռ այն ամրագրված պետք է լիներ հետևյալ իրավունքների և ազատությունների սահմանափակումների վերաբերյալ դրույթներում. մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը (31-րդ հողված), բնակարանի անձեռնմխելիությունը (32-րդ հողված), հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը (33-րդ հողված), անձնական տվյալների պաշտպանությունը (34-րդ հողված), ազատ տեղաշարժվելու իրավունքը (40-րդ հողված), կարծիքի արտահայտման ազատությունը (42-րդ հողված), հավաքների ազատությունը (44-րդ հողված), միավորումների ազատությունը (45-րդ հողված):

Մարդու իրավունքների սահմանափակումների թույլատրելիության գնահատման պահանջներում «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» ձևակերպումը նախորդ խմբագրությամբ Սահմանադրության տեքստում հիմնված է եղել միջազգային չափանիշների վրա: Մասնավորապես այդպիսի պահանջ է սահմանված ՄԻԵԿ-ի մի շարք հողվածներում (օրինակ՝ 8-11-րդ հողվածներ), ինչպես նաև ՔԶԻԴ-ում (21-րդ և 22-րդ հողվածներ), ՏՍՄԻԴ-ում (8-րդ հողված) և ԵԻԿ-ում (15-րդ հողված):

Հարկ է նշել, որ 2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում այս փոփոխությունը որևէ կերպ հիմնավորված չէ:

Մասնագիտական հանրություն տեղ գտած կարծիքը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» ձևակերպման անտեսման վերաբերյալ հանգում է նրան, որ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» մոտեցման նպատակը ոչ թե միջամտություն իրականացնող պետության ժողովրդավարական բնույթը ցույց տալն է, այլ արձանագրելը, որ իրավունքին կամ ազատությանը միջամտելը թույլատրելի դիտարկելու համար այդ միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում՝ նման անհրաժեշտությանը առաջադրվող չափով¹⁴⁴: Այս պայմանը չամրագրելու դեպքում էականորեն ընդլայնվում է պետության կողմից իրավունքին միջամտելու հնարավորությունը, ինչը նաև հակասում է ՀՀ միջազգային իրավական պարտավորություններին, մասնավորապես ՄԻԵԿ-ի շրջանակում մի շարք հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ (հողվածներ 6-րդ, 8-11-րդ և 4-րդ արձանագրության 2-րդ հողված):

Վենետիկի հանձնաժողովը ևս 2015 թ. սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ իր կարծիքում անդրադարձ է կատարել գործող Սահմանադրությունում «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պահանջը չամրագրելու խնդրին¹⁴⁵:

Մասնավորապես Վենետիկի հանձնաժողովը նշել է.

«40. 30-րդ (Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիություն

144. *Տե՛ս* Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փաստաբանների խմբի կարծիքը, Երևան, 2015 թ., https://lex.am/docs/lawyers%20opinion.pdf?fbclid=IwAR3XbFBdsvIXXB-zalH2ikc_EwTm4Ra6AV8sMYf65LFzFNaDOgsmc2vCAAPw:

145. *Տե՛ս* Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 757/2014, [https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm):

նր), 31-րդ (Բնակարանի անձեռնմխելիությունը), 32-րդ (Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը), 39-րդ (Ազատ տեղաշարժվելու իրավունքը), 40-րդ (Մտքի, խղճի և կրոնի ազատությունը), 41-րդ (Կարծիքի ազատությունը և տեղեկատվության ազատությունը), 43-րդ (Հավաքների ազատությունը) և 44-րդ (Միավորումների ազատությունը) մշակված են միևնույն կառուցվածքով՝ 1-ին մասը սահմանում է իրավունքը, իսկ 2-րդ մասը՝ դրա սահմանափակման լեզվաբանական նպատակները:

41. Այս հոդվածներից ոչ մեկում նախատեսված չէ համաչափության և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության սկզբունքը, որը պահանջվում է ՄԻԵԿ-ով այս հիմնական իրավունքների իրականացումը սահմանափակելիս: Իրականում, հայ նախագծողները նախընտրել են նախատեսել ընդհանուր դրույթ համաչափության սկզբունքի կիրառության վերաբերյալ բոլոր հիմնական իրավունքների սահմանափակումների դեպքում, ինչպես նաև դրույթ «հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության» մասին (80-րդ հոդված): Ափսոսում ենք, որ անհրաժեշտության կենտրոնական պահանջն այժմ «թաքնված» է համաչափության սկզբունքի վերաբերյալ հոդվածում և այն ներառված չէ առանձին հիմնական իրավունքների վերաբերյալ դրույթներում»:

Ըստ էության՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պահանջի ամրագրման «թաքնված» դրսևորման փորձ է համարվել գործող Սահմանադրության 78-րդ հոդվածը¹⁴⁶, որն ամրագրում է համաչափության սկզբունքը: Մինչդեռ համաչափության սկզբունքը կարող է համարվել վերոնշյալ պահանջի միայն մի բաղադրիչը և չի կարող ամբողջությամբ արտացոլել «ժողովրդավարական անհրաժեշտության» պահանջը: Վերջինիս նշանակությունը ոչ միայն մարդու իրավունքների սահմանափակման պահանջ լինելն է, այլև կոնցեպտուալ առումով մարդու իրավունքների և ժողովրդավարության միջև կապի առկայությունը:

Համաչափության սկզբունքի և ժողովրդավարական անհրաժեշտության ոչ համարժեք լինելու վերաբերյալ գնահատականը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գտած իրավական դիրքորոշումներից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» կոնցեպտի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ ՄԻԵԿ-ը մարդու իրավունքների սահմանափակման գնահատման չափանիշներից մեկը համարում է ժողովրդավարության հետ դրանց կապը, այն է՝ անհրաժեշտ լինելը: Ընդ որում՝ ՄԻԵԿ-ը այդ «անհրաժեշտությունը» գնահատելիս օգտագործում է տարբեր չափանիշներ, ինչպիսիք են սոցիալական անհրաժեշտությունը (*pressing social needs*), արդարացի հավասարակշռությունը՝ համաչափության սկզբունքը, բավարար և համապատասխան պատճառների առկայությունը և պետության հայեցողության սահմանները¹⁴⁷:

«Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» ձևակերպումը մեկնաբանվել է նաև Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 37 Ընդհանուր մեկնաբանությունում¹⁴⁸, որի համաձայն. «21-րդ հոդվածը սահմանում է, որ սահմանափակումները պետք է լինեն «անհրաժեշտ

146. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պիտանի և անհրաժեշտ պետք է լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները համարժեք պետք է լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

147. *St'u Sunday Times (I) v. UK*, ECtHR, Application No. 6538/74, Judgement of 29 April 1979, § 62 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57584>:

148. *St'u* Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 77, <https://digitallibrary.un.org/record/3884725?ln=en>:

ժողովրդավարական հասարակությունում»: Սահմանափակումները պետք է լինեն պիտանի և անհրաժեշտ ժողովրդավարության վրա հիմնված հասարակության, իրավունքի գերակայության, քաղաքական բազմակարծության և մարդու իրավունքների համատեքստում և պետք է լինեն ողջամիտ և նպատակահարմար: Այս սահմանափակումները պետք է համապատասխանեն ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը (*pressing social needs*), որը վերաբերում է սույն հոդվածում սահմանված նպատակներից որևէ մեկին»:

Այսպիսով, ինչպես բխում է վերոշարադրյալից, «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» ձևակերպումը լիարժեք կերպով չի արտացոլվել գործող սահմանադրական նորմերում՝ որպես սահմանափակումների թույլատրելիության գնահատման հիմք: Հետևաբար անհրաժեշտ է Սահմանադրության համապատասխան դրույթներում վերականգնել այդ ձևակերպումը՝ ապահովելով ՀՀ միջազգային պարտավորությունների և սահմանադրական երաշխիքների ներդաշնակեցումը:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 31-րդ (մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը), 32-րդ (բնակարանի անձեռնմխելիությունը), 33-րդ (հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը), 34-րդ (անձնական տվյալների պաշտպանությունը), 40-րդ (ազատ տեղաշարժվելու իրավունքը), 42-րդ (կարծիքի արտահայտման ազատությունը), 44-րդ (հավաքների ազատությունը), 45-րդ (միավորումների ազատությունը) հոդվածներում ամրագրել «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» ձևակերպումը որպես սահմանափակման թույլատրելիության գնահատման պահանջ:



ԲԱԺԻՆ 5.2

Մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակման հիմքերի վերանայման անհրաժեշտությունը

Գործող Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակման հիմքերը. «*Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով*»:

Սույն հոդվածում նախորդ Սահմանադրության համեմատությամբ ավելացել է «պետական անվտանգությունը»՝ որպես ազատության սահմանափակմամբ հետապնդվող նպատակ: Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ-ի վավերացրած պայմանագրերի, մասնավորապես ՄԻԵԿ-ի (9-րդ հոդված) և ԶԶԻԴ-ի (18-րդ հոդված) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում այս ազատության միջամտության համար պետական անվտանգության հիմքը նախատեսված չէ: Այսինքն՝ այս հոդվածը հակասության մեջ է ՀՀ միջազգային պարտավորությունների հետ, քանի որ նախատեսում է միջամտության լրացուցիչ հիմք, ինչը նախատեսված չէ, ապա և թույլատրելի չէ վկայակոչված միջազգային պայմանագրերով:

Մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակման հիմքերի սպառիչ բնույթին անդրա-

դարձել է ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում նշելով, որ սահմանափակումը կարող է համապատասխանել ՄԻԵԿ-ին միայն այն դեպքում, երբ հետապնդում է բացառապես թվարկված նպատակներից մեկը¹⁴⁹:

Ըստ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի, ի տարբերություն այլ հոդվածների (8-րդ, 10-րդ, 11-րդ), «պետական անվտանգությունը» որպես սահմանափակման հիմք, ներառված չէ ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածում: Սա պատահական չէ, քանի որ նման մոտեցումն արտացոլում է կրոնական բազմազանության՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից մեկի կարևորությունը այն հիմնավորմամբ, որ պետությունը չի կարող անձին թելադրել, թե ինչ կրոն նա պետք է դավանի, կամ միջոցներ ձեռնարկել անձի կողմից իր կրոնը փոխելու ուղղությամբ¹⁵⁰:

Հետևաբար այսպիսի սահմանափակման հիմքը հակասում է սահմանադրական այն սկզբունքին, համաձայն որի՝ սահմանադրորեն սահմանված սահմանափակումները չեն կարող գերազանցել միջազգային պարտավորություններով սահմանված սահմանափակումները¹⁵¹: Ուստի անհրաժեշտ է ապահովել այս հոդվածի համապատասխանությունը ՀՀ-ի կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «պետական անվտանգության» բառակապակցությունը:



ԲԱԺԻՆ 5.3
Սեփականության իրավունքի
սահմանափակման հիմքերի վերանայման անհրաժեշտությունը

Գործող Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 46-րդ հոդվածի 8-րդ մասը հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարումներ կատարելու պարտավորության ծագումը կապում էր միայն դրանց «օրենքով սահմանված կարգի և չափի» հետ:

Ներկայիս կարգավորմամբ հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարումներ վճարելու պարտականությունն արդեն ոչ թե անհրաժեշտաբար սահմանվելու է օրենքով, այլ օրենսդիրի որոշմամբ կարող է սահմանվել նաև ենթաօրենսդրական ակտերով, ինչը նշանակում է, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը (հարկ վճարելու պարտավորությունը) կարող է իրականացվել ոչ միայն օրենսդիր, այլև գործադիր մարմնի կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային ժողովի կողմից ընդունվող օրենքները թե՛

149. *Sh'u SvyatoMykhaylivska Parafiya v. Ukraine*, ECtHR, Application No 77703/01, Judgement of 14 June 2007 § § 132 and 137 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/fire?i=001-81067>:
150. *Sh'u Nolan and K. v. Russia*, ECtHR, Application No. 2512/04, Judgement of 12 February 2009, § 73 (անգլերեն), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-91302>:
151. *Sh'u* ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված:

իրենց ընդունման ընթացակարգով, թե՛ վերջիններիս նկատմամբ պահանջների տեսանկյունից ավելի խիստ են, ներկայիս իրավակարգավորումը նախկին իրավակարգավորման համեմատ սեփականության իրավունքից օգտվելու մասով հետընթաց է նախատեսում:

Ուստի առաջարկում ենք վերականգնել նախկին խմբագրությամբ Սահմանադրության կարգավորումը և 60-րդ հոդվածի 8-րդ մասը վերաձևակերպել հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ (Գլուխ 5)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք.

1. ՀՀ Սահմանադրության 31-րդ (մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը), 32-րդ (բնակարանի անձեռնմխելիությունը), 33-րդ (հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը), 34-րդ (անձնական տվյալների պաշտպանությունը), 40-րդ (ազատ տեղաշարժվելու իրավունքը), 42-րդ (կարծիքի արտահայտման ազատությունը), 44-րդ (հավաքների ազատությունը), 45-րդ (միավորումների ազատությունը) հոդվածներում ամրագրել *«անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»* ձևակերպումը որպես սահմանափակման թույլատրելիության գնահատման պահանջ:
2. ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասից հանել *«պետական անվտանգության»* բառակապակցությունը:
3. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասը ձևակերպել այսպես. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»:

Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանադրական սահմանափակման վերանայում



2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում վերանայվեց նաև ազատագրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանափակման շրջանակը: Մասնավորապես գործող Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն. «Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»: Նախորդ՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 30-րդ հոդվածը սահմանում էր, որ ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Ըստ էության՝ մինչև 2015 թ. սահմանադրական փոփոխությունները ընտրելու իրավունքից զրկված էին ազատագրկման դատապարտված և պատիժը կրող բոլոր քաղաքացիները՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ հանցագործություն են կատարել: Վերջին սահմանադրական փոփոխություններով ընտրելու իրավունքի այդ սահմանափակումը սահմանվեց սուբյեկտների ավելի նեղ շրջանակի՝ միայն դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձանց համար:



ԲԱԺԻՆ 6.1

Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ գործող սահմանադրական նորմի վերլուծությունը

2015 թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի համաձայն՝ դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի փոփոխության հիմքում ընտրական իրավունքի հնարավոր սահմանափակման շրջանակների վերանայումն է: Այն պայմանավորված է Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված «Ընտրությունների վերաբերյալ ուղեցույց»-ում տեղ գտած այն դիրքորոշմամբ, որ դատապարտյալները կարող են զրկվել ընտրելու իրավունքից միայն ծանր հանցագործությունների դեպքում: Սահմանադրությունում նման սահմանափակում սահմանելն ավելի նպատակահարմար է, քան պատիժը կրող դատապարտյալներին ընտրելու իրավունքից ընդհանրապես զրկելը¹⁵²:

152. ՀՀ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014 թ, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

2015 թ. կատարված փոփոխության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը¹⁵³ իր գնահատականում նշել է հետևյալը. «Վենետիկի հանձնաժողովը վերջերս ուսումնասիրել է մասնավորապես խորհրդարանից հանցագործների բացառման հարցը և եզրահանգում է արել, որ «ընտրվելու իրավունք չունենալը ազատ ընտրությունների իրավունքի սահմանափակում է. այդ իսկ պատճառով այն պետք է հիմնվի իրավունքի հատակ նորմերի վրա, հետապնդի լեգիտիմ նպատակ և պահպանի համաչափության սկզբունքը: Ընդհանուր հանրային շահերից է բխում խուսափել քաղաքական որոշումների կայացման գործընթացում հանցագործների ակտիվ դերակատարությունից: Համաչափությունը սահմանափակում է ոչ միայն այն դեպքերը, երբ սահմանափակումն ընդունելի է, այլև սահմանափակման տևողությունը. այն պահանջում է, որ հաշվի առնվեն այնպիսի տարրեր, ինչպիսիք են հանցագործության բնույթն ու ծանրությունը և/կամ պատժի տևողությունը»¹⁵⁴:

Ազատագրկման դատապարտված քաղաքացիների ընտրելու իրավունքի վերաբերյալ 2015 թ. փոփոխությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտրելու իրավունքի սահմանափակման առումով կատարված փոփոխությունը մի կողմից՝ եղել է առաջընթաց, իսկ մյուս կողմից՝ հետընթաց:

Մասնավորապես, նախկին կարգավորումների համաձայն, ընտրելու իրավունք չունեին միայն ազատագրկման դատապարտված անձինք՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ հանցագործություն էին կատարել: Կատարված սահմանադրական փոփոխությունը մի կողմից՝ այդ սահմանափակումը տարածել է միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձանց վրա (ինչն առաջընթաց է), մյուս կողմից՝ սակայն, որպես ընտրելու իրավունքի սահմանափակման պայման, պարտադիր է համարել այդ հանցագործությունների համար ցանկացած պատժի դատապարտված լինելը: Այս դեպքում առկա է հետընթաց նախորդ սահմանադրական նորմերի համեմատ, քանի որ ծանր հանցագործության դեպքում ազատագրկման հետ չկապված պատժի դատապարտվելու դեպքում անձը զրկվում է ընտրելու իրավունքից, մինչդեռ նախորդ սահմանադրական կարգավորումների պարագայում տվյալ անձն այդ իրավունքից չէր զրկվում, քանի որ նրա պատիժը ազատագրկումը չէր:



Բաժին 6.2

Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ օտարերկրյա սահմանադրական փորձը և միջազգային չափանիշները

Օտարերկրյա պետությունների փորձը դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի վերաբերյալ տարբեր երկրներում տարբեր է:

1. Պետությունների մի մասում բոլոր դատապարտյալներն ինքնաբերաբար զրկվում են ընտրելու իրավունքից (*blanket ban*):
2. Որոշ երկրներում դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքը սահմանափակվում է որոշակի պայմանների հիման վրա: Այս դեպքում սահմանափակումները հիմնված են կատարված հանցանքի ծանրության աստիճանի, տեսակի կամ ազատագրկման ժամկետի վրա: Օրինակ՝ Իսլանդիայում այդ ժամկետը առնվազն չորս տարի

153. *Stu* Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 757/2014, [https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm):

154. *Stu* Preliminary report on Exclusion of Offenders from Parliament, adopted by the Council for Democratic Elections at its 51th meeting (Venice, 18 June 2015) and by the Venice Commission at its 103rd Plenary Session (Venice, 19-20 June 2015), CDL-AD(2015)019, § 150 (անգլերեն), [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2015\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2015)019-e):

է¹⁵⁵: Ռուսիայում ազատագրված պատիժը կրող քաղաքացիները չեն կարող մասնակցել ընտրություններին, եթե նրանց նկատմամբ նշանակվել է 2 տարի ժամկետով ազատագրվածը գերազանցող հիմնական պատիժ: Որոշ երկրներում ընտրելու իրավունքի սահմանափակումը պայմանավորված է ընտրությունների տեսակով: Օրինակ՝ Չեխիայում և Լատվիայում ազատագրված դատապարտված անձինք իրավունք չունեն մասնակցելու տեղական ընտրություններին այն հիմնավորմամբ, որ տեղական նշանակության հարցերը նրանց վրա ազդեցություն չեն ունենում¹⁵⁶:

3. Երրորդ խումբ երկրներում¹⁵⁷ ազատագրված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի որևէ սահմանափակում սահմանված չէ: Այդպիսի երկրների շարքին են դասվում Խորվաթիան, Դանիան, Ֆինլանդիան, Մոնտենեգրոն, Նիդերլանդները, Պորտուգալիան, Սլովենիան, Շվեդիան, Շվեյցարիան:

Դատապարտված և պատիժը կրող անձանց՝ ընտրելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ պետությունների մեծ մասում¹⁵⁸ ընտրելու իրավունքը չի սահմանափակվում, եթե անձը դատապարտվում է ազատագրված հետ կապ չունեցող պատիժ:

Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ միջազգային չափանիշները տեղ են գտել այնպիսի միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործելակերպի կանոնագիրը»-ը¹⁵⁹, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների կոմիտեի թիվ 25-րդ Ընդհանուր մեկնաբանությունը¹⁶⁰ և այլն:

ՄԻԵԴ-ն առանձնակի ուշադրություն է ցուցաբերում, երբ խոսքը որևէ անձի կամ անձանց խմբի քվեարկելու իրավունքից զրկելու մասին է, որը պետք է հետապնդի օրինական նպատակ՝ միաժամանակ համապատասխանելով համամասնության խիստ պահանջներին¹⁶¹:

155. *Sh'u* The right of prisoners to vote: a global overview, Penal reform international, Penal Reform International, March 2016 (անգլերեն), https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2016/08/The-right-of-prisoners-to-vote_March-2016.pdf:

156. *Sh'u* նույն տեղում:

157. *Sh'u* Incarceration and Enfranchisement: International Practices, Impact and Recommendations for Reform, Brandon Rottinghaus Department of Political Science Northwestern University, IFES, p. 22, (անգլերեն), https://www.prisonpolicy.org/scans/08_18_03_Manatt_Brandon_Rottinghaus.pdf:

158. *Sh'u* The right of prisoners to vote: a global overview, Penal reform international, Penal Reform International, March 2016 (անգլերեն), https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2016/08/The-right-of-prisoners-to-vote_March-2016.pdf: Սույն ուսումնասիրության մեջ հետազոտվել է 66 պետության փորձը:

159. «Քվեարկելու և ընտրվելու իրավունքից զրկումը. ա. կարելի է նախատեսել մի դրույթ, որը կվերաբերի անձանց՝ քվեարկելու և ընտրվելու իրավունքից զրկված լինելուն, սակայն միայն հետևյալ ընդհանուր պայմանների դեպքում, ք. այն նախատեսված պետք է լինի օրենքով, գ. պետք է կիրառվի համամասնականության սկզբունքով. ընտրություններին առաջադրվելու իրավունքից անձանց զրկելու համար անհրաժեշտ պայմանները պետք է պակաս խիստ լինեն, քան քաղաքացիական իրավունքներից նրանց զրկելու պայմանները, դ. զրկումը պետք է հիմնավորված լինի մտավոր առողջության վերաբերյալ խնդիրների կամ լուրջ հանցագործության համար քրեական դատապարտման փաստով, ե. բացի այդ՝ քաղաքական իրավունքներից զրկումը կամ մտավոր առողջության վերաբերյալ խնդիրների բացահայտումը կարող է իրականացվել միայն օրինական դատարանի անաչառ որոշմամբ»: *Sh'u* Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրը. ՅուՆԵՍԿ-ի և բացատրական գեկույց, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 190/2002, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=C-DL-AD\(2002\)023rev2-cor-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=C-DL-AD(2002)023rev2-cor-arm):

160. Ընդհանուր մեկնաբանության 14-րդ պարբերությունը սահմանում է, որ ընտրական իրավունքների սահմանափակումները պետք է լինեն օբյեկտիվ և ողջամիտ: *Sh'u* Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 25 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/453883fc22.html>:

161. *Sh'u* Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի վերաբերյալ, Ազատ ընտրությունների իրավունք, ՄԻԵԴ (անգլերեն), https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_3_Protocol_1_HYE.pdf:

Մասնավորապես ՄԻԵԴ-ը նշել է, որ «1-ին արձանագրության 3-րդ հոդվածը, որն ամրագրում է անհատի ունակությունը՝ ներգործելու օրենսդիր իշխանության ձևավորման վրա, չի բացառում, որ ընտրական իրավունքների սահմանափակումներ կարող են սահմանվել անհատների նկատմամբ, ուլ-քեր, օրինակ, էսպես չարաշահել են պետական դիրքը, կամ որոնց վարքագիծը սպառնում է խաթարել իրավունքի գերակայությունը կամ ժողովրդավարության հիմունքները (...): Ընտրական իրավունքից զրկելու դաժան միջոցին, այնուամենայնիվ, չպետք է դիմել չափազանց հեշտությամբ, և համաչափության սկզբունքը պահանջում է ակնհայտ և բավարար կապ պատժի և անհատի վարքագծի և հանգամանքների միջև»¹⁶²:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Դատապարտյալների նկատմամբ վերաբերմունքի հիմնարար սկզբունքների մասին թիվ 45/111 բանաձևը սահմանում է, որ «բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանափակումներն ակնհայտորեն պայմանավորված են ազատությունից զրկված լինելու հանգամանքով, բոլոր դատապարտյալները պետք է ունենան Մարդու իրավունքների համընդ-հանուր հռչակագրում (իսկ պետության կողմից վավերացված լինելու դեպքում՝ նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրերում, ինչպես նաև ՄԱԿ-ի այլ կոնվենցիաներում) ամրագրված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները»¹⁶³:

ԵԽԽՎ-ն Ընտրելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ իր թիվ 1459 (2005) բա-նաձևում ԵԽ անդամ պետություններին կոչ է անում վերանայելու քրեական հանցագործության համար դատապարտված անձանց և զինվորականների ընտրելու իրավունքի առկա սահմանա-փակումները՝ նպատակ ունենալով վերացնելու բոլոր այն սահմանափակումները, որոնք այլևս անհրաժեշտ չեն և համաչափ չեն հետապնդվող իրավաչափ նպատակին¹⁶⁴:

Ամփոփելով օտարերկրյա պետությունների փորձն ու միջազգային չափանիշները՝ կա-րող ենք հանգել հետևյալին.

- 1. Ընտրական իրավունքի բացարձակ արգելքը դատապարտյալների համար համար-վում է ոչ իրավաչափ:**
- 2. Դատապարտյալի ընտրելու իրավունքի սահմանափակումը պետք է պայմանավոր-ված լինի ազատությունից զրկված լինելու հանգամանքով:**
- 3. Պետությունների մեծ մասը ընտրելու իրավունքի սահմանափակումը պայմանավո-րում է ազատագրկման դատապարտվելու հանգամանքով:**
- 4. Միջազգային փորձը դատապարտյալների ընտրելու իրավունքի սահմանափակման իրավակարգավորումների առումով զարգանում է այդ սահմանափակումների վե-րացման կամ մեղմացման ճանապարհով:**

162. *St'u* CEDH GC Hirst v. Great Britain, No. 2, ECtHR, Application No. 74025/01 Judgement of 6 October 2005, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-70442>:

163. *St'u* UN General Assembly, Basic Principles for the Treatment of Prisoners: resolution / adopted by the General Assembly, 28 March 1991 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/48abd5740.html>:

164. *St'u* Parliamentary Assembly Resolution 1459 (2005) Abolition of restriction on the right to vote (անգլերեն), <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17364&lang=en&fbclid=IwAR2xP7jCUSNdexYM4vhlxqB-ZYZXiG4p46ZiB5cirQdFZB-zbfU8DbhFuvIU>:



ԲԱԺԻՆ 6.3

Գործող սահմանադրական կարգի վերանայման անհրաժեշտությունը

Ըստ էության՝ դատապարտված անձանց՝ ընտրելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ գործող սահմանադրական նորմերի համադրումը առկա միջազգային փորձի հետ թույլ է տալիս արձանագրել, որ ազատագրված չդատապարտվածների ընտրելու իրավունքի սահմանափակման առումով ՀՀ 2015 թ. սահմանադրական փոփոխությունները խնդրահարույց են:

Այս առումով, ներկայացված միջազգային դրական փորձով, ինչպես նաև կատարված վերլուծությամբ պայմանավորված, կարծում ենք, որ դատապարտյալների ընտրելու իրավունքի բոլոր սահմանափակումների վերացումը կարող է դառնալ դրական փորձի և զարգացումների տեղայնացում: Ազատագրված ենթարկված անձանց համար ընտրելու իրավունքի իրացման հնարավորությունը մեր կարծիքով կարևոր է հետևյալ առումներով.

1. Այն կարող է նպաստել պատիժը կրելուց հետո անձանց վերաինտեգրմանը և հասարակության հետ սոցիալական կապերի ամրապնդմանը:
2. Այն դրական ազդեցություն կարող է ունենալ նրանց մեջ իրավունքի գերակայության սկզբունքի նկատմամբ հարգանքի ձևավորման վրա, իսկ ներկայացուցչական մարմնի ձևավորմանն անմիջական մասնակցությունը կարող է նպաստել այդ մարմնի իրավասության և նրա կողմից ընդունված ակտերի լեգիտիմության ճանաչմանը:
3. Այն համահունչ է նաև ՄԱԿ-ի Դատապարտյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն չափանիշների մասին կանոններին (Նելսոն Մանդելայի կանոններ), որոնց համաձայն՝ պատժի նպատակը դատապարտյալների վերականգնումը և կրկնահանգազորությունների նվազեցումն են¹⁶⁵:

ԱՌԱՋԱՐԿ (Գլուխ 6)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք վերացնել դատապարտված և պատիժը կրող անձանց՝ ընտրելու իրավունքի սահմանադրական սահմանափակումը և ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «4. Ընտրվելու իրավունք չունեն հանցագործության համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

165. *Stú* Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (անգլերեն), <https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/treatmentprisoners.pdf>:

Դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու իրավունքի սահմանադրական սահմանափակման վերանայում



Համայնքների լաված լինելու իրավունքի՝ որպես անմիջական ժողովրդավարության կառուցակարգի սահմանադրական ամրագրման վերանայում

Համայնքների լաված լինելու իրավունքը անմիջական ժողովրդավարության կառուցակարգերից է, որի սահմանադրական ամրագրումը տեղ է գտել ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածում:

Առհասարակ անմիջական ժողովրդավարության կառուցակարգերի ձևավորումը նպատակ ունի քաղաքացիներին լայնորեն ներգրավելու քաղաքական և ինստիտուցիոնալ որոշումների կայացմանը:

Համայնքային մակարդակում անմիջական ժողովրդավարության կառուցակարգերի սահմանադրական ամրագրումն ու գործնական իրացման երաշխիքների ապահովումը ժողովրդավարական և իրավական պետության կարևոր խնդիրներից են:

Անմիջական ժողովրդավարության մեխանիզմների համայնքային մակարդակում կիրառման սահմանադրական երաշխիքների ապահովումը էական նշանակություն ունի նաև տեղական ինքնակառավարման համակարգի կայացման, համայնքի բնակչի՝ տեղական նշանակության հարցերի լուծմանը մասնակցելու իրավունքի իրացման համար:

Կարևորելով անմիջական ժողովրդավարության ձևերի իրացման սահմանադրական երաշխիքների ամրագրումը՝ սույն գլխում անդրադառնում ենք համայնքի վարչական սահմանների փոփոխության դեպքում քաղաքական որոշումների վերաբերյալ համայնքի բնակիչների՝ կարծիք հայտնելու իրավունքին (համայնքի լաված լինելու իրավունք):



ԲԱԺԻՆ 7.1

Վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լաված լինելու իրավունքի իրացման միջազգային և սահմանադրական երաշխիքները

Համայնքների վարչական սահմանները փոփոխելիս համայնքների հետ խորհրդակցելու և նրանց լաված լինելու իրավունքի իրացման պարտավորությունը սահմանված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (այսուհետև նաև՝ ՏԻԵԽ) 5-րդ հոդվածով, որի համաձայն. «Տեղական ինքնակառավարման միավորի սահմանների ցանկացած փոփոխություն չպետք է կատարվի առանց նախապես խորհրդակցելու տեղական շահագրգիռ համայնքների հետ, հնարավորության դեպքում նաև հանրաքվե անցկացնելու միջոցով (եթե թույլատրված է օրենքով)»¹⁶⁶:

Հարկ է նշել, որ համայնքների հետ խորհրդակցելու ընդհանուր պարտավորությունը տեղ է գտել ՏԻԵԽ-ի 4-րդ հոդվածի 6-րդ մասում, որի համաձայն. «Պրանավորման և որոշում կայացնելու գործընթացներում, որոնք անմիջականորեն առնչվում են տեղական ինքնակառավարման մարմիններին, անհրաժեշտ է, հնարավորության դեպքում, ժամանակին և համապատասխան ձևով խորհրդակցել այդ մարմինների հետ»:

Մույն հոդվածում Խարտիան չի հստակեցնում խորհրդակցման, համայնքի կարծիքը լսելու մեխանիզմները: Մինչդեռ վարչական սահմանների փոփոխությունը համարելով համայնքի բնակչության համար խիստ կարևոր հարց՝ Խարտիան այն դարձրել է կարգավորման առանձին առարկա և սահմանել է, որ այս դեպքում համայնքի բնակչության լաված լինելու իրավունքի ամենացանկալի մեխանիզմը տեղական հանրաքվեն է: Տվյալ հանգամանքով է պայմանավորված նաև համայնքները միավորելիս կամ բաժանելիս նրանց լաված լինելու իրավունքի երաշխիքի ամրագրումը սահմանադրական մակարդակում:

Մինչև 2015 թ. փոփոխությունները Սահմանադրությունը սահմանում էր տեղական հանրաքվեն սահմանում էր որպես համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ համայնքների լաված լինելու իրացման եղանակ¹⁶⁷: Այսպես, ըստ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 110-րդ հոդվածի. «Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կատարվելուը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Վերջինների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից»:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանվեցին համայնքների միավորման կամ բաժանման նոր իրավաիրացնող կարգավորումներ: Մասնավորապես Սահմանադրության 190-րդ հոդվածը սահմանում է հետևյալը. «Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը»:

Կատարված փոփոխության հիմնավորումը որևէ կերպ չի արտացոլվել սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում:

166. Տե՛ս Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822>:
167. Թեև այդ հանրաքվեներն ունեին խորհրդատվական բնույթ:

Համայնքների լաված լինելու իրավունքի՝ որպես անմիջական ժողովրդավարության կառուցակարգի սահմանադրական ամրագրման վերամայում



ԲԱԺԻՆ 7.2

Վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լաված լինելու վերաբերյալ միջազգային չափանիշները

Ինչպես արդեն նշվել է, համայնքների լաված լինելու իրավունքն իր ամրագրումն է ստացել ՏԻԵՄ-ի 5-րդ հոդվածում, որի Բացատրական գեկույցի համաձայն¹⁶⁸. «Տեղական ինքնակառավարման մարմինների և տվյալ համայնքի բնակիչների համար ակնհայտորեն հիմնարար նշանակություն ունի համայնքի սահմանների փոփոխությունը, որի ծայրահեղ դրսևորումն է համարվում այլ համայնքի հետ դրա միավորումը: Թեև որոշ պետություններում ոչ իրատեսական է համարվում տեղական համայնքների կողմից այդպիսի փոփոխությունների նկատմամբ վետոյի կիրառումը, սակայն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի նախնական խորհրդակցությունը խիստ կարևոր է: Հանրաքվեները համարվում են հնարավորինս համապատասխան ընթացակարգ այդպիսի խորհրդակցությունների համար, սակայն մի շարք երկրներում այդ հարցով հանրաքվե նշանակելու վերաբերյալ օրենսդրական կարգավորում առկա չէ: Եթե օրենսդրական ակտերը չեն սպահովում պարտադիր հանրաքվե անցկացնելու վերաբերյալ իրավական հիմք, ապա պետք է օգտագործվեն խորհրդակցության այլ ձևեր»:

«Տեղական և տարածքային մարմինների կառուցվածքում և/կամ սահմաններին առնչվող բարեփոխումների իրականացման գործընթացի վերաբերյալ» հանձնարարականի¹⁶⁹ համաձայն. «15. Տեղական կամ տարածքային մարմինների կողմից կամավոր մասնակցության վրա հիմնված բարեփոխումներն ավելի նախընտրելի են, քան իշխանության բարձր օղակի կողմից իր լիազորության իրականացումը համապատասխան շահագրգիռ կողմերի կամքին հակառակ: «Ներքևից վերև» նախաձեռնությունը հաջողված բարեփոխման վերաձվելու համար պետք է լրացվի իշխանության բարձր օղակի որոշմամբ, եթե նույնիսկ դա տեղի է ունենում բարեփոխման մեջ ներգրավված որոշ մարմինների կամքին հակառակ: «Վերևից ներքև» նախաձեռնությունը հաջողված բարեփոխման վերաձվելու համար պետք է ձգտի սպահովելու կամավոր մասնակցություն բարեփոխման ենթակա տարածքային մարմինների մակարդակում: Ծախառուները և շահագրգիռ այլ կողմերը գործընթացում պետք է ընդգրկվեն նախապատրաստական փուլից սկսած: 16. Համայնքների միավորումը և նրանց սահմանները որևէ կերպ փոփոխող այլ վերանայումները պետք է իրականացվեն միայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով նախատեսված սկզբունքների համաձայն (ինչպիսիք են համայնքների հետ խորհրդակցությունը, հնարավորության դեպքում՝ դրա իրականացումը հանրաքվեով): 17. Բարեփոխման ցանկացած գործընթաց իր նախապատրաստական, որոշման կայացման, իրականացման և զնախատման փուլերում պետք է հիմնվի ինստիտուցիոնալ երկխոսության վրա, որը պետք է բավարարի արդյունավետության, թափանցիկության, հաշվետվողականության, ներկայացվածության և նպատակայնության պահանջները:

... Բ. 1. Առաջարկված բարեփոխման վերաբերյալ որոշումը պետք է կայացվի ինստիտուցիոնալ բարձրագույն օղակում, որին պետք է նախորդեն համապատասխան ինստիտուտների հետ խորհրդակցությունները (տե՛ս ինստիտուցիոնալ երկխոսության վերաբերյալ հանձնարարականները), և կարող է ազդեցություն կրել կամ եզրափակվել հանրաքվեով, եթե խորհրդակցության նման ձևը սահմանված է օրենքով»:

168. Տե՛ս Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի բացատրական գեկույց (անգլերեն), <https://rm.coe.int/16800ca437>:

169. Տե՛ս Recommendation Rec(2004)12 of the Committee of Ministers to member states on the processes of reform of boundaries and/or structure of local and regional authorities (անգլերեն), https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=090000116805dbeda:

Համայնքների կարծիքը լսելու և այն հաշվի առնելու վերաբերյալ միջազգային փորձը վկայում է, որ համայնքի բնակչությունը համայնքային սահմանների փոփոխության վերաբերյալ ակտերի առնչությամբ իրավական առումով «վետոյի իրավունք» չունի, սակայն պետությունները, հավատարիմ մնալով ժողովրդավարության և հանրային կառավարմանը մասնակցելու ու որոշումների կայացման գործընթացում համայնքի բնակիչների մասնակցության իրավունքի սկզբունքներին, համայնքների անհամաձայնության դեպքում հիմնականում ձեռնպահ են մնում նրանց կամքին հակառակ որոշում կայացնելուց: Համայնքների կամքին հակառակ նրանց սահմանների փոփոխման վերաբերյալ որոշումը կարող է կայացվել միայն բացառիկ դեպքերում՝ համայնքների ողջամիտ շահերով պայմանավորված, որը մանրամասն իրավական կարգավորման է ենթարկվում:

Ըստ միջազգային չափանիշների՝ վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լաված լինելու իրավունքը ենթադրում է, որ տեղական ինքնակառավարման միավորի սահմանների ցանկացած փոփոխություն իրականացնելիս (համայնքների միավորում կամ բաժանում, մի համայնքի վարչական տարածքի ներառում մեկ այլ համայնքի վարչական տարածքի մեջ) պետությունը նախապես, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պետք է խորհրդակցի տվյալ համայնքի/ համայնքների և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ և հաշվի առնի նրանց կարծիքը վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ: Ընդ որում՝ շահագրգիռ համայնքները պետք է մասնակցեն համայնքների վարչական սահմանների փոփոխման գործընթացի ինչպես նախապատրաստական, այնպես էլ բուն որոշման կայացման փուլին և ունենան իրական հնարավորություն իրենց կարծիքը հայտնելու և այն լսելի դարձնելու համար:

Միջազգային չափանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է համայնքների կարծիքը լսելու հիմնականում երկու եղանակ. 1) Ուղղակիորեն, այսինքն՝ համայնքի բնակչության կարծիքի վերհանում տեղական հանրաքվեների, հանդիպումների, կարծիքների հարցման և այլ միջոցներով: 2) Անուղղակիորեն, այսինքն՝ մունիցիպալ մարմինների կողմից կարծիք ներկայացնելու միջոցով:

Ընդ որում՝ այս երկու եղանակները ոչ թե բացառում, այլ փոխլրացնում են միմյանց և հիմնականում կիրառվում են միասնաբար: Ինչպես նշվեց վերևում, ՀՀ-ում սահմանադրական մակարդակում սահմանված է եղել և գործել է համայնքի կարծիքի վերհանման ուղղակի՝ տեղական հարաքվեի մեխանիզմը:

Այսպիսով՝ միջազգային չափանիշների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ տեղական ինքնակառավարման միավորի սահմանների փոփոխության գործընթացում համապատասխան համայնքների հետ խորհրդակցությունը պետք է իրականացվի նախապես և պետք է ապահովի շահագրգիռ համայնքների իրական մասնակցությունը գործընթացին՝ նախապատրաստական փուլից մինչև բուն որոշման կայացման փուլը:



ԲԱԺԻՆ 7.3

Վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լաված լինելու իրավունքն ամրագրող սահմանադրական նորմերի մեկնաբանությունը և դրա օրենսդրական իրացման խնդիրները

Նախկին սահմանադրական կարգավորումը տեղական հանրաքվեն ամրագրում էր որպես համայնքների լաված լինելու իրավունքի իրացման մեխանիզմ՝ պարտավորեցնելով Կառավարությանը Ազգային ժողով ներկայացվող օրինագծի վերաբերյալ կազմակերպել տեղական հանրաքվե:

Այդուհանդերձ, սահմանադրական այս ձևակերպումը չէր ընդգրկում օրենսդրական ողջ գործընթացում համայնքների մասնակցությունն ու ներգրավվածությունը, և նրանց լաված լինելու իրավունքը սահմանափակվում էր միայն վերջնական օրինագծի վերաբերյալ իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը հայտնելով: Դրա մասին էին վկայում նաև սահմանադրական տվյալ նորմի հիման վրա ընդունված օրենսդրական կարգավորումները, որոնք վերաբերում էին միայն տեղական հանրաքվեին և ամբողջական լուծումներ չէին տալիս համայնքների լաված լինելու իրավունքի լիարժեք իրացման համար:

Ինչ վերաբերում է գործող սահմանադրական կարգավորմանը, ապա թեև լաված լինելու իրավունքի սահմանադրական ամրագրումը տրամաբանորեն ավելի լայն հնարավորությունների դաշտ պետք է ստեղծեր այդ իրավունքի իրացման օրենսդրական ընդգրկումն մեխանիզմների սահմանման, հետևաբար և դրա լիարժեք իրացման համար, սակայն լաված լինելու իրավունքի իրացման ամրագրումը՝ որպես պառլամենտի պարտավորություն, տարաբնույթ և սահմանափակ մեկնաբանությունների տեղիք է տալիս և գործնականում հանգեցրել և հանգեցնում է իրավաիրացման խնդիրների:

Այսպես՝ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված Ազգային ժողովի՝ «համայնքների կարծիքը լսելու պարտավորությունը» տարիներ շարունակ իր հետագա ամրագրումը օրենսդրական մակարդակում չէր ստանում¹⁷⁰: Այս իրավական բացը պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2015 թ. սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ Ազգային ժողովը 16.12.2016 թ. ընդունված «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-238-Ն օրենքով ուժը կորցրած էր ճանաչել տեղական հանրաքվե նշանակելու վերաբերյալ նորմը (7-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերություն) և դրա փոխարեն որևէ այլ նորմ չէր ընդունել:

Այսպես՝ համայնքային սահմանների փոփոխության դեպքում համայնքների կարծիքը լսելու վերաբերյալ իրավահարաբերությունները երկար ժամանակ օրենսդրորեն կարգավորված չեն եղել, հետևաբար օրենքով սահմանված չեն եղել համայնքների լաված լինելու իրավունքի իրականացման եղանակները, մեխանիզմները, ընթացակարգը, ինչպես նաև այդ կապակցությամբ համապատասխան մարմինների պարտականությունները:

Նման իրավական բացի պայմաններում համայնքների լաված լինելու իրավունքը դիտարկվել է պարզապես «որպես պառլամենտական լուծումներին մասնակցելու իրավունք» կամ «ԱԺ լիազու-

170. Գործող Սահմանադրության անցումային դրույթներում այդպիսի օրենսդրական փոփոխություն կատարելու հստակ ժամկետ սահմանված չէ:

մար նիստին մասնակցելու իրավունք»¹⁷¹, ինչը խախտում էր ՀՀ միջազգային պարտավորությունները ՏԻԵԽ-ի 5-րդ հոդվածի մասով:

Միայն 2019 թ. դեկտեմբերի 19-ին, ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածում ամրագրված դրույթներով պայմանավորված, Ազգային ժողովն ընդունել է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքը, որի համաձայն՝ Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքների բնակիչները համայնքների միավորման կամ բաժանման հարցով կարող են նախաձեռնել տեղական հանրաքվե:

Մույն օրենքի հիմնավորման մեջ նշվում է, որ «գործող Սահմանադրությունը համայնքների կարծիքը պարտադիր կերպով լսելու պարտավորությունը վերապահել է ոչ թե գործադիր իշխանությանը, այլ օրենսդիր մարմնին, սակայն առանց տեղական հանրաքվե անցկացնելու պայմանի: Տեղական հանրաքվե անցկացնելու վերաբերյալ սահմանադրական համապատասխան նորմի բացակայությունն ի սկզբանե կանխորոշում է համայնքների կարծիքը լսելու այլ ձևաչափեր սահմանելու անհրաժեշտությունը: Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են բացառապես Սահմանադրությամբ, իսկ այդ լիազորությունների իրականացման ընթացակարգը՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով: «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը՝ քաղաքացիական հասարակության ձայնը, հանրային կարծիքը լսելու, տվյալ դեպքում համայնքի կարծիքը լսելու համար սահմանել է խորհրդարանական լուսններ կազմակերպելու և անցկացնելու իրավական հնարավորությունը, որի կարգավորումներից դուրս, ըստ էության, Ազգային ժողովը այլ ձևաչափերով կարծիք լսելու հնարավորություն չունի: Այդ իսկ պատճառով համայնքների միավորման կամ բաժանման դեպքերում համայնքների կարծիքը լսելու պարտավորությունը գործնականում Ազգային ժողովի վրա դնելը չի իրացնելու համայնքների լաված լինելու իրավունքը»¹⁷²:

Վերոնշյալ հիմնավորումից երևում է, որ հանրային քաղաքականություն մշակող մարմինը հիմք է ընդունել սահմանադրական նորմի սահմանափակ մեկնաբանությունը, այսինքն՝ այդպիսի պարտավորության՝ միայն օրենսդիր մարմնի համար սահմանված լինելը: Հենց այդ մոտեցման համատեքստում է առաջարկվել փոփոխություններ կատարել «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում՝ նպատակ ունենալով այդ առումով ապահովել համապատասխանությունը ՏԻԵԽ-ին: Մինչդեռ հարկ է արձանագրել, որ թեև այս օրենսդրական փոփոխությունը միտված էր համայնքների բնակչության լաված լինելու իրավունքի լիարժեք իրացմանը, սակայն, ըստ էության, այդ նպատակին չի ծառայել, քանի որ **կատարված օրենսդրական փոփոխությունը չի համապատասխանում համայնքների լաված լինելու իրավունքի վերաբերյալ ՀՀ միջազգային պարտավորություններին ու միջազգային չափանիշներին:**

Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունը, ըստ էության, կարգավորում է Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական հանրաքվեով համայնքների կարծիքի վերհանման ինստիտուտը, ինչը բխում է ՏԻԵԽ-ի 5-րդ հոդվածից: Սակայն, ըստ կատարված օրենսդրական փոփոխության, համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու սուբյեկ-

.....
171. Այսպիսի մեկնաբանությամբ է հիմնավորվում 4 տարի շարունակ համապատասխան օրենսդրական փոփոխությունների բացակայությունը:
172. Տե՛ս նախագիծը՝ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10848&Reading=0>:

Համայնքների լաված լինելու իրավունքի՝ որպես անմիջական ժողովրդավարության կառուցակարգի սահմանադրական ավագործումն վերամայում

տը համայնքի բնակիչներն են (պահանջվում են համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց առնվազն 20%-ի ստորագրությունները): Փաստորեն Կառավարությունը այս հարցով նախաձեռնող սուբյեկտ չէ: Այսպիսի օրենսդրական կարգավորումը, ըստ էության, Կառավարության՝ համայնքների կարծիքը վերհանելու և այն լսելու պարտավորությունը ուղղակիորեն «փոխանցում է» համայնքի բնակիչներին՝ նրանց համար սահմանելով տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք: Ըստ այդմ՝ համայնքի բնակիչների՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու հարցով տեղական հանրաքվե կանցկացվի միայն այն համայնքներում, որտեղ համայնքի բնակիչները կորոշեն իրացնել տեղական հանրաքվե նախաձեռնելու իրենց իրավունքը:

Հետևաբար տեղական հանրաքվեով համայնքների կարծիքը լսելու ինստիտուտը ներկայացված օրենսդրական փոփոխության համատեքստում չի պարունակում դրա իրավաիրացման անհրաժեշտ երաշխիքներ, քանի որ դրա իրացումը պայմանավորված է համայնքի բնակիչների ակտիվությամբ: Այս պարագայում պետությունը, ի դեմս իր մարմինների, պասիվ դերակատար է դառնում և իր պարտավորությունը «դարձնելով» համայնքի բնակիչների «իրավունք»՝ չի կրում որևէ օրենսդրական պարտավորություն իր միջազգային պարտավորության իրականացման համար:

Այսպիսով՝ ներկայացված վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Սահմանադրությամբ սահմանված համայնքների լաված լինելու իրավունքի վերաբերյալ ձևակերպումն ամբողջովին չի արտացոլում ՀՀ միջազգային պարտավորություններն ու միջազգային չափանիշները, հետևաբար չի ապահովում համայնքի բնակչության կողմից, որպես ուղղակի ժողովրդավարության դրսևորում, հանրային կառավարմանը մասնակցելու իր իրավունքի լիարժեք իրացումը: Սահմանադրական նորմը պետք է երաշխավորի լաված լինելու իրավունքի լիարժեք իրացումը օրենսդրական գործընթացի բոլոր փուլերում և ապահովի այդ իրացման համար պատասխանատու մարմինների ընդգրկուն շրջանակի ամրագրումը:

Սահմանադրական գործող նորմը, ըստ այդմ, անհրաժեշտ է փոփոխել՝ համապատասխանեցնելով այն ՏԻԵԽ-ի շրջանակում ՀՀ-ի ստանձնած պարտավորությունների շրջանակին և միջազգային չափանիշներին՝ հաշվի առնելով նաև տեղական հանրաքվեով համայնքի կարծիքի վերհանման նախորդ դրական սահմանադրական փորձը: Դրանով իսկ հնարավոր է ապահովել լաված լինելու իրավունքի լիարժեք իրացումը օրենսդրական գործընթացի ամբողջ ընթացքում:

ԱՌԱՋԱՐԿ (Գլուխ 7)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք Սահմանադրության 190-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ.

«Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել:

Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը Կառավարությունը օրենքով սահմանված կարգով նախապես խորհրդակցում է համապատասխան համայնքների հետ:

Կառավարությունը համայնքների բնակիչների կարծիքի վերհանման նպատակով նշանակում է տեղական հանրաքվեներ: Վերջինների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը:

Համայնքների լաված լինելու իրավունքի իրացման երաշխիքները սահմանվում են օրենքով»:



Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրական բովանդակության վերանայում

2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Յուրաքանչյուր ոչ իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև սպորինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում»:

Սույն իրավանորմը, ըստ էության, ամրագրում է յուրաքանչյուրի՝ իր մասին տվյալներին ծանոթանալու, դրանց շտկում կամ վերացում պահանջելու իրավունքը: Ընդ որում՝ նշված իրավունքը տարածվում է միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում անձի վերաբերյալ առկա տվյալների վրա:

Մինչդեռ յուրաքանչյուրի՝ իր մասին տվյալներին ծանոթանալու, դրանց շտկում կամ վերացում պահանջելու իրավունքը պետք է տարածվի նաև մասնավոր սուբյեկտների մոտ առկա անձնական տվյալների վրա: Այդպիսի բովանդակությամբ է սույն իրավունքն ամրագրված ՀՀ-ի կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան միջազգային պայմանագրերում և դրանց մեկնաբանություններում:

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի միջազգային ամրագրումների բովանդակային շրջանակը և գործող սահմանադրաիրավական կարգավորման թերի բնույթը

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 17-րդ հոդվածի (մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք)¹⁷³ վերաբերյալ թիվ 16 Ընդհանուր մեկնաբանության համաձայն. «10... Մասնավոր կյանքի առավել արդյունավետ պաշտպանության համար յուրաքանչյուր ոչ իրավունք պետք է ունենա հավաստիանալու, թե ինչ անձնական տվյալներ են առկա ավտոմատացված բազաներում և ինչ նպատակով: Յուրաքանչյուր ոչ իրավունք պետք է ունենա տեղեկանալու, թե որ պետական մարմիններն ու մասնավոր սուբյեկտներն են վերահսկում կամ կարող են վերահսկել այդ տվյալները: Եթե այդ բազաները պարունակում են անձնական ոչ ճիշտ տվյալներ, կամ տվյալները հավաքվել են կամ մշակվել են օրենքի խախտմամբ, ապա յուրաքանչյուր ոչ իրավունք ունի պահանջելու ուղղել կամ վերացնել դրանք»¹⁷⁴:

Յուրաքանչյուրի՝ իր մասին տվյալներին ծանոթանալու, տվյալների շտկում կամ վերացում

173. **Հոդված 17.** «1. Արգելվում է կանայական կամ անօրինական միջամտությունը անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ: 2. Յուրաքանչյուր ոչ ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվածության իրավունք»:

174. Տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.16, կետ 10 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/453883f922.html>:

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրական բովանդակության վերանայում

պահանջելու իրավունքը ամրագրված է նաև ՀՀ-ի կողմից 09.05.2012 թ. վավերացված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիայում¹⁷⁵, որի 8-րդ հոդվածի (Տվյալների սուբյեկտների լրացուցիչ երաշխիքները) համաձայն.

«Ցանկացած անձի հնարավորություն պետք է տրվի.

ա. պարզելու անձնական տվյալների ավտոմատացված ֆայլի գոյությունը, դրա հիմնական նպատակները, ինչպես նաև ֆայլի վերահսկիչի ինքնությունը, բնակության և աշխատանքի հիմնական վայրերը,

բ. ողջամիտ պարբերականությամբ և առանց ավելորդ հետաձգման կամ ծախսի ստանալու հաստատում, թե արդյոք իրեն առնչվող անձնական տվյալները պահպանվում են ավտոմատացված տվյալների ֆայլում, ինչպես նաև ստանալու այդ տվյալները իր համար դրույթներով եղանակով,

գ. անհրաժեշտության դեպքում հասնելու այդ տվյալների ուղղմանը կամ ոչնչացմանը, եթե դրանք մշակվել են ներպետական իրավունքի դրույթների խախտմամբ՝ կիրառելով սույն կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներում ամրագրված հիմնական սկզբունքները,

դ. օգտվելու իրավական պաշտպանությունից այն դեպքերում, երբ հաստատման հարցումը կամ, հանգամանքներով պայմանավորված, սույն հոդվածի «բ» և «գ» պարբերություններում նշված ստացումը, ուղղումը կամ ոչնչացումը չեն կատարվել»:

Վերոնշյալ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիան վավերացրած պետությունները պարտավորվում են կիրառել դրա դրույթները պետական և մասնավոր ոլորտներում¹⁷⁶:

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի բացատրական գեկույցը¹⁷⁷ և ս շեշտադրում է պետության պարտավորությունը ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորում սույն կոնվենցիայի դրույթների կիրառման առումով:

Գործող Սահմանադրության 34-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի՝ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շրջանակով սահմանափակվածության առումով խնդրահարույց բնույթը շեշտադրել է նաև Վենետիկի հանձնաժողովը՝ նշելով. «45. 33-րդ հոդվածում (Անձնական տվյալների պաշտպանությունը) նախատեսված իրավունքները՝ ծանոթանալու իր մասին տվյալներին, պահանջելու տվյալների շտկում կամ վերացում, ողջունելի են: Դրանք, այնուամենայնիվ, չպետք է սահմանափակվեն պետական իշխանությունների կողմից ստեղծված տվյալների բազաներով¹⁷⁸»:

175. Տե՛ս «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիա, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554>:

176. Տե՛ս նույն տեղում, 2-րդ և 3-րդ հոդվածներ:

177. Տե՛ս Explanatory Report to the Protocol amending the Convention for the Protection of Individuals with regard to Automatic Processing of Personal Data (անգլերեն), <https://rm.coe.int/cets-223-explanatory-report-to-the-protocol-amending-the-convention-fo/16808ac91a>:

178. Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 757/2014, [https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm):

ԱՌԱՋԱՐԿ (Գլուխ 8)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 3-րդ մասում *«պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում»* բառերը փոխարինել *«հանրային կամ մասնավոր սուբյեկտի մոտ»* բառերով:

Ազատ արտահայտվելու իրավունքի սահմանադրական ամրագրման վերանայում



2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը (կարծիքի արտահայտման ազատությունը) ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և, անկախ պետական սահմաններից, տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը...»

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության նույնաբովանդակ դրույթը (հոդված 27) ուներ հետևյալ ձևակերպումը.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության վերոնշյալ հոդվածի ձևակերպումը հիմնված էր Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածում տեղ գտած ամրագրման բովանդակության վրա, իսկ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով փորձ է կատարվել մոտարկել ազատ արտահայտվելու իրավունքի սահմանադրական ամրագրման տեքստը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի եզրույթաբանությամբ, ինչի հետևանքով ներկայիս ձևակերպումը որոշակի եզրույթաբանական շփոթ և բովանդակային անհստակություն է առաջացնում: Անդրադառնանք ազատ արտահայտման իրավունքի միջազգային ամրագրումներին, որպեսզի ավելի ակնհայտ դառնան սահմանադրական ամրագրման հիմքում դրված ձևակերպումների խնդիրը և դրանց բովանդակությունը:

ՔՔԻԴ-ի 19-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալու իր կարծիքներին:

2. Յուրաքանչյուր մարդ ունի ազատ արտահայտվելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի տեղեկություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից»:

Այսպիսով՝ թե՛ ՔՔԻԴ-ը, թե՛ ՄԻԵԿ-ը օգտագործում են «ազատ արտահայտվելու իրավունք» եզրույթը և չեն օգտագործում «կարծիքն ազատ արտահայտելու իրավունք» կամ «կարծիքի արտահայտման ազատություն» ձևակերպումները: Ընդ որում՝ «իր կարծիքին հավատարիմ մնալու» իրավունքը ՔՔԻԴ-ով ամրագրված առանձին իրավունք է, որը ենթակա չէ սահմանափակման:

ՄԻԵԿ-ի կարգավորմամբ սեփական կարծիք ունենալու ազատությունը ներառում է ինչպես ազատ արտահայտման, այնպես էլ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու և ստանալու իրավունքը: Մինչդեռ ժամանակ «արտահայտման ազատության» բովանդակությունը շատ ավելի լայն է, քան «կարծիքի» արտահայտումը և կարող է դրսևորվել ամենատարբեր ձևերով, այդ թվում՝ նաև գեղարվեստական արտահայտման, հագուստի, գործողությունների և այլ միջոցներով¹⁷⁹, ինչը չի կարող տեղավորվել «կարծիք» եզրույթի բովանդակության մեջ:

Այսպիսով չ՛հ Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրված «կարծիքի ազատ արտահայտման իրավունքի» բովանդակությունը չի համընկնում չ՛հ-ի կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված որևէ իրավունքի բովանդակության հետ: Սա ոչ միայն ստեղծում է եզրույթաբանական շփոթ, այլև «ազատ արտահայտման իրավունքի»՝ որպես առանձին իրավունքի սահմանադրական ամրագրման բացակայության պայմաններում հանգեցնում է այդ իրավունքի բովանդակության ոչ լիարժեք ամրագրման:

ԱՌԱՋԱՐԿ (Գլուխ 9)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք վերականգնել 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության իրավական կարգավորումը և Սահմանադրության 42-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ.

- «1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:*
- 2. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:*
- 3. Ազատ արտահայտվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:*

179. S'tu Guide on Article 10 of the European Convention on Human Rights (անգլերեն), https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_10_ENG.pdf:

Ազատ արտահայտվելու իրավունքի սահմանադրական ամրագրման վերամայում

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթները մեկնաբանող սուբյեկտների հստակեցում



«Տահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:*»

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում էր, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: 2015 թ. փոփոխություններից հետո «միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան» ձևակերպումը տեղ չգտավ տվյալ հոդվածում: Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների կապը միջազգային իրավունքի, մասնավորապես ՀՀ-ի վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի հետ իր ամրագրումը ստացավ Սահմանադրության վերը հիշատակված 81-րդ հոդվածում:

Հոդվածն ինքնին նախատեսված է որպես մարդու իրավունքների պաշտպանության բարձրագույն չափանիշների ապահովման գործուն մեխանիզմ:

Միևնույն ժամանակ Սահմանադրությամբ հստակ չեն մատնանշվում այն սուբյեկտները, որոնք պետք է մեկնաբանեն հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները:

Գործող Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելն ու պաշտպանելը հանրային իշխանության պարտականություններն են: Հետևաբար հանրային իշխանության բոլոր մարմինները հիմնական իրավունքները և ազատությունները հարգելու և պաշտպանելու իրենց սահմանադրաիրավական պարտականության իրականացման շրջանակում անհրաժեշտաբար մեկնաբանում են Սահմանադրության դրույթները: Սա հավասարապես պետք է վերաբերի ինչպես օրենսդիր, գործադիր և դատական մարմիններին, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններին:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարծում ենք, որ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հստակ ամրագրել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները մեկնաբանող սահմանադրաիրավ-

րավական սուբյեկտների ամբողջական շրջանակը, այն է՝ հանրային իշխանության բոլոր մարմինների շրջանակը:

ԱՌԱՋԱՐԿ (Գլուխ 10)

Սույն գլխում քննարկված խնդիրների և ներկայացված փաստարկների արդյունքում առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխել և վերաշարադրել հետևյալ կերպ. «*Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հանրային իշխանության բոլոր մարմինները հաշվի են առնում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային սլայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան*»:





Եզրահանգում

Այսպիսով՝ «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության իրականացրած՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների վերանայում և կատարելագործում» վերտառությամբ հետազոտության շրջանակում վերհանվել և հիմնավորվել է Սահմանադրության 2-րդ, 3-րդ գլուխներում և հարակից հոդվածներում ամրագրված մարդու իրավունքների մի շարք երաշխիքների վերանայման և կատարելագործման անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով իրականացված հետազոտությունը՝ ՄԻՀԿ-ն դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը և Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին՝ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում հետևյալ մոտեցումները ներառելու առաջարկով.

1. Վերացնել Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատումը՝ սահմանադրական ամրագրում ստացած բոլոր տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները (*բժշկական սպասարկման և բուժօգնության, առողջ շրջակա միջավայրի, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի, աշխատանքի նվազագույն վարձատրության, պատշաճ կենսամակարդակի, սոցիալական սպահովության, մշակութային կյանքին մասնակցելու, գիտական նվաճումներից օգուվելու...*) ամրագրելով որպես անմիջական գործող, հիմնական իրավունքներ և վերականգնելով անհատների և Մարդու իրավունքների պաշտպանի իրավունքը՝ Սահմանա-

դրական դատարանի առջև բարձրացնելու վերոնշյալ իրավունքների սահմանադրաիրավական բովանդակությանը նորմատիվ իրավական ակտերի դրույթների համապատասխանության հարցը (սահմանադրականության վիճարկելիությունը): Տվյալ մոտեցման հիմնավորումը, ուսումնասիրված խնդիրները և ներկայացվող առաջարկները տեղ են գտել հետազոտության 1-ին գլխում:

2. Վերանայել և կատարելագործել Սահմանադրության 2-րդ, 3-րդ գլուխներում և հարակից հոդվածներում ամրագրված մարդու իրավունքների մի շարք երաշխիքներ (*մասնավորապես՝ շրջակա միջավայրի իրավունքների, երեխայի իրավունքների, հավասարության սպահովման, դատասպարտյալների ընտրական իրավունքի, համայնքների լաված լինելու իրավունքի, անձնական տվյալների պաշտպանության, ազատ արտահայտվելու իրավունքի սահմանադրաիրավական երաշխիքները, վերանայել և հատակեցնել մարդու իրավունքների սահմանափակման հիմքերը և հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթները մեկնաբանող սուբյեկտների շրջանակը*): Տվյալ հայեցակարգային մոտեցմանն առնչվող խնդիրներն ու ներկայացվող առաջարկները տեղ են գտել հետազոտության 2-10-րդ գլուխներում:

Լիահույս ենք, որ վերոնշյալ հայեցակարգային մոտեցումները տեղ կգտնեն առաջիկա սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում, և վերանայված Սահմանադրությունը կերաշխավորի Հայաստանում մարդու իրավունքների ու ազատությունների սահմանադրաիրավական պաշտպանության ավելի բարձր մակարդակ:

Հետազոտության աղբյուրների ցանկ

Մասնագիտական գրականություն

«Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն» վերլուծական զեկույց, Աշխատանքի միջազգային կազմակերպություն և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, 2015 թ.,

https://www.armstat.am/file/article/national_child_labour_survey_in_armenia_report_-_web_version.pdf

Էկոլոգիական քաղաքականությունը Հայաստանում, Վ. Բուռնազյան,

<https://ge.boell.org/en/2019/06/24/ekologiakan-kaghakakanowtyowne-hayastanowm>

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014 թ.,

<http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փաստաբանների խմբի կարծիքը, Երևան, 2015 թ.,

https://lex.am/docs/lawyers%20opinion.pdf?fbclid=IwAR3XbFBdsvIxXBzaIH2ikc_EwTm4Ra6AV8sMYf65LFzFNaDOgsmc2vCAAPw

Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Երևան, 2016թ.,

http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf

Մասնագիտական կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ գլուխների վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիք ներկայացնող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի աշխատանքային խումբ, Երևան, 2015 թ.,

http://advocates.am/images/handznazhoghovner/sahmanadrakan_31082015/Kartcik-Sahmanadrutyun-verjnakan_compressed.pdf?fbclid=IwAR3Es6BXWLQARec2Mrh00rAG7RtORwYk3XYriDayehJI4exIPFsFExmHqCU

ՄԻՊ արտահերթ զեկույց, Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունները կատարումը վիճարկելու վերաբերյալ,

<https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbc7edd99b443608b0.pdf>

Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի վերաբերյալ, Ազատ ընտրությունների իրավունք, ՄԻԵԴ,

https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_3_Protocol_1_HYE.pdf

The Justiciability of Social and Economic Rights: An Updated Appraisal (անգլերեն), http://www.socialrights.ca/Publications/porter_the_justiciability_of_social_and_economic_rights%20copy.pdf

Economic, Social and Cultural Rights Handbook for National Human Rights Institutions, OHCHR, HR/P/PT/12, New York and Geneva, 2015 (անգլերեն),
<https://www.ohchr.org/Documents/Publications/training12en.pdf>

Factsheet – Environment and the ECHR (անգլերեն),
https://www.echr.coe.int/documents/fs_environment_eng.pdf

Free and compulsory education for all children: the gap between promise and performance, K. Tomaševski, 2001 (անգլերեն),
https://www.right-to-education.org/sites/right-to-education.org/files/resource-attachments/Tomasevski_Primer%202.pdf

Guide on Article 10 of the European Convention on Human Rights (անգլերեն),
https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_10_ENG.pdf

Incarceration and Enfranchisement: International Practices, Impact and Recommendations for Reform, Brandon Rottinghaus Department of Political Science Northwestern University, IFES (անգլերեն),
https://www.prisonpolicy.org/scans/08_18_03_Manatt_Brandon_Rottinghaus.pdf

International Commission of Jurists. Courts and the Legal Enforcement of Economic, Social and Cultural Rights. Comparative experiences of justiciability. Geneva: International Commission of Jurists, 2008 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/4a7840562.html>

Moving Towards Inclusive Education as a Human Right: An Analysis of International Obligations to Implement Inclusive Education in Law and Policy. Maastricht University Faculty of Law (անգլերեն),
https://www.right-to-education.org/sites/right-to-education.org/files/resource-attachments/Maastricht_University_Moving_Towards_Inclusive_Education_as_a_Human%20Right_2014_1.pdf

P. Alston, J. Tobin, Laying the Foundations for Children’s Rights: An Independent Study of some Key Legal and Institutional Aspects of the Impact of the Convention on the Rights of the Child, UNICEF, 2005 (անգլերեն),
https://www.unicef-irc.org/publications/pdf/ii_layingthefoundations.pdf

Submission to the UN High Commissioner for Human Rights on the right to work and the implementation of the Sustainable Development Goals (անգլերեն),
https://archive.crin.org/sites/default/files/submission_right_to_work_and_sdgs.pdf

Th. A Human Rights Model of Disability , T. Degener, 2014 (անգլերեն),
https://www.researchgate.net/publication/283713863_A_human_rights_model_of_disability#read

The Environmental Jurisprudence of Costa Rica's Constitutional Court (անգլերեն),
<http://environmentalrightsdatabase.org/the-environmental-jurisprudence-of-costa-ricas-constitutional-court/>

The right of prisoners to vote: a global overview, Penal reform international, Penal Reform International, March 2016 (անգլերեն),
https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2016/08/The-right-of-prisoners-to-vote_March-2016.pdf

The Status of Constitutional Protection for the Environment in Other Nations, Paper 4, David R. Boyd, 2013 (անգլերեն),
<https://davidsuzuki.org/wp-content/uploads/2013/11/status-constitutional-protection-environment-other-nations.pdf>

Who Gets to Decide? Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial Disabilities, Council of Europe, 2012 (անգլերեն),
<https://rm.coe.int/who-gets-to-decide-right-to-legal-capacity-for-persons-with-intellectu/16807bb0f9>

Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթեր

Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիա,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554>

Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին ԱՄԿ կոնվենցիա,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=29926>

Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիա,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75858>

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505>

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիա,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=55690>

ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա),

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=77849>

ՄԱԿ-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա,

http://www.un.org/res/un%20Treaties/III_2.pdf

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր,

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347>

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրություն,

http://www.parliament.am/draft_docs7/K-608_ardzanagrutyun.pdf

ՄԱԿ-ի Բաղադրական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500>

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230>

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822>

ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ

ՄԴՌ-649, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=27418>

ՄԴՌ-677, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=31167>

ՄԴՌ-723, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=41434>

ՄԴՌ-731, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=41695>

ՄԴՌ-792, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=50005>

ՄԴՌ-902, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=59484>

ՄԴՌ-913, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60838>

ՄԴՌ-919, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=61311>

ՄԴՌ-920, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=61436>

ՄԴՈ- 966, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68577>

ՄԴՈ-991, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=71431>

ՄԴՈ-1061, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=80168>

ՄԴՈ-1075, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=81788>

ՄԴՈ-1142, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=89650>

ՄԴՈ-1148, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=89906>

ՄԴՈ- 1197, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=96759>

ՄԴՈ-1224, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=99196>

ՄԴՈ-1291, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1291.pdf>

ՄԴՈ-1325, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1325.pdf>

ՄԴՈ-1333, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1333.pdf>

ՄԴՈ-1412, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2018/pdf/sdv-1412.pdf>

ՄԴՈ-1424, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123923>

ՄԴՈ-1438, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=127838>

ՄԴՈ-1447, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1447.pdf>

ՄԴՈ-1504, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138724>

ՄԴՈ- 1506, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139611>

ՄԴՈ-1515, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1515.pdf>

ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների պրակտիկա

Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 5 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/4538834f11.html>

Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 12 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/4ae562c52.html>

Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 14 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/51a84b5e4.html>.

Երեխայի իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 20 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/589dad3d4.html>

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.1 (անգլերեն),
<https://www.ohchr.org/en/hrbodies/crpd/pages/gc.aspx>

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.6 (անգլերեն),
<https://digitallibrary.un.org/record/1626976?ln=en>

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Ընդհանուր հանձնարարական No.20 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/52d91fd34.html>

Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No 2 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/453883fa19.html>

Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.16, կետ 10 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/453883f922.html>

Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 25 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/453883fc22.html>

Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 31 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/478b26ae2.html>

Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 77 (անգլերեն),
<https://digitallibrary.un.org/record/3884725?ln=en>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 3 (անգլերեն),
<https://www.refworld.org/pdfid/4538838e10.pdf>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 4 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/47a7079a1.html>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 7 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/47a70799d.html>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No.14 (անգլերեն),
<https://www.refworld.org/pdfid/4538838d0.pdf>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No 18 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/4415453b4.html>

Տնտեսական, սոցիալական և մշակութային կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 20 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/4a60961f2.html>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 21 (անգլերեն),
<https://www.refworld.org/docid/4ed35bae2.html>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն No. 25 (անգլերեն),
https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=9&DocTypeID=11

Միջազգային և տարածաշրջանային դատարանների և քվադիդատական մարմինների որոշումներ

Airey v Ireland, ECtHR, Application No. 6289/73, Judgment of 9 October 1979 (*անգլերեն*),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57420>

O’Sullivan McCarthy Mussel Development Ltd v. Ireland, ECtHR, Application no. 44460/16, Judgment of 7 June 2018 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/fre?i=001-183395>

Glass v. the United Kingdom, ECtHR, Application No.61827/00, Judgment of 9 March 2004 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61663>

Tysiąc v. Poland, ECtHR, Application No.5410/03, Judgment of 20 March 2007 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-79812>

C v. Finland, ECtHR, Application No. 18249/02, Judgment of 9 May 2006 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-75337>

Rytchenko v. Russia, ECtHR, Application . No. 22266/04, Judgment of 20 January 2021 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-102894>

Ivinovic v. Croatia, ECtHR, Application No. 13006/13, Judgement of 18 September 2014 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-146393>

Salontaji-Drobnjak v. Serbia, ECtHR, Application No. 36500/05, Judgement of 13 October 2009
(անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-94985>

Nikolyan v Armenia, ECtHR, Application No. 7438/14, Judgement of 3 October 2019 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-196149>

Sunday Times (I) v. UK, ECtHR, Application No. 6538/74, Judgement of 29 April 1979 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57584>

Nolan and K. v. Russia, ECtHR, Application No. 2512/04, Judgement of 12 February 2009
(անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-91302>

SvyatoMykhaylivska Parafiya v. Ukraine, ECtHR, Application No 77703/01, Judgement of 14 June
2007 (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/fre?i=001-81067>

CEDH GC Hirst v. Great Britain, No. 2, ECtHR, Application No. 74025/01 Judgement of 6 October
2005, (անգլերեն),
<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-70442>

Purohit and Moore v. Gambia, ACHPR, Communication 241/2001 (անգլերեն),
<https://www.escri-net.org/caselaw/2006/purohit-and-moore-v-gambia-cited-communication-no-2412001-sixteenth-activity-report>

SERAC and CESR v. Nigeria, ACHPR, Case No. 155/96 (անգլերեն),
https://www.achpr.org/public/Document/file/English/achpr30_155_96_eng.pdf

Jehovah's Witnesses v Argentina, IACHR, Case 2137 (անգլերեն),
<http://www.cidh.org/annualrep/78eng/Argentina.2137.htm>

Jorge Odir Miranda Cortez et al. v. El Salvador, IACHR, Case 12.249 (անգլերեն),
<http://hrlibrary.umn.edu/cases/29-01.html>

International Association Autism Europe v. France, ECSR, Complaint No. 13/2002 (անգլերեն),
<https://www.escri-net.org/caselaw/2006/international-association-autism-europe-v-france-complaint-no-132002#:~:text=Summary%3A,access%20to%20adequate%20educational%20services>

FIDH v. France, ECSR, Complaint No. 14/2003 (անգլերեն),

<https://www.escr-net.org/caselaw/2006/international-federation-human-rights-leagues-fidh-v-france-complaint-no-142003>

Միջազգային և տարածաշրջանային մարմինների այլ փաստաթղթեր

Անվտանգ, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի հետ առնչվող մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի անկախ փորձագետի նախնական զեկույց, A/HRC/22/43 (անգլերեն),

https://www.ohchr.org/Documents/HRBodies/HRCouncil/RegularSession/Session22/A-HRC-22-43_en.pdf

Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 190/2002,

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2002\)023rev2-cor-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2002)023rev2-cor-arm)

Կայուն զարգացման նպատակների առաջարկվող վերջնական ցուցանիշների ցանկ,

http://un.am/up/file/SDGs_Targets_Indicators_ARMENIAN_FINALIZED.pdf

Հազարամյակի զարգացման նպատակներն ու Հայաստանը,

<http://www.un.am/hy/p/mdgs-and-armenia>

Հայաստանի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների առնչությամբ Երեխայի իրավունքների կոմիտեի Ամփոփիչ դիտարկումները, CRC/C/ARM/3-4 (անգլերեն),

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, Վենետիկի հանձնաժողով, Կարծիք No. 757/2014,

[https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm)

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի բացատրական զեկույց (անգլերեն),

<https://rm.coe.int/16800ca437>

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի պնդումը մասնավոր ոլորտի և տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների առնչությամբ պետության պարտավորությունների վերաբերյալ, E/C.12/2011/1 (անգլերեն),

<https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler>



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ԵՎՐԱՍԻԱ
ՆԱՍԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՎԻՍՆԱԴՐԱՄ

Հետազոտությունը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակում, որն իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Հետազոտության բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ինն են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների տեսակետներին: